

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ



ԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

1-2•1997

ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ  
ПАРТНЕРСТВО ВО ИМЯ МИРА  
PARTNERSHIP FOR PEACE



Հարապատմի Հանրապետության թրու նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հանդիպում մեր  
ՆԱՏՕ-ի գլխավոր քարտու զար Քոալիեր Սոլանոյի հետ (Երևան, 1997 թ. փետրվար)

Встреча Президента Республики Армения Л. Тер-Петросяна  
с Генеральным Секретарем НАТО Х. Соланой (Ереван, февраль, 1997)

The meeting of the President of the Republic of Armenia L. Ter-Petrosian  
with the Secretary General of NATO J. Solana (Yerevan, 1997, February)



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՈՍՁՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՂԵՍ

Լույս է տեսնում 1995 թվականից  
տարին շորս անգամ

1-2.1997

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ  
ԿՈՒԵԳԻԱ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վ. Ա. Մուրադյան, Մարշալ Բաղրամյանը մարշալ  
Ժուկովի մասին . . . . . 5

### ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Բաղայան, Արտակարգ իրավիճակներում  
բնակչության և տնտեսության գոյատևման ապահով-  
վումը ազգային անվտանգության համատեքստում . . . 20

### ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հ. Ս. Պալյան, Ա. Գ. Սեյրալյան, Զինապարտույթ-  
յան մասին ՀՀ նոր օրենքի նախագիծը՝ ներկայաց-  
ված պաշտպանության նախարարության կողմից . . . 28

### ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ե. Սարգսյան, Պատերազմների վարման ոչ ա-  
վանդական միջոցները և մեթոդները . . . . . 37

Շ. Ա. Թախալյան, Սպառապինության և ռազմա-  
կան տեխնիկայի շահագործման հիմնական սկզբ-  
բունքները . . . . . 44

### ՀԵՏԱԿՈՒԶՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. Սարգսյան, Զորացին հետախույզությունը,  
նրա կազմակերպումը, տեսակները և վարման եղա-  
նակները . . . . . 61

### ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ն. Ն. Գոլովին, Մարտի հետապոտությունը. մար-  
դու՝ որպես մարտիկի գործունեության և հասկոյթ-  
յունների հետապոտություն . . . . . 68

Ա. Վ. Մուրադյան, Երևանի սպայի տունը ՀՀ  
ԶՈՒ-ում տարվող դաստիարակչական աշխատանքի  
համակարգում . . . . . 83

### ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Վ. Խ. Բաղդասարյան, Համարի բառարան . . . . . 91

Շիրխանյան Վ. Գ.  
(նախագահ)  
Քոթանջյան Հ. Ս.  
(գլխավոր խմբագիր)  
Աբրահամյան Մ. Ա.  
Ավետիսյան Մ. Վ.  
Գևորգյան Է. Ս.  
Գորդիենկո Ի. Վ.  
Խորխորունի Վ. Վ.  
Կարապետյան Լ. Ս.  
Հայրապետյան Վ. Ա.  
Հարությունյան Ա. Թ.  
Հարությունյան Գ. Բ.  
Հարությունյան Մ. Հ.  
Հարությունյան Վ. Վ.  
Մարտիրոսով Լ. Ա.  
Շահումյարյան Ս. Ն.  
Պալյան Հ. Ս.  
Պետրոսյան Ա. Ա.  
Պետրոսյան Գ. Լ.  
Սարգսյան Ա. Գ.  
Սարգսյան Ա. Ե.  
Սարգսյան Մ. Ս.  
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.  
Տեր-Թադևոսով Ա. Ի.

# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
№ 1-2, 1997

Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

*В. Г. Ширхяни* (председатель); *Г. С. Котанджян* (гл. редактор);  
*М. А. Абрамян*; *М. В. Аветисян*; *В. А. Айрапетян*; *А. Т. Арутюнян*; *В. В. Арутюнян*;  
*Г. Б. Арутюнян*; *М. А. Арутюнян*; *Э. С. Геворгян*; *И. В. Гордизенко*; *А. С. Карапетян*;  
*А. А. Мартиросов*; *О. С. Палян*; *А. А. Петросян*; *Г. А. Петросян*; *А. Г. Саркисян*; *А. Е. Саркисян*;  
*М. С. Саркисян*; *Н. Г. Тер-Григорьянц*; *А. И. Тер-Татевосов*; *В. В. Хорхорунц*; *С. Н. Шахсуварян*.

## НАУЧНОЕ КОНСУЛЬТИРОВАНИЕ И РЕДАКТИРОВАНИЕ

генерал-майор *М. А. Абрамян*; подполковник, д. мед. н., профессор *Б. Н. Арутюнян*;  
генерал-лейтенант *В. В. Арутюнян*; лейтенант, к. филос. н., доцент *С. Г. Арутюнян*;  
к. филос. н., доцент *В. Х. Багдасарян*; подполковник, д. ист. н., профессор *Б. П. Балалян*;  
полковник, д. полит. наук, академик Российской Академии военных наук *Г. С. Котанджян*;  
генерал-майор *А. А. Мартиросов*; генерал-майор *С. С. Мартиросян*;  
гвардии подполковник в отставке, д. ист. н., засл. деят. науки РА *В. А. Мурадян*;  
майор, д. тех. н., академик Российской Академии военных наук *А. Е. Саркисян*;  
генерал-лейтенант *Н. Г. Тер-Григорьянц*.

## СОДЕРЖАНИЕ

### ВОЕННАЯ ИСТОРИЯ

*В. А. Мурадян*. Маршал Баграмян о маршале Жукове . . . . . 5 (17)

### ВОЕННАЯ ПОЛИТИКА

*С. С. Бадалян*. Обеспечение выживания населения и экономики в  
чрезвычайных ситуациях в контексте национальной безопасности . . . . . 20 (24)

### ВОЕННОЕ ПРАВО

*О. С. Палян, С. Г. Седракян*. Проект нового Закона РА «О воинской  
обязанности», представленный Министерством Обороны . . . . . 28 (33)

### ВООРУЖЕНИЕ

*А. Е. Саркисян*. Нетрадиционные средства и методы ведения войн . . . . . 37 (54)  
*Ш. А. Тапалян*. Основные принципы эксплуатации вооружения и  
военной техники . . . . . 44 (56)

### РАЗВЕДКА

*А. А. Саркисян*. Войсковая разведка, ее организация, виды и способы  
ведения . . . . . 61 (66)

### ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

*Н. П. Головш*. Исследование боя. Исследование деятельности и  
свойств человека как бойца . . . . . 68  
*А. В. Мурадян*. Ереванский Дом офицеров в системе воспитательной  
работы, проводимой в ВС РА . . . . . 83 (87)

### ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

*В. Х. Багдасарян*. Словарь номера . . . . . 91

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается резюме на русском языке.

# «HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

MILITARY-SCIENTIFIC JOURNAL  
OF THE MINISTRY OF DEFENCE OF THE REPUBLIC OF ARMENIA  
N 1-2, 1997  
Is published 4 times a year

## EDITORIAL BOARD

*V. G. Shirkhanian* (Chairman), *H. S. Kotanjian* (Editor-in-Chief),  
*M. A. Abrahamian*, *M. V. Avelissian*, *E. S. Gevorgian*, *I. V. Gordienko*, *V. A. Hairapetian*,  
*A. T. Haroutunian*, *G. B. Haroutunian*, *M. H. Haroutunian*, *V. V. Haroutunian*, *L. S. Karapetian*,  
*V. V. Khorkhoruny*, *L. A. Martirossov*, *H. S. Palian*; *A. A. Petrossian*, *G. L. Petrossian*, *A. E. Sargssian*,  
*A. G. Sargssian*, *M. S. Sargssian*, *S. N. Shahsouvorian*, *N. G. Ter-Grigoriants*, *A. I. Ter-Tatevossov*.

## SCIENTIFIC CONSULTING AND EDITING

*M. A. Abrahamian*, Major-General; *V. Kh. Baghdassarian*, Ass.-Prof., Ph. D. (Philosophy);  
*B. P. Balayan*, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Hist. Sc.;  
*B. N. Haroutunian*, Lieutenant-Colonel, Prof., Dr. of Medicine; *S. H. Haroutunian*, Lieutenant,  
Ass.-Prof., Ph. D. (Philosophy); *V. V. Haroutunian*, Lieutenant-General;  
*H. S. Kotanjian*, Colonel, Dr. of Polit. Sc., Academician of Russian Military Sciences Academy;  
*S. S. Martirosian*, Major-General; *L. A. Martirossov*, Major-General;  
*V. A. Mouradian*, Guards Lieutenant-Colonel (Ret.), Dr. of Hist. Sc., Honorary Scientist of RA;  
*A. E. Sargssian*, Major, Dr. of Tech. Sc., Academician of Russian Military Sciences Academy;  
*N. G. Ter-Grigoriants*, Lieutenant-General.  
Consultation in English Military Terminology: *A. Armenian*, Ph. D.

## CONTENT

### MILITARY HISTORY

*V. A. Mouradian*. Marshal Baghramian on Marshal Zhukov . . . . . 5 (18)\*

### MILITARY POLITICS

*S. S. Badalian*. Ensuring the survival of the population and the economy in  
emergency situations within the national security context . . . . . 20 (26)

### MILITARY LAW

*H. S. Palian*, *S. G. Sedrakian*. The Draft of the new Law of the Republic of  
Armenia on Military Duty as presented by the Ministry of Defence of the RA . . 28 (35)

### ARMAMENT

*A. E. Sargssian*. Non-traditional means and methods of warfare . . . . . 37 (57)  
*S. A. Tapaltsian*. Principles of the exploitation of armor and military equip-  
ment . . . . . 44 (59)

### INTELLIGENCE SERVICE

*A. A. Sargssian*. The organization, types and ways of conducting front-line  
Reconnaissance. . . . . 61 (67)

### MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION

*N. N. Golovin*. Analysis of combat. The Research of individual's activity  
and his virtues (human characteristics) as a warrior . . . . . 68  
*A. V. Mouradian*. The Yerevan Officers' Club within the system of educa-  
tional work in the Armed Forces of Armenia . . . . . 83 (89)

### MILITARY-SCIENTIFIC TERMINOLOGY

*V. Kh. Baghdassarian*. Volume dictionary . . . . . 91

\* Numbers in brackets mean page of Summary in English.

### **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ մեքենագրված երկու ինտերվալով, մինչև 15 էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինի նրա ռուսերեն ամփոփումը մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

### **К сведению авторов и читателей**

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 15 страниц, напечатанных в два интервала, с приложением резюме на русском языке объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

Рукописи не возвращаются.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

### **For the information of the authors and readers**

The articles should be in Armenian. Please, supply two copies. Articles are to be double spaced and not exceed 15 pages in length. Provide Russian summaries (2 page maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinion expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures, and photos should be of print quality.

Manuscripts are not returned.

Please explain acronyms.

# ՌԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ՄԱՐՇԱԼ ԲԱՂՐԱՄՅԱՆԸ ՄԱՐՇԱԼ ԺՈՒԿՈՎԻ ՄԱՍԻՆ

*Վ. Ա. ՄՈՒՐԱԳՅԱՆ, գլխարկիայի պաշտոնաթող փոխգնդապետ, պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ\**

Յուրաքանչյուր քաղաքակիրթ ժողովուրդ ունի այնպիսի զավակներ, որոնցով հպարտանում են ոչ միայն նրանց հարապատ ժողովուրդը, այլև բազմաթիվ այլ ժողովուրդներ, որոնց սրտում և գործերում նրանք իրենց մասին բարի հիշատակ են թողել: Ահա այսպիսի սիրելի անձնավորություն էր նախկին ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների համար ռուս ազգի մեծ զավակ Գեորգի Կոնստանտինովիչ ժուկովը, որի հարգուրամյակը մեծ շուքով նշվեց վերջերս:

Մարշալ ժուկովը վայելում էր նաև հայ ժողովրդի սերն ու հարգանքը: Այդ վերաբերմունքին նա արժանացել էր ամենից առաջ շնորհիվ ֆաշիստական Գերմանիայի և նրա կամակառարների դև տոնած ծաեր հաղթանակի ապահովման գործում դրսևորած իր անգնահատելի պորավարական արժանիքների համար: Սակայն հայ ժողովրդի համար այս հաղթանակն ուներ ևս մի՝ բախտորոշ նշանակություն, քանի որ կանխեց կրկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայերի 1915 թ. եղեռնի կրկնության հնարավորությունը:

Բայցի այդ, հայերը խորին գոհունակությամբ նշում են, որ Հայրենական մեծ պատերազմի տարիներին ռուս-հայկական բարեկամությունը հարստացավ երկու ժողովուրդների ներկայացուցիչների մարտական հղբայրության նոր փայլուն էջերով: Այդ են վկայում բազմաթիվ վառ օրինակներ, որոնցից մեկն է

Գ. Կ. ժուկովի և Հ. Բ. Բաղրամյանի ջերմ բարեկամությունը:

Այս երկու մեծ պորավարների բարեկամությունն ուներ խոր արմատներ: Պարզվում է, որ Գ. ժուկովը համակրանքով է վերաբերվել հայ պորապետներին դեռևս պատերազմից շատ առաջ՝ Սամարյան 7-րդ հեծելապորային դիվիզիայում իր ծառայության ժամանակից, այդ դիվիզիայի հրամանատարն էր քաղաքացիական պատերազմի լեգենդար հերոս Հ. Գ. Գայը (Հայկ Դմիտրիի Բժշկյանցը): Թե ինչ անջնջելի տույզություն է գործել Գայը գնդի 27-ամյա հրամանատար ժուկովի վրա, վերջինս հանգամանորեն պատմում է իր «Հյշդություններ և խորհրդածություններ» գրքում: Հատկանշական է, որ դիվիզիայի հրամանատար Գայի հետ համատեղ ծառայությանը մարշալը նվիրել է իր գրքի հինգ էջը, նաև պետել է Գայի հիսունալի դիմանկարը: Այդ գրքում կան հետևյալ տողերը. «Ես հաճույքով եմ հիշում համատեղ աշխատանքը դիվիզիայի հրամանատար Հ. Գ. Գայի հետ: Մեր առաջին հանդիպումը տեղի ունեցավ նրա ճամբարային վրանում, ուր խորհրդրդակցության էին հրավիրվել պորամաների հրամանատարներն ու կոմիսարները: Պաշտոնապես ներկայանալուց հետո Հ. Գ. Գայը հրավիրեց նստել իր աշխատանքային սեղանի շուրջը: Ես սեսա պիևվորավարի ձիգ մի գեղեցիկ մարդու: Նրա աչքերը վայլում էին բարյացավամբությամբ, իսկ համաչափ ու հանգիստ ձայնը վկայում էր հավասարակշռված բնավորության և ինքնավստահության մասին: Ես շատ էի լսել Հ. Գ. Գայի հերոսական գործերի մասին և հետաքրքրությամբ ու հուշատակված

\* Հոգվածի հեղինակը գլխավորել է ԽՍՀՄ բառակի հերոս, Խորհրդային Միության մարշալ ժուկովի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Մոսկվայում կապակցեցված միջազգային ռազմագիտական գիտաժողովում Հայաստանի Հանրապետության վեսերանների խորհրդի պատվիրակությունը և հանդես է եկել պերուցումով: *Խմբ.*



Հեծյալ գնդի հրամանատար Գ. Կ. Ժուկով  
(Գ. Կ. Жуков. «Воспоминания и размышления»,  
М., АПН, 1971 զրքից)

նայում էի նրան: Ցանկանում էի թափանցել նրա հոգեկան աշխարհը, հասկանալ նրան որպես մարդու և հրամանատարի»<sup>1</sup>:

Ահա թե ումից որոշեց օրինակ վերցնել գնդի երիտասարդ հրամանատարը: Ինչպես երևում է Ժուկովի հուշերից, Գալը խորհրդային պինված ուժերի այն ակնավոր կառուցողներից էր, որը, նկատելով Ժուկովի գորավարական ունակությունները, հոգ տարավ նրա ուսման և մասնագիտական աճման մասին: Մեկ տարվա համատեղ ծառայությունից հետո, 1924 թ. հուլիսին, Ժուկովը կանչվեց դիվիզիայի հրամանատար Գալի մոտ: Տեղի ունեցավ մի հանգամանալից զրույց, որի վերջում Գալը նրան ասաց. «Ես կարծում եմ, որ դուք պետք է աշխարհ գնաք Լենինգրադի հեծելազորա-

յին բարձրագույն դպրոց: Դա շատ օգտակար կլինի ձեր ապագա գործունեության համար»<sup>2</sup>:

Եվ այսպես՝ Գալը, կանխատեսելով գնդի շնորհալի հրամանատարի ապագան, նրան ուսման ուղարկեց Լենինգրադ: Հատկանշական է նաև հետևյալ մանրամասը: Երբ Ժուկովն այդ դպրոցում միևնույն ուսումնական խմբում առաջին անգամ տեսավ մի այլ համակրելի կովկասցու՝ հեծյալ գնդի նույնպես երիտասարդ հրամանատար Հ. Բ. Բաղրամյանին, ապա նրա մեջ տեսավ դիվիզիայի հրամանատար Գալի բսապոլսյան գծերին նման գծեր և ամբողջ կյանքում ընկերություն արեց նրա հետ: Այս ընկերության մասին մենք հանգամանորեն կխոսենք ստորև, իսկ այժմ կցանկանայինք բերել ևս մի քանի օրինակներ, որոնք վկայում են հայ ժողովրդի և նրա

<sup>1</sup> Գ. Կ. Ժուկով. Հիշողություններ և խորհրդածություններ, հ. 1: Ե., 1978, էջ 110:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 120:



ռազմաճակատային զավակների հետ  
 փորավար ժուկովի շփումների մասին:

Ինչպես հայտնի է, հայ ժողովուրդը  
 ռազմաճակատ ուղարկեց իր կես միլիոնից  
 ավելի որդիներին ու դուստրերին, որոնցից  
 ավելի քան 60-ը գնեցրա՛ն, ծովակալներ,  
 փորատեսակների և Խորհրդային Միության  
 մարշալներ դարձան: Նրանք դիվիզիաների,  
 կորպուսների, բաժնիների և լույսիակ  
 ռազմաճակատի հրամանատարներ էին,  
 ղեկավարում էին բարձր շտաբներ և քաղաք-  
 միսներ<sup>3</sup>: Նրանցից շատերը ծառայողական  
 շփումների մեջ էին մարշալ ժուկովի  
 հետ, պզու՛մ էին նրա օգնությունը, բարոյ-  
 թյունը, բարերար ազդեցությունը: Ահա  
 մի քանի անմոռանալի օրինակներ:

Ինչպես հայտնի է, Լենինգրադի  
 պաշտպանության ամենածանր օրերին  
 Ստալինն այնտեղ ուղարկեց ժուկովին՝  
 դրությունը փրկելու համար: Լենինգրադը  
 ժամանելով՝ նա Լենինգրադյան ռազմաճակատի  
 հրամանատարի պաշտոնում անմիջապես  
 փոխարինեց մարշալ Վորո՛շիլովին և ձեռնարկեց  
 առանձնահատուկ միջոցներ քաղաքի  
 ամուր պաշտպանության ստեղծման ուղղու-  
 յամբ: Նավատորմի գծով նրա մարտական  
 տեղակալն էր հայ ժողովրդի պանծալի  
 զավակ ծովակալ Հ. Ս. Իսակովը: Թե  
 ինչպես էր գործում Իսակովը Լենինգրադի  
 համար այդ վճռորոշ օրերին և ինչ տպավորու-  
 թյուն էր գործել նա ժուկովի վրա, մարշալը  
 գրել է իր «Հիշողություններ և խորհրդածու-  
 թյուններ» գրքում: «Բալթիական նավատորմի  
 ռազմա-ծովային ուժերի գծով իմ տեղակալն  
 էր ծովակալ Իվան Ստեպանովիչ Իսակովը:  
 Խորապես համոզված էմ, որ Ի. Ս. Իսակովը  
 Խորհրդային Միության ռազմա-ծովային  
 նավատորմի ամենաուժեղ ու տաղանդավոր  
 փորապետներից մեկն էր: Նրա ղեկավարու-  
 յամբ բալթիական նավատորմի հրամանատար-  
 թյունն ու հրետանավորները կարճ ժամկետում

կազմեցին ծովային հետևակի 6 առանձին  
 բրիգադ՝ դրանք հանձնելով Լենինգրադյան  
 ռազմաճակատի ուժեղացման համար:  
 Ռազմաճակատի հրետանու պետ գեներալ  
 Վ. Պ. Սվիրիդովի հետ միասին նա արագ  
 կազմակերպեց նավատորմի և ռազմաճակատի  
 համագործակցությունը՝ ստեղծելով հեռահար  
 հուժկու հակամարտկոչային խումբ<sup>3</sup>: Ահա  
 թե ինչ գնահատական է տվել Լենինգրադի  
 պաշտպանության օրերին Իսակովի մարտական  
 գործունեությանը այնպիսի մի շատ խիստ,  
 կոշտ պահանջկոտ, բայց միշտ օբյեկտիվ  
 փորավար, ինչպիսին էր ժուկովը:

Մոսկվայի պաշտպանության վճռական  
 օրերին, երբ նրա պաշտպանության համար  
 Ռուսաստանի խորքից բերվեցին նոր, թարմ  
 ուժեր, երկու հրաձգային դիվիզիաների  
 հրամանատարներ էին հայ ժողովրդի զավակները՝  
 գնդապետներ Մարգիս Սողոմոնի Մարտիրոսյանը և  
 Հայկ Հովհաննեսի Մարտիրոսյանը: Թե  
 ինչպես էին մարտնչում այդ դիվիզիաները  
 հիտլերական գեներալ Գուդերիանի տանկային  
 բանակի դեմ, որքանով իրենց արդարապիսի  
 դրանց հրամանատարները, կարելի է դատել  
 այն փաստից, որ շատ շուտով Արևմտյան ռազմաճակատի  
 հրամանատար Գ. Կ. ժուկովի ներկայացմամբ  
 այս երկու գնդապետներին շնորհվեց  
 գեներալի կոչում և հանձնվեցին մարտական  
 բարձր պարգևներ:

Ժուկովը հնարավորություն ունեցավ  
 ծանոթանալու նաև մի շարք հրաձգային  
 դիվիզիաների մարտական գործերին, այդ  
 թվում և այն ազգային դիվիզիաների, որոնք  
 ռազմաճակատ էին մեկնում Հայաստանից:  
 Դա տեղի ունեցավ նաև Ստալինգրադում, որի պաշտպանության  
 օրերին հնագույն հայկական 76-րդ լեռնա-  
 հրաձգային դիվիզիան վերակազմվեց  
 51-րդ գվարդիական դիվիզիայի, իսկ  
 136-րդ համապորային հրաձգային  
 դիվիզիան, որը համալրվում և լրակազմվում  
 էր Լենինականում և որի

<sup>3</sup> Այս մասին տես նաև Կ. Ա. Հարությունյան, Հայ ժողովրդի ավանդը ֆաշիզմի դեմ տարած հաղթանակում: «ՀԲ», 1995, հվ. 2-3: Խմբ.:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 504:

զինվորների 60 %-ը հայեր էին, վերակազմավորվեց 15-րդ գվարդիական դիվիզիայի:

Երեք հայկական ազգային դիվիզիաներ մասնակցեցին Կովկասի համար մղվող մարտերին: Գրանցից մեկը՝ 408-րդը, հերոսական անձնագրիությամբ պաշտպանեց Տուապսեի մատույցները՝ արգելակելով թշնամու մուտքը քաղաք: Մյուսը՝ գեներալ Սաֆարյանի 89-րդ դիվիզիան. Կովկասի համար մարտերում իր մարտական գործողությունների համար արժանացավ «Թամանյան» բարձր կոչմանը, հասավ մինչև Բեռլին և 1-ին Բելոռուսական ռազմաձևակառուցի փորքերի կազմում, որոնց հրամանատարն էր դեպ Գ. Վ. Ժուկովն էր, մասնակցեց Բեռլինի գրոհին և նրա գլխավանդը: Ինչ վերաբերում է մի այլ հայկական հրաձգային դիվիզիային՝ 409-րդին, ապա այն Կովկասի նախալեռներից մարտերով անցավ ողջ Ուկրաինան և, արժանանալով «Կիտովոգրայյան» բարձր կոչմանը, պատերազմն ավարտեց Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում:

Հայաստանի վեներանական կազմակերպությունները լայնորեն օգտագործում են այս օրինակները երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով սարվող գրավոր և բանավոր քարոզչության ժամանակ: Նման աշխատանքն իր անգնահատելի բարեբար պտուղներն է տալիս ռուս և հայ ժողովուրդների միջև դարավոր բարեկամության ամրապնդման գործում:

Ռուս-հայկական հարաբերություններում իր ուրույն տեղն ունի նաև այն կոչարական ազնիվ ու անկեղծ անձնական բարեկամությունը, որը կապում էր Գեորգի Կոնստանտինովիչ Ժուկովին և Հովհաննես Բրիտափորի Բաղրամյանին:

Ինձ՝ որպես պատերազմի պատմագրի և անմիջական մասնակցի, միշտ մտատանջում էր այն հարցը, թե ինչն էր Ժուկովի շնորհապրկման պատճառը: Եվ քանի որ ես շատ մոտիկից էի ճանաչում Հ. Բ. Բաղրամյանին, ապա Մոսկվայում և

Երևանում կայացած մեր հանդիպումների ժամանակ հաճախ նրան բազմաթիվ հարցեր էի տալիս Ժուկովի մասին, մասնավորապես այն հարցը, թե ինչու Ժուկովի շնորհապրկումը, որն սկսվել էր Ստալինի օրոք, շարունակվեց նաև Խրուշչովի և Բրեժնևի ժամանակ:

Ես համարձակվում էի Բաղրամյանին տալ նման հարցեր, ըստ երևույթին, այն պատճառով, որ, նախ, դա արվում էր Ստալինի անձի պաշտամունքը դատարարած ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո և, երկրորդ, որովհետև ես, որպես պատերազմի պատմագիր, սուղծագործական բարեկամություն ունեի մարշալ Բաղրամյանի հետ: Նա նախաբան էր գրել իմ «Հավատարմություն պարտքին» մենագրությանը, մենք բազմիցս հանդիպել էինք, երբ նա աշխատում էր «Իմ հուշերը» հիմնարար աշխատության վրա: Եվ երբ ձեռագիրը «Հայաստան» հրատարակչությունն անձնելվեց, ես դարձա Երևանում 1979 թ. լույս տեսած այդ աշխատության պաշտոնական գրախոսը:

Բաղրամյանը միշտ մեծ ջերմությամբ էր խոսում Ժուկովի մասին: Անդրադատնալով Ժուկովի շնորհապրկմանը՝ Բաղրամյանը նշում էր, որ դրա հիմնական պատճառներից մեկը Ժուկովի սկզբունքայնությունն էր, նրա շիտակությունը, իր տեսակետը պնդելու խիստությունը: Դա չափազանց գրգռում էր Ստալինին: Ժուկովի հռչակը, նրա բարձր հեղինակությունը անհանգստություն էին պատճառում նաև Ստալինի հետևորդներին՝ ինչպես Խրուշչովին, այնպես էլ Բրեժնևին: Այդ ձևով էլ առաջացավ շնորհապրկումների մի ամբողջ շղթա, ասում էր Հ. Բ. Բաղրամյանը:

Պետք է արժանին հատուկել հայտնի ռուս ռազմական գրող, Խորհրդային Միության հերոս Վլադիմիր Կարպովին, որը մեծ քանակությամբ արխիվային և այլ վստահելի նյութեր է հավաքել այն բանի վերաբերյալ, թե երբ է սկսվել Ժուկովի շնորհապրկումը և ինչպես է այն շարունակվել Խրուշչովի և Բրեժնևի օրոք: Նման հետազոտական աշխատանք



Ժուկովը և Բաղրամյանն իրենց կանանց հետ ամստանոցում  
(И. Х. Баграмян. Фотоальбом. Е., «Айастан», 1987 գրքիս)

քի արգասիքը եղավ այն սարսափելի կամայականության, կեղծիքի և ապօրինության նրա կողմից ստեղծված լայն էպիկական պատկերը, որոնց պոռ դարձավ արդիականության մեծ պորավարը: Կարպովի գրական խճանկարը, որը կըրում է «Մարշալ Ժուկով. շնորհագրություն» վերնագիրը<sup>4</sup>, համուզիչ կերպով ապացույցում է, որ այդ հետապնդումն սկսվել է բարձր մակարդակներում: Վերևից եկող հրամաններով Ժուկովի շուրջ ստեղծվում էր բարդ ինտրիգների մթնոլորտ: Ինչպես նշում է գրողը, մարշալի հետպատերազմյան կյանքի 28 տարիներից 25-ը նա եղել է շնորհագրված, և այդ տարիներին մահն ավելի հաճախ էր սպառնում նրան, քան ռազմաճակատում: Եվ առավել ցավալին այն է, որ Ժուկովի այս հետապնդման կազմակերպման գործում ջանք չէին խնայում նաև որոշ բարձրաստիճան պորապետներ:

Սակայն Ժուկովի շնորհագրումը ամենևին էլ նրանից չվանեց նրա անկեղծ

բարեկամներին: Նրանք հավատում էին պորավարի ավելությանը, հայրենիքին նվիրվածությանը, մարդասիրական բարձր հատկություններին, նրա բնավորության մեջ պաշտոնամոլության բացակայությանը: Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բրիտտափորի Բաղրամյանը Ժուկովի ու նրա ընտանիքի այդպիսի մտերիմ բարեկամներից մեկն էր:

Ինչպես երևում է Կարպովի հիշատակված գրքից և բազմաթիվ այլ գրական աղբյուրներից, Ժուկովի շնորհագրման բոլոր տարիներին Բաղրամյանը մշտապես եղել է նրա կողքին, բարոյապես սատար եղել նրան: Գիտական բանավեճերում, երբ փորձում էին սովեր գցել պատերազմի առանձին փուլերի վերաբերյալ Ժուկովի տեսակետների վրա, Բաղրամյանը միշտ հաստատակամորեն պնդում էր Ժուկովի գնահատականների արդարացիությունը: Երբ Ժուկովը հիվանդացավ և գամվեց անկողնուն, Բաղրամյանը հաճախակի այցելում էր նրան: Բաղրամյանը Ժուկովի համար այնքան հարապատ մարդ էր, որ երբ մահացավ վերջինիս սի-

<sup>4</sup> В. Карпов. Маршал Жуков. Опала. Литературная мозаика. М., 1994.

րելի կինը՝ բժշկական ծառայության փոխգնդապետ Գալինա Ալեքսանդրովնան, իսկ Ժուկովը գամված էր անկողնուն, Բաղրամյանն ու բանակի գեներալ Ի. Ի. Ֆեդյունիսկին օգնեցին նրան կազմակերպելու կնոջ թաղումը:

Ժուկովի դուստրը՝ Մարգարիտա Գեորգինա Ժուկովան, «Վեչերնյայա Մոսկվա» թերթի թղթակից Իյա Օկունևի այն հարցին, թե ովքեր էին մտերիմ Ժուկովի հետ նրա կյանքի վերջին տարիներին, պատասխանել է. «Հայրս բարեկամություն էր անում նրանց հետ, որոնց համարում էր իր վիճակիցները: Իր ողջ կյանքը նա անցկացրել է բանակում՝ ավելի քան 50 տարի, և, բնականաբար, նրան առանձնապես հարազատ էին վիճվորական մարդիկ: Ամենից շատ նա կողմնորոշված էր դեպի այն մարդկանց ընկերությունը, որոնց հետ ապրել էր կյանքի դաժան փորձություններ: Այդպիսիք էին Ռոկոսովսկին, Վասիլևսկին, բայց ամենից առաջ իհարկե Բաղրամյանը: Հովհաննես Բրիստափորովիչը նրա մտերիմ բարեկամն էր: Հայրս նրան սիրում էր նրա ազնիվ մարդկային հատկությունների, նուրբ հումորի, մեծ խելքի և ողջամտության համար»<sup>5</sup>:

Նրանց միջև եղած այս ջերմ բարեկամությունը իր բարերար դերն է խաղացել ինչպես պատերազմի տարիներին, այնպես էլ դրանից հետո, երբ նրանք երկուսն էլ, մինչև իրենց կյանքի վերջը, զբաղվում էին անցած պատերազմի պատմության մշակմամբ:

Հ. Բ. Բաղրամյանի «Մեծ ժողովրդի պավակները» գրքում կան այսպիսի տողեր. «Ինձ համար Գեորգի Կոնստանտինովիչը ոչ միայն նշանավոր ռազմավար էր, պանծալի հերոս ու պորավար. նա իմ ընկերն ու հասակակիցն էր, դեռ ավելին՝ եղբայրակիցը, որը հսկայական դեր խաղաց իմ վիճվորական ճակատագրում: Գ. Կ. Ժուկովի մեջ ես տեսնում էի ռուս մեծ ժողովրդի հոգու լայնության և շռայլության կենդանի մարմնացումը»<sup>6</sup>:

<sup>5</sup> Штл «Вечерняя Москва», 8 мая 1993 г.

<sup>6</sup> И. Х. Баграмян. Великого народа сыновья. М., Воениздат, 1984, с. 10.

Խոսելով այդ բարեկամության ակունքների մասին՝ Բաղրամյանն իր այդ ակնարկում գրում է, որ իրենց կենսագրություններում շատ ընդհանուր բաներ կան: Երկուսն էլ բանակի շարքերն են մտել 1915 թ., առաջին համաշխարհային պատերազմի ռազմաճակատներում եղել են հեծելազորային դասակների ու հեծելաժաշտերի հրամանատարներ, իսկ քաղաքացիական պատերազմից հետո՝ հեծյալ գնդերի հրամանատարներ: 1924—1925 թթ. նրանք սովորել են Լենինգրադի հեծելազորային բարձրագույն դպրոցի նույն ուսումնական խմբում: Այն ժամանակ էլ հենց սկիզբ է առել նրանց եղբայրական բարեկամությունը, որը նրանք պատվով տարան ողջ Հայրենական մեծ պատերազմով, պատանեցին մինչև կյանքի վերջը:

Հայրենական մեծ պատերազմի նախօրեին բանակի գեներալ Գ. Կ. Ժուկովը Կիևի հատուկ վիճվորական օկրուգի հրամանատարն էր, իսկ գնդապետ Հ. Բ. Բաղրամյանը Գլխավոր շտաբի ակադեմիայի ավագ դասախոս էր: Հովհաննես Բաղրամյանն իր հուշերում նշում է, որ Ալյադեմիայում չորս տարի մնալուց հետո ինքն ամբողջ հոգով ձգտում էր դեպի Վորքեր՝ ցանկապես պաշտոնի: Որոշեց խորհուրդ հարցնել Ժուկովից: Նրա նամակն ուներ պեկուցագրի ոճ. «Բանակային ողջ ծառայությունս անցել է պորքերում, ջերմ փափագ ունեմ շարք վերադառնալու... Համաձայն եմ ցանկապես պաշտոնի»<sup>7</sup>:

Արձագանքը բարյապակամ էր: Ժուկովի միջնորդությամբ գնդապետ Բաղրամյանն ուղարկվեց Կիևի հատուկ վիճվորական օկրուգի 12-րդ բանակի որպես բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ: Նրան հրահանված էր անմիջապես Կիև մեկնել:

Հին բարեկամների հանդիպումը շատ ջերմ էր: Երկար պրույցից ու հիշողություններից հետո, երբ Բաղրամյանը պատրաստվում էր նոր ծառայության վայր մեկնելու, Ժուկովը ժպտալով ա-

<sup>7</sup> И. Х. Баграмян. Мои воспоминания. М., 1987, с. 166.

ասց, որ հարկ կլինի առայժմ մնալ Կիև-վում. կան կարևոր գործեր: Մոսկվայում պետք է կայանա պաշտպանության ժողկոմատի ղեկավար կազմի պատասխանատու խորհրդակցություն, որին կմասնակցի նաև Ստալինն ինքը: Շարունակելով գրույցը՝ Ժուկովն ասաց. «Ինչ հանձնարարված է զենկուցում հիմնական հարցի վերաբերյալ՝ «Ժամանակակից հարձակողական օպերայիայի բնույթի մասին»: Դու, ուրբան գիտեմ, չորս տարի անց ես կայրել Գլխավոր շտաբի ակադեմիայում՝ և՛ սովորել, և՛ դասավանդել ես այնտեղ... Կռահե՛լ ես վերջնել ակադեմիական մշակումները»: «Վերջրե՛լ եմ, ընկեր հրամանատար», ուրախացած պատասխանեց Բաղրամյանը: «Դե՛ լավ է, — աշխուժացավ Ժուկովը: — Կօզնես ինչ պատրաստելու զենկուցումը: Միասին կխորհենք: Կգաս առանց քաշվելու... Բեզ օգնական վերջրու օկրուգի շտաբի օպերատիվ բաժնի ցանկացած հրամանատարների և վաղվանից գործի անցիր»<sup>8</sup>:

Այդ մասին հիշատակել է նաև Գ. Կ. Ժուկովն իր «Հիշողություններ և խորհրդածություններ» գրքում: Այնտեղ մասնավորապես ասված է. «Նկատի ունենալով թեմայի բարդությունը և խորհրդակցության բարձր մակարդակը՝ ես ստիպված եղա մի ամբողջ ամիս օրական շատ ժամեր աշխատել զենկուցման վրա: Այդ գործում ինչ մեծ օգնություն ցույց տվեց օկրուգի շտաբի օպերատիվ բաժնի պետ Իվան Բրիատափորովիչ Բաղրամյանը»<sup>9</sup>: Եվ նշում է. «Իվան Բաղրամյանին ես ճանաչում էի որպես շատ լյջախոհ, հանգիստ, աշխատասեր, օպերատիվ, գրագետ աշխատողի»<sup>10</sup>:

12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետի պաշտոնում Բաղրամյանն աշխատեց կարճ ժամանակ՝ մեկ-երկու ամիս: 1940 թ. դեկտեմբերին ստացվեց պաշտպանության ժողկոմի հրամանը գնդապետ Հ. Բ. Բաղրամյանին Կիևի հատուկ պինդորական օկրուգի օպերա-

տիվ բաժնի պետ — շտաբի պետի տեղակալ նշանակելու մասին:

Այստեղ նախապատրաստվում էր հրամանատարական-քաղաքական ղեկավար կազմի օկրուգային հավաքը: Ջերմագին շնորհավորելով Բաղրամյանին նոր նշանակումը՝ Ժուկովը խնդրեց նրան ղեկավարել հավաքի և հատկապես հիմնական զենկուցման նախապատրաստական աշխատանքները: Իսկ հիմնական զենկուցումը հանձնարարված էր իրեն իսկ Ժուկովին, որն արդեն Գլխավոր շտաբի պետն էր:

Գ. Կ. Ժուկովի զենկուցումը չափապանց հետաքրքրեց բոլոր ներկաներին և նրանց խոր մտորումների առիթ տվեց: Դա մի շատ նուրբ հանգամանքի հետևանք էր: Ինչպես հայտնի է, ԽՍՀՄ և Գերմանիայի միջև շարձակման մասին 1939 թ. պայմանագրի կնքումից հետո խորհրդային մամուլից և բանավոր ազիտայիայից դուրս մղվեցին այնպիսի բառեր, ինչպիսիք էին «Ֆաշիզմ»-ը, «Ֆաշիստական ագրեսորներ»-ը և հիտլերյան Գերմանիայի վերաբերող այլ արտահայտություններ: Իսկ Ժուկովն իր զենկուցման մեջ տալիս էր ֆաշիստական բանակի վերլուծությունը, բացահայտում էր Եվրոպայում տարած նրա դյուրին հաղթանակների պատճառները և կոչ էր անում ավելի լավ նախապատրաստվելու հիտլերյան Գերմանիայի հետ բախմանը: Նա նշում էր, որ ֆաշիստների ռազմական հաջողություններն ապշեցրին ողջ աշխարհին, բայց չի կարելի մոռանալ, որ դրանք նրանց տրվում էին էժան գնով, գերմանական հորդաները չէին հանդիպում պատշաճ դիմադրության: Եվ այնուամենայնիվ հարկ եղավ լուրջ եզրակացություններ անել: Շարունակելով նույն ոգով և երկյուղ չըկրելով գրաքննչական դիտողություններից՝ Ժուկովն ասում էր, որ «գերմանական բանակը լավ է վիճված, ձեռք է բերել հարուստ մարտական փորձ, նման թշնամու դեմ կռվելը հեշտ գործ չի լինի»: Եվ հաշվի առնելով այս ամենը՝ «հարկ է ակտիվորեն և նպատակամղված կերպով բարձրացնել վորքերի

<sup>8</sup> Шу И. X. Баграмян. Великого народа сыновья, сс. 15—16.

<sup>9</sup> Գ. Կ. Ժուկով, նշ. աշխ., հ. 1, էջ 258:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 244:

պատրաստականությունը: Պատերազմին պետք է նախապատրաստվել ամենայն լրջությամբ<sup>11</sup>:

Ահա այսպես, չնայած հիտլերյան Գերմանիայի նկատմամբ վարվող պաշտոնական ուղեգծին, դեռևս 1941 թ. հունվարին ժուկովը քայահայտորեն ասում էր, որ Գերմանիայի դեմ պատերազմին պետք է պատրաստվել ամենայն լրջությամբ:

Մի անգամ, ժուկովի մասին մեր պրույսներից մեկում, Հովհաննես Բաղրամյանը նշեց, որ ժուկովի ուղղամտությունը, իր կարծիքը կրքոտ պնդելու նրա հատկությունը շատ էին զրգռում Ստալինին, նրա մեջ հակակրակնք առաջացնում ժուկովի նկատմամբ: Բաղրամյանն ընդգծում էր, որ դեռ պատերազմից առաջ Ստալինը համոզվել էր, որ ժուկովը աճող տաղանդավոր պորապետ է, և ոչ առանց Ստալինի մասնակցության էր ժուկովը նշանակվել նախ Կիևի հատուկ զինվորական օլյուզգի հրամանատար, այնուհետև՝ Գլխավոր շտաբի պետ: Հայրենական պատերազմի տարիներին Ստալինը մեծ հմտությամբ օգտագործում էր ժուկովի պորավարական ունակությունները՝ նրան ուղարկելով ռազմաճակատի ամենապատասխանատու ուղղություններ: Եվ այնպես ստացվեց, որ ժուկովը, փայտուն կերպով կատարելով Ստալինի առաջադրանքները, ավելի ու ավելի էր կատարելագործում իր պորավարական վարպետությունը, ձեռք բերում ռազմավարական նշանակություն ունեցող մարտական օպերացիաների իրականացման նորանոր փորձ: Այդպիսով Ստալինը կամա թե ակամա ակտիվ կերպով նպաստում էր ժուկովի պորավարական տաղանդի յրթևեկմանն ու վարձարկմանը:

Իսկ Ստալինը, դառնալով Գերագույն գլխավոր հրամանատար, արդեն ամեն օր շփվում էր այնպիսի կարկառուն պորապետների հետ, ինչպիսիք էին Շապոշնիկովը, ժուկովը, Վասիլևսկին և ուրիշներ, և ստիպված էր կատարելա-

գործելու իր ռազմական գիտելիքները:

Ամփոփելով այս միտքը՝ Բաղրամյանն արտահայտեց այն գաղափարը, որ ժուկովի անձը մի յուրահատուկ արագացուցիչ դարձավ Ստալինի ռազմական գիտելիքների կատարելագործման հարցում, որոնք, սուբյեկտիվ թաղաքական և պետական գործչի նրա հարուստ կենսափորձի հետ, Հայրենական պատերազմի տարիներին ապահովեցին խորհրդային զինված ուժերի ղեկավարման բարձր մակարդակը: Բայց իր իսկ ժուկովի համար ամեն ինչ այնքան հեշտ ու սահուն չէր գնում, ինչպես թվում էր արտաքինից: Ստալինի հետ բախումները հաճախակի ծագում էին այս կամ այն իրադրության, առանձին իրադարձությունների գնահատման հարցում նրանց տարակարծության հետևանքով: Ոչինչ չլսավածելով՝ ժուկովը պնդում էր իր կարծիքը, իսկ Ստալինը, իրեն բնորոշ հիվանդագին կասկածամտությամբ, ժուկովի հակաճառությունները գիտում էր որպես իր՝ Գերագույն գլխավոր հրամանատարի հեղինակությունը սասանելու փորձ: Եվ ահա նրա հոգեկան և հուզական ցուցանակներն սկզբնական ավելի ու ավելի լարվել: Հոգու խորքում Ստալինը գիտակցում էր, որ ժուկովն իրեն մրցակից չէ, բայց նախանձը հանգիստ չէր տալիս նրան: Եվ ահա նրանց միջև մի լուրջ գոտություն բռնկեց: Դա տեղի ունեցավ 1941 թ. հունիսի 29-ին Կիևի շրջանում ստեղծված իրավիճակի տարբեր գնահատման պատճառով:

Գլխավոր շտաբի պետը համարում էր, որ քանի դեռ ուշ չէ, պետք է կինյան պորախումբը դուրս բերել Գնեպրի արևելյան ափ, հակառակ դեպքում կարող է աղետ տեղի ունենալ: Ստալինը խիստ առարկում էր: Եվ երբ ժուկովը կտրուկ կերպով հայտարարեց, որ Կիևը պետք է թողնել, և, շարունակելով վեկույցը, կարծիք հայտնեց, որ արևմտյան ուղղության վրա անհապաղ պետք է կազմակերպել հակահարված՝ հակառակորդի ելնյան ելուստը ոչնչացնելու նպատակով, Ստալինը ջղագրգռված ընդհա-

<sup>11</sup> См. В. Х. Баграмян. Великого народа сыновья, сс. 21—22.

տեց նրան. «Այդ ի՞նչ հակահարվածների մասին է խոսքը, դա ի՞նչ անհեթեթություն է»: Ժուկովը չհամբերեց և վրա բերեց. «Եթե դուք գտնում եք, որ ես՝ որպես Գլխավոր շտաբի պետ, ընդունակ եմ միայն անհեթեթություններ դուրս տալու, ապա այդ դեպքում ես այստեղ անեմ չիք չունեմ: Ես խնդրում եմ ինձ ազատել Գլխավոր շտաբի պետի պարտականություններից և ուղարկել ռազմաճակատ: Այնտեղ ես, հավանաբար, ավելի շատ օգուտ կբերեմ Հայրենիքին»<sup>12</sup>:

Եվ պատիժն իրեն սպասել չուզեց, ընդ որում՝ երկրի համար ծանր իրավիճակում, երբ պորքերը բոլոր ռազմաճակատներում դեռ նահանջում էին: Բայց Ստալինը գերադասեց հանգստացնել իր գոռոպամտությունն ու կասկածամտությունը:

Կարպովն իր վերը հիշատակված գրքում, խոսելով Ժուկովի նկատմամբ Ստալինի վերաբերմունքի հոգեբանական գործոնների մասին, այսպես է գրում. «Նախանձը շատ ուժեղ պգայմունք է: Այն կարող է ոչ միայն մարդուն դրդել ամոթալի քայլերի, այլև, ամբանալով և վարգանալով, անբարյացակամություն հարույցել»: Գրողը նշում է, որ նախանձը Ստալինի հոգում ծնում էր նկրտումների մի ամբողջ համախումբ, այն է՝ նսեմացնել իր տաղանդավոր զինակիցներին, տյորել նրանց իր իշխանությամբ, ֆիզիկապես ոչնչացնել անհնազանդներին: Ստալինն ինքն էր ասում, որ «գերագույն հաճույք է կոտրել մրցակցին և վայելել այդ հաղթանակի հաճույքը»<sup>13</sup>:

Ժուկովի շնորհազրկման ողջ պատմությունը այդ խճանկարի հեղինակի եզրակացությունների վառ հաստատումն է:

Բաղրամյանի և Ժուկովի ռազմաճակատային հանդիպումներն ակտիվ կերպով վերսկսվեցին, երբ 1942 թ. ամռանը Բաղրամյանը Հարավ-արևմտյան ռազմաճակատից տեղափոխվեց Արևմտյան ռազմաճակատ, որի հրամանատարն էր Գ. Կ. Ժուկովը: Գեներալ-լեյտենանտ Բաղրամյանը նշանակվեց այդ

ռազմաճակատում գործող 61-րդ բանակի հրամանատարի տեղակալ: Բայց կես ամիս անց Ժուկովը հեռախոսով հայտնեց նրան, որ 16-րդ բանակի հրամանատար Ռոկոսովսկին նշանակված է Բըրյանսկի ռազմաճակատի հրամանատար, իսկ Բաղրամյանին իրեն Գլխավոր հրամանատարությունը նշանակել է 16-րդ բանակի հրամանատար, և պետք է անհապաղ մեկնել այնտեղ:

Շուտով Բաղրամյանը 16-րդ բանակի հրամանատարի պարտականություններն ստանձնելուց հետո գեկույցով ներկայացավ Ժուկովին և, բարեկամի ուշադրությունից պզգայված, նրան հայտնեց իր երախտագիտությունն այդ նշանակման ուղղությամբ գործադրած ջանքերի համար: Ժուկովը, ինչպես սովորաբար անում էր նման դեպքերում, ասաց. «Իե՛ դա արվում է ի շահ գործի: Կոստյա Ռոկոսովսկու պավակը պետք էր հանձնել վստահելի ձեռք: Բայց այս գործի նախաձեռնողը ես չեմ, այլ Գերագույնը, նրան էլ հայտնի շնորհակալությունը»<sup>14</sup>:

Ժուկովի այս արտահայտության մեջ դժվար չէ տեսնել նրա բարձր կուլտուրան, բարեկամի նկատմամբ ունեցած անկեղծ և անշահախնդիր վերաբերմունքը:

Ինչպես գրում է Բաղրամյանը, այդ օրը Ժուկովը վստահեց Բաղրամյանին իր խոհերը երկրի հարավում հակառակորդի շարունակվող հարձակման մասին: «Նա ասաց, որ մենք շատ ուշ իմաստավորեցինք հարավ-արևմտյան ուղղությունում մեր պորքերի համար ստեղծված հսկայական վտանգը, ինչի հետևանքով հնարավոր չեղավ այնտեղ ժամանակին տեղափոխել ռեզերվներ, որոնք անհրաժեշտ էին թշնամու հպոր հարվածը կասեցնելու համար»<sup>15</sup>: Ընդգծելով, որ այս բացթողումները հանգեցրին ծանր հետևանքների, Ժուկովը մինևույն ժամանակ նշեց, որ այնուամենայնիվ ուրախալի է, որ «այսօր Գլխավոր հրամանատարությունը հաջողվեց Ստալինգրադի

<sup>14</sup> И. Х. Баграмян. Великого народа сыновья, с. 27.

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Գ. Կ. Ժուկով, նշ. աշխ., էջ 452:

<sup>13</sup> Տե՛ս Վ. Կարպով, նշ. աշխ., էջ 110:



Ձախից այժ՝ գեներալ Վ. Կազակով, գեներալ Գ. Օրյոլ, 1-ին Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար մարշալ Գ. ժուկով և ռազմական խորհրդի անդամ գեներալ Կ. Տելեգին. 1945 թ. ապրիլի 21

(Г. К. Жуков. «Воспоминания и размышления», М., АПН, 1971 գրքից)

շրջան տեղափոխել խոշոր ռազմավարական ռեզերվներ, որոնք կարող են կանգնեցնել ուժեղ թափով դեպի Վոլգա շարժվող գերմանաֆաշիստական զորքերի առաջխաղացումը»<sup>16</sup>: Եվ Բաղրամյանը նշում է, որ ժուկովը հաստատակամորեն հայտարարեց. «Թշնամին ծանր վիճակի մեջ կընկնի Ստալինգրադի մոտ, ես վստահ եմ դրանում, և այդ վստահությունն ինձ ներշնչում է Լենինգրադի և Մոսկվայի համար պայքարի փորձը: Մեր ժողովուրդը, մեր զինվորը կարող են սարեր տեղաշարժել: Այդ մեզ՝ ղեկավարներին է, որ երբեմն չեն հերիքում իրադրությունը կանխատեսելու փորձն ու հմտությունը»<sup>17</sup>:

Բաղրամյանի հուշերում մեծ տեղ է հատկացված Կուրսկի ճակատամարտին և դրանում ժուկովի դերին:

<sup>16</sup> Նույն տեղում:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 28:

«1943 թ. ամռանը,—գրում է Հ. Բ. Բաղրամյանը,—ինձ բախտ վիճակվեց ամենաակտիվ կերպով մասնակցելու Օրյոլի մոտ հակահարձակման ժամանակ Արևմտյան ռազմաճակատի գործողությունների պլանի մշակման և իրականացման գործին: Հսկայական ներդրում ունեցավ Գեորգի Կոնստանտինովիչը 1943 թ. ամառային մարտաբաժնի պլանավորման գործում, Կուրսկի ճակատամարտում, որը պսակվեց վեհաշուք հաղթանակով:

Գեռևս 1943 թ. գարնանը, ժամանելով Կուրսկի ելուստի շրջան, մանրակրկիտ կերպով ուսումնասիրելով և այստեղ տեղաբաշխված ռազմաճակատների հրամանատարության հետ խորը վերլուծելով խորհրդային զորքերի վիճակն ու տվյալները հակառակորդի մասին, ժուկովը ապրիլի 8-ին Գլխավոր հրամանատարությանը հանձնեց իր վեկույցը, ո-



րում հանգել էր ճիշտ եզրակացությունների ֆաշիստական հրամանատարության մտադրությունների մասին և կոնկրետ առաջարկություններ էր անում 1943 թ. ամռանը խորհրդային կողմի գործողությունների պլանի վերաբերյալ»<sup>18</sup>:

Ապրիլի 12-ին Գլխավոր հրամանատարության ռազմակազմում տեղի ունեցավ խորհրդակցություն, որում հավանություն տրվեց Ժուկովի եզրահանգումներին: Պատմությունը լիովին հաստատեց դրանց ճշմարտացիությունը:

Կուրսկի պատմական ճակատամարտի ընթացքում Բաղրամյանը բազմիցս հանդիպել է Ժուկովին: Երբ Բաղրամյանի բանակը վերափոխվեց՝ դառնալով 11-րդ գվարդիական բանակ, Ժուկովն այցելեց Բաղրամյանին՝ նրան անձամբ շնորհավորելու համար: Հենց այդ ժամանակ էլ Բաղրամյանը ջերմորեն շնորհավորեց Ժուկովին՝ նրան ԽՍՀՄ բարձրագույն պինվորական կոչում՝ Խորհրդային Միության մարշալի կոչում շնորհվելու առթիվ: Ժուկովին ուրախացրել էր այն հանգամանքը, որ Ստալինն անձամբ ԲՀ հեռախոսով պանգահարել էր Բաղրամյանին և իր հավանությունը հայտնել Օրյոլյան օպերացիայում նրա բանակի հաջող գործողությունների առթիվ, ինչպես նաև մեծ ռեզերվ էր տրամադրել հարձակողական մարտերը շարունակելու համար:

Խոսելով մարշալ Ժուկովի աշխատանքի ոճի մասին՝ Բաղրամյանը նշում է. «Բանակում ընդհանրապես և պատերազմում հատկապես ենթակաների ու պետերի միջև հարաբերությունների կառուցման գլխավոր սկզբունքն այն է, որ սովազ պետը, առաջադրելով բարդ ու դժվարին, մարդկանց կյանքի համար ռիսկի հետ կապված խնդիր, պետք է իր ուսերի վրա վերցնի հավասար, անգամ ավելի ծանր բեռ, քան այն, որ հանձնարարում է ենթականերին»<sup>19</sup>: Հովհաննես Բաղրամյանը շեշտում էր այն հանգամանքը, որ Ժուկովը մինչև վերջ խիստ ու պահանջկոտ էր ամենից առաջ իր նկատմամբ, իսկ ենթականերին ներկայաց-

նում էր շատ ավելի մեղմ պահանջներ: Անպատասխանատվություն, թափթրվածություն ցուցաբերած մարդկանց հանդեպ Ժուկովն իսկապես անողոր էր և առանց այլևայլության իրերը կոչում էր իրենց անունով: Նա երբեք չէր փորձում մեղմել դեղի դառնությունը:

Բարձր գնահատելով մարշալ Ժուկովի գործունեությունը 1-ին ՈՒկրաինական ռազմաճակատի հրամանատարի պաշտոնում, որում նա 1944 թ. մարտի 1-ին փոխարինեց պոխլած Վատոտի-նին, Բաղրամյանը նշում է, որ Ժուկովին միանգամայն արժանիորեն շնորհվեց նորաստեղծ պորավարական բարձրագույն պարգևը՝ «Հաղթանակի» հմ. 1 շքանշանը:

Կուրսկի ճակատամարտից հետո, 1943 թ. նոյեմբերին գեներալ Հովհաննես Բրիստափորի Բաղրամյանը նշանակվեց 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար: Եվ երբ նախապատրաստվում էր «Բագրատիոն» ծածկագիր անունով նոր խոշոր օպերացիան, Բաղրամյանը շտապ Մոսկվա կանչվեց: Գեորգի Ժուկովը, ծանոթացնելով նրան Բելոռուսիայի լրիվ ապատագրման համար նախատեսվող այդ օպերացիայի մրտահոլացմանն ու առաջին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի խնդիրներին, ասաց. «Վաղը քո մասնակցությամբ պետք է պեկուցենք Գերագույն գլխավոր հրամանատարին: Ինչպես և գնահատում օպերացիայի այսպիսի դրվածքը»: Բաղրամյանը, լիովին հավանություն տալով «Բագրատիոն» օպերացիայի մտահոլացմանը, միևնույն ժամանակ անհանգրստություն արտահայտեց իր ռազմաճակատի աջ թևի վերաբերյալ, որին կարող էր թշնամու կողմից ուժեղ հարված հասցվել հյուսիսից: Ինչպես գրում է Հ. Բաղրամյանը, Ժուկովն անմիջապես ցուցաբերեց իրեն հատուկ ինքնաբերական միանգամայն ենթակայի առաջարկության մեջ եղած ռազմական հատիկը՝ ըմբռնելու հատկությունը: Եվ ոչ միայն ըմբռնելու, այլև ջախկնելու նրա խելամիտ նախաձեռնությունը: 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի աջ թևին թըշ-

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 34:



Գաշնակից զորքերի հրամանատարները. ձախից աջ՝ ֆելդմարշալ Բ. Մոնտգոմերի, գեներալ Գ. Էյզենհաուեր, մարշալ Գ. ժուկով, գեներալ ժ. Գելատր դը Տասինյի (Գ. Կ. Жуков. «Воспоминания и размышления», М., АПН, 1971 զրրից)

նամու հնարավոր հարվածը կանխելու ուղղությամբ Բաղրամյանի առաջարկությունն ընդունվեց: Հետագա իրադարձությունների ընթացքը հաստատեց դրա արդարացիությունը<sup>20</sup>:

Հ. Բ. Բաղրամյանի աշխատություններում ցույց է տրված և վերլուծված է Գ. Կ. ժուկովի արգասավոր պորավարական գործունեությունը ինչպես 1-ին Բեյրոտեսական ռազմաճակատի հրամանատարի պաշտոնում, այնպես էլ Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալի պաշտոնում: Բաղրամյանի հուշերում կան ժուկովի մասին այսպիսի տողեր. «Հպարտ եմ, որ ինձ բախտ վիճակվեց աշխատելու նրա ղեկավարությամբ, նրա ընկերն ու հասակակիցը լինելու խաղաղ ուսումնառության և ծանր պատե-

րազմական փորձությունների օրերին»<sup>21</sup>:

Հատկանշական է, որ այն օրերին, երբ նշվում էր Գեորգի Կոնստանտինովիչ ժուկովի ծննդյան 100-ամյակը, Հաստատում արդեն սկսվել էին Հովհաննես Բրիստափորի Բաղրամյանի ծննդյան 100-ամյակին նվիրված տոնակատարության նախապատրաստությունները: Ինչպես հայտնի է, այն նշվելու է 1997 թ. դեկտեմբերի 2-ին: Հույս ունենք, որ ԱԳՀ երկրների վետերանների կազմակերպությունների կողորդինացիոն խորհուրդը և Ռուսաստանյան Գաշնակյան Ռազմական պատմության ինստիտուտը ակտիվ կերպով կաջակցեն ու կմասնակցեն հայ պորավարի ծննդյան 100-ամյակին նվիրված հորեյրանական միջոցառումներին:

<sup>20</sup> Տես նույն տեղում, էջ 36:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 72:

## ВОЕННАЯ ИСТОРИЯ

## МАРШАЛ БАГРАМЯН О МАРШАЛЕ ЖУКОВЕ

*В. А. МУРАДЯН, гвардии подполковник в отставке,  
доктор исторических наук, заслуженный деятель науки РА*

## РЕЗЮМЕ

Иван Христофорович Баграмян в своей книге «Великого народа сыновья» писал о Жукове: «Для меня Георгий Константинович не только выдающийся военный стратег, славный герой и полководец — он был мой товарищ и сверстник, больше того — побратим, сыгравший огромную роль в моей солдатской судьбе. В Г. К. Жукове я видел живое воплощение широты и щедрости души великого русского народа...».

В статье на фактическом материале раскрыта суть этих слов Ивана Христофоровича, показаны истоки братской дружбы двух полководцев.

А зародилась она задолго до Великой Отечественной войны. В 1923 г. 27-летний Жуков был назначен командиром полка 7-ой Самарской кавалерийской дивизии, которой командовал легендарный герой гражданской войны Г. Д. Гай (Гайк Дмитриевич Бжишкянц). Молодой командир полка был наслышан о героических делах Гая, но видел его впервые. Тому, какое неизгладимое впечатление произвел на Георгия Константиновича легендарный Гай и какую роль он сыграл в его командирской судьбе, Жуков в своих мемуарах «Воспоминания и размышления» посвятил более пяти страниц.

Г. Д. Гай, в процессе совместной службы приметив в молодом Жукове большие способности полководца, позаботился о его будущем и направил на учебу в Высшую кавалерийскую школу в Ленинграде. Когда же Жуков в своей учебной группе познакомился еще с одним симпатичным кавказцем — И. Х. Баграмяном, то обнаружил в нем черты, схожие с чертами любимого комдива. Так Жуков на всю жизнь подружился с Баграмяном.

На фронтах Великой Отечественной войны существенно расширился круг знакомств Г. К. Жукова с военачальниками-армянами. Армянский народ отправил на фронт более полумиллиона своих сыновей и дочерей, свыше 60 из которых стали генералами, адмиралами, маршалами Советского Союза и родов войск, командовали дивизиями, корпусами, армиями, фронтами, руководили высокими штабами и политорганами. Многие из них, и прежде всего И. Х. Баграмян, И. С. Исаков, А. Х. Бабаджанян, находясь в тесных служебных контактах с маршалом Жуковым, ощущали его помощь, доброту, благодатную заботу. Но во взаимоотношениях Жукова с военачальниками-армянами особое место занимает поистине братская, искренняя и чистая личная дружба между Жуковым и Баграмяном.

Несмотря на то, что 25 из 28 лет своей послевоенной жизни маршал Жуков был в опале, маршал Баграмян постоянно находился с ним рядом, морально поддерживал его. В научных дискуссиях, когда подвергались сомнениям оценки Георгием Константиновичем отдельных событий войны, Баграмян твердо отстаивал точку зрения Жукова. И не случайно дочь Жукова, Маргарита Георгиевна, в интервью газете «Вечерняя Москва» подчеркнула, что «Баграмян был близким другом отца» и «отец любил его за благородные человеческие качества, за тонкий юмор, большой ум и здравый смысл».

В статье приводятся конкретные примеры того, как высоко оценивал Баграмян полководческое дарование Жукова, проявленное им в годы войны, в частности, в битвах под Сталинградом и на Курской дуге, в разработке планов и осуществлении грандиозных сражений по освобождению Украины и Белоруссии, овладению Берлином. Приводится также его мнение о причинах опалы Жукова. Одной из ее главных причин Баграмян считал принципиальность, прямоту Жукова, его смелость, не считаясь ни с какими авторитетами, страстно и упорно отстаивать свою точку зрения. Эта черта характера Жукова раздражала Сталина. Баграмян подчеркивал, что Верховный Главнокомандующий, хорошо зная способности Жукова, посылал его на самые ответственные направления фронта. И Жуков, блестяще выполняя задания Сталина, все более и более совершенствовал свое полководческое мастерство. Таким образом, Верховный волей-неволей способствовал раскрытию и развитию полководческого дара Жукова. Однако он терпеть не мог «упрямство» талантливого полководца. И не раз между ними возникали споры из-за различной оценки обстановки на фронте. Жуков отстаивал свое мнение, а Сталин со своей болезненной подозрительностью видел в возражениях Жукова лишь стремление подорвать авторитет Верховного.

Маршал Советского Союза И. Х. Баграмян свое повествование о Маршале Советского Союза Г. К. Жукове завершает словами искренней гордости: «Горжусь, что мне выпало счастье работать под его руководством, быть его товарищем и сверстником в дни мирной учебы и суровых военных испытаний».

## MILITARY HISTORY

### MARSHAL BAGHRAMIAN ON MARSHAL ZHUKOV

V. A. MOURADIAN, *Lieutenant-Colonel (Ret.) of the Guards, Doctor of Historical Sciences, Honorary Scientist of the Republic of Armenia*

#### SUMMARY

Ivan C. Baghramian wrote about Zhukov in his book «Sons of a Great Nation». He said, «For me, Georgi Constantinovitch Zhukov was not only an eminent strategist—he was my friend and my contemporary, but even more: he was my adopted brother, who played an enormous role in my destiny as a soldier. In Georgi Zhukov I saw the living embodiment of the breadth and generosity of the great Russian people's soul».

In the article, based on concrete factual material, the essence of Ivan Christophorovitch Baghramian's words shows the sources of the close friendship which joined both military leaders.

Everything began much earlier—before World War II (referred to in the Former Soviet Union as the Great Patriotic War). In 1923, the 27 year-old Zhukov was appointed to the command of the regiment of the 7th Samarian Cavalry Division. The division was formerly commanded by the legendary hero of the Russian Civil War, G. D. Guy (Hayk Dimitrievitch Bjishkiants). The young commander of the regiment had heard of the heroic deeds of Guy, but, on his appointment, he saw him for the first time. That Guy made a strong impression on him and assumed a crucial role in his development as a military commander

may be deduced from the fact that Zhukov devoted more than five pages of his memoirs in his «Impressions and Thoughts», to Guy.

In the process of their service together, Guy noticed in young Zhukov a military leader's talent and, wishing to encourage his military career, sent him to the Advanced School of Cavalry in Leningrad (now St. Petersburg). When Zhukov, within his training group, met a Caucasian by the name of Ivan Baghramian, he saw in Baghramian streaks similar to his well-liked commander, Guy. They became friends forever.

On the battlefields of World War II, Zhukov increased his acquaintance with Armenian military leaders. The Armenian Nation sent hundreds of thousands of her sons and daughters to battle. More than 60 of them became Generals, Admirals, and Marshals of the Soviet Union in its various services. They commanded divisions, corps, armies and even military fronts. They lead staffs and political organs. Many of them, most of all I. C. Baghramian, I. S. Isakov, and A. Kh. Babajanian, had close professional relations with Marshal Zhukov: they witnessed his help, kindness, and attention. Within the relations between Zhukov and Armenian military leaders, the place of honor was held by the friendship of G. Zhukov and I. Baghramian.

Although, of the 28 post-war years of his life, Zhukov was in disgrace for 25 of them, Marshal Baghramian was always beside him, and supported him morally. In scholarly discussions, when one tried to cast aspersions on Zhukov's points of view regarding individual events of the War, Baghramian always upheld Zhukov's opinions. Zhukov's daughter Margarita Georgievna, in an interview given to the newspaper «Vecherniya Moskva» underlined, that «Baghramian was my father's close friend, father loved him for his noble human qualities, for his sense of humor, great intellect and common sense».

Examples of Baghramian's high opinion of Zhukov's talent as a military leader are given in the article. These were evident in the battles of Stalingrad and Kursk. His talents were also evident in the development of the plans for the recapture of the Ukraine, Belorussia, and the final assault on Berlin itself. There also are statements describing Baghramian's opinion about Zhukov's disgrace. One of the main reasons, according to Baghramian, was Zhukov's adherence to principle, his straightforwardness, his bravery to passionately and persistently uphold his point of view even in the face of any authority. That streak particularly irritated Stalin. Baghramian underlined that the Supreme Commander-in-Chief (Stalin), knowing Zhukov's abilities full well, sent him to the most onerous sections of the front-lines. Zhukov improved his commanding skills while brilliantly implementing Stalin's tasks. Therefore, the Supreme Commander-in-Chief willy-nilly promoted the growth and development of Zhukov's talents as a military leader. But Stalin could not tolerate the talented military leader's obstinacy. There were many arguments because of differing evaluations of the situation on various fronts. Zhukov unwaveringly persisted in his opinion, but Stalin, suffering from his paranoid suspiciousness, saw in these objections a desire to undermine the Supreme Commander's authority.

The Marshal of the Soviet Union, I. Baghramian, finished his narration on the Marshal of the Soviet Union, Zhukov, with words of genuine admiration: «I'm proud that I had the chance to work under his leadership, that I was his friend and contemporary in peace-time training and during the ordeals of war».

# ՌԱԶՄԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

### ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳՈՅԱՏԵՎՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ս. Ս. ՔԱԴՄԱՅԱՆ, ՀՀ արտակարգ իրավիճակների վարչության պետ-նախարար\*

Ներկա պայմաններում մեր նորանկախ պետության ամեն մի ռազմավարական և մարտավարական քայլ ու որոշում մեծապես պայմանավորված են ազգի առջև կանգնած կարևորագույն խնդիրներով: Իսկ պետության ղեկավարները առաջնահերթ կարևորության հարց և պետական քաղաքականության հիմք են դիտում ազգային անվտանգության ռազմավարությունը: Ազգային անվտանգության ապահովման հարցերին անվերապահ նախապատվություն է տրվում պետական իշխանության և կառավարման մարմինների կողմից իրականացվող ներքին և արտաքին քաղաքականության մեջ:

Անշուշտ անվտանգության ապահովման գործում ռազմական հարցերն էական տեղ ունեն, բայց նպատակահարմար է հիմնավորապես վերանայել ազգային անվտանգության ձևավորված զուտ ռազմագիտական ըմբռնումը և մշակել նոր հայեցակարգ: Վերջինս պետք է ընդգրկի ինչպես հասարակության, պետության, ազգի ընդհանուր շահերի, այնպես էլ առանձին անձի շահերի պաշտպանության միասնական համակարգը:

Ազգային անվտանգության ապահովումը մեր հաւոնումբ պետք է ներառի՝

— հասարակության և պետության պարզապնան համար անհրաժեշտ պայմանների, տնտեսական կայունության, մարդու իրավունքների և օրենքի գերակայության ապահովումը,

— արտակարգ իրավիճակներում, այդ թվում և պատերազմական պայմաններում, բնակչության պաշտպանության,

քաղաքացիների և պետության գոյատևման և բնականոն կենսագործունեության ապահովումը:

Այստեղ մենք ազգային անվտանգության ապահովման հարցը կրնենք երկրորդ առումով, ընդ որում՝ հիմնականում անդրադառնալով այդ գործում քաղաքացիական կառավարման մարմինների խնդիրներին:

Պատերազմի ելքը որոշվում է տարբեր գործոններով՝ քաղաքական, ռազմական, տնտեսական, հոգեբանական: Կարևորագույն գործոններից է պատերազմական և այլ արտակարգ իրավիճակներին երկրի քաղաքացիական կառավարման մարմինների պատրաստվածության և բնակչության կենսագործունեության ապահովման աստիճանը: Ժամանակակից տարածաշրջանային պատերազմները դրա ապացույցն են: Այս դեպքում հիմնական հարվածները հասցվում են սահմանամերձ շրջանների խաղաղ բնակչությանը՝ անդառնալի կամ դժվար շտկելի իրավիճակի հանգեցնելու և նրան տեղահանելու նպատակով, նույնիսկ եթե այդ տարածքները շարունակեն հսկել տվյալ երկրի զինված ուժերը: Այդ պատերազմները «սովորական» դիրքային պատերազմներ չեն, երբ երկու բանակ իրար դեմ, թաքնված խրամատներում, պաշտպանական կառույցներում, անորոշ ժամանակով վարում են փոխադարձ ռմբակոծում՝ նախօրոք ռմբակոծվող գոտուց կամա թե ակամա տարահանման ենթարկելով բնակչությանը:

Մեր հանրապետությունում բնակչության ընդհանուր տարահանման համար համապատասխան գոտիներ համարյա չկան, իսկ որոշ շրջաններում չը-

\* Հեղինակը ո. թ. հուլիսի 3-ին նշանակվել է փրկարարների պատրաստման եվրոպական տարածաշրջանային կենտրոնի տնօրեն:

կան ընդհանրապես: Ուրեմն հարկ ե-  
ղած դեպքում միակ ճիշտ քայլերը կլի-  
նեն բնակչության ըստ բնակավայրերի  
պաշտպանության համար նախապես ո-  
րոշկառույցների ու հարմարությունների  
ստեղծումը և, անհրաժեշտության դեպ-  
քում, միայն մասնակի տարահանումը:

Տարահանման քաղաքականություն-  
նը կարող է նախընտրելի լինել պաշտ-  
պանական կառույցների թանկ նստող  
շինարարության նկատմամբ: Սակայն  
տարահանման գործում ևս բարդութ-  
յուններ են ծագում, այդ թվում՝ «վտան-  
գավոր գոտի» հասկացության ոչ միա-  
նշանակ մեկնաբանման պատճառով:

Պատերազմին երկրի ընդհանուր  
քաղաքացիական պատրաստության ծը-  
րագրի էական մաս են քաղաքացիական  
պաշտպանության գծով միջոցառումնե-  
րը, որոնք պետք է ապահովեն բնակչու-  
թյան կարճաժամկետ (հակառակորդի  
հարվածից անմիջապես հետո) և երկա-  
րաժամկետ գոյատևումը:

Բնակչության կարճաժամկետ գոյա-  
տևման ապահովումը պատերազմի ժա-  
մանակ պահանջում է միջոցառումների  
մի ողջ համակարգ, այդ թվում՝ ժամանա-  
կին բնակչության տեղեկացում, տեղե-  
կացման (մասնավորապես «օդային տագ-  
նապ» ազդանշանի) համակարգի հետա-  
գա կատարելագործում, բնակչության  
պաշտպանության համար նախատես-  
ված կառույցների բերում պատրաստու-  
թյան վիճակի, փրկարարական աշխա-  
տանքների և առաջին, այդ թվում բժշկա-  
կան, օգնության օպերատիվ իրականա-  
ցում, վթարային-վերականգնողական  
աշխատանքների կատարում և այլն:

Երկարաժամկետ գոյատևումը կախ-  
ված կլինի սննդամթերքի և առաջին ան-  
հրաժեշտության առարկաների առկայու-  
թյունից, պետության կողմից դրանց ռա-  
ցիոնալ բաշխումից, բնակչության կեն-  
սագործունեության ապահովման բազ-  
մաթիվ հարցերի լուծումից: Ընդ որում  
բնակչության երկարաժամկետ գոյատև-  
ման հարցերը լուծելիս բախվում ենք է-  
ներգետիկական համակարգերի, տրանս-  
պորտի, արդյունաբերության և այլ ո-

լորտների կայուն գործունեության ա-  
պահովման մի շարք հիմնահարցերի:

Այսպիսով՝ արդի պատերազմում ա-  
ռանց քաղաքացիական պաշտպանության  
հիմնավոր միջոցառումների անհնար և,  
նպատակին հասնել, այն է՝ հակառակոր-  
դին հասցնել անդառնալի կորուստներ  
և ընդունելի մակարդակում պահպանել  
սեփական բնակչությունը և տնտեսութ-  
յունը: Երկրի պաշտպանությանը չի  
կարող համարվել բավարար, եթե  
նախապես լուծված չեն պատերազմի  
պայմաններում բնակչության գոյատև-  
ման, տնտեսության և պետական կա-  
ռավարման կայունության հարցերը:

Ժամանակակից պատերազմների,  
ինչպես և երկրորդ աշխարհամարաի  
փորձը ցույց է տալիս, որ ուսուցման լավ  
հիմքերի վրա դրված և հանդերձավոր-  
ված քաղաքացիական պաշտպանության  
կազմակերպումը այլընտրանք չունի:

Պատերազմական գործողություննե-  
րի հետ իրենց ավերիչ ուժով և ծավալնե-  
րով համեմատելի են տարերային աղետ-  
ները (երկրաշարժեր, ջրհեղեղներ, փոթո-  
րիկներ, սողանքներ և այլն), խոշոր ար-  
տադրական, այդ թվում ռադիոալիստ, վթարներն ու աղետները: Նման են նաև  
բնակչության պաշտպանության ու կեն-  
սագործունեության ապահովման, կո-  
րուստների նվազեցման, հետևանքների  
մեղմացման և վերացման համար անհր-  
րաժեշտ շատ գործողություններ:

Վերջին տասնամյակներում աշ-  
խարհում տեխնիկական համակարգերի  
բարդացման, հիդրոտեխնիկական, վը-  
տանգավոր քիմիական ու միջուկային օբ-  
յեկտների հպորության մեծացման, բը-  
նակչության խտության աճման հետե-  
վանքով տարերային, տեխնաժին, տը-  
րանսպորտային և մյուս խոշոր աղետ-  
ներն ու վթարները առաջ են բերում  
բազմաթիվ մարդկային զոհեր և հսկա-  
յական նյութական կորուստներ: Կարուկ  
ավելանում է այսպես կոչված բազմա-  
տիճան աղետների քանակը (երբ տա-  
րերային աղետի մեկ ձևը ծնում է մյու-  
սը), որոնք բերում են ավելի ծանր հե-  
տևանքների՝ սոցիալական, տնտեսա-

կան և բնապահպանական ոլորտներում:

Զգալիորեն մեծացել է տարերային աղետների ռիսկի ոլորտ բարդ ճարտարագործական կառույցներով (ինչպես՝ ատոմակայանները, քիմիական ձեռնարկությունները, նավթա- և գազամուղները, ջրամբարների ամբարտակները, թունավոր, դյուրավառ և պայթուցիկ նյութերի պահեստները, տրանսպորտային համակարգերը և այլն) հագեցած տարածքների ներգրավման հավանականությունը: Այդ առումով հատկապես խոցելի են արագ աճող խոշոր քաղաքները, արդյունաբերական կենտրոնները: Հաճախ երկրաշարժերը էպիկենտրոնից բավականին հեռու տարածքների վրա առաջացնում են այլ բնական երևույթների (հատկապես սողանքների) ակտիվացում, որոնք իրենց հերթին բազում տեխնիկական վթարների պատճառ են դառնում:

Տեխնիկական վթարներով ուղեկցվող տարերային աղետների հետևանքների վերացումը և վերականգնողական աշխատանքները հաճախ ձգձգվում են երկար տարիներ: Այդ պատճառով խոչընդոտվում է սոցիալ-տնտեսական վարգայման գործընթացը, դրա համար նախատեսված վզալի միջոցներ հարկադրաբար տրամադրվում են աղետների հետևանքների վերացմանը:

Տարերային աղետների և խոշոր տեխնածին վթարների կանխումը կամ վտանգի նվազեցումը, արտակարգ իրավիճակներում համապատասխան գործողություններին պատրաստ լինելը պետք է յուրաքանչյուր պետության վարգայման ռազմավարության և ծրագրերի մի անբաժանելի մասը դառնան՝ տեղական, ազգային, տարածաշրջանային ու միջազգային մակարդակներով: Առանց դրա անհնարին են կայուն տնտեսական աճումն ու հաշվեկշռված վարգայումը:

Ամեն մի երկիր անմիջական պատասխանատվություն է կրում աղետների հետևանքներից իր բնակչության պաշտպանության, ենթակառույցների և ազգային ունեցվածքի պահպանության համար: Այս պրոբլեմը հատկապես հրատապ է Հայաստանի համար, որի փոքր տարածքում

առկա է գրեթե բոլոր տիպի տարերային աղետների և տեխնածին վթարների առաջացման հավանականությունը:

Հաշվի առնելով պրոբլեմի բարդությունը և միջազգային փորձը՝ հանրապետությունում անհրաժեշտ է ստեղծել արտակարգ իրավիճակների կանխման ու վերացման մի միասնական համակարգ՝ օրենսդրական, նյութական, ֆինանսական, տեխնիկական, կադրային և այլ ապահովմամբ, մի համակարգ, որը միավորի և կոորդինացնի հանրապետության բոլոր մակարդակների տարածքային և ճյուղային կառավարման մարմինների, հասարակական կազմավորումների ուժերն ու միջոցները:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության անվտանգությունը լոկ ռազմական խնդիր չէ. այն պետք է դիտվի իբրև համազգային համընդհանուր պաշտպանություն, որի իրականացման նպատակով առավելագույն չափով և լավագույն ձևով օգտագործվում են ազգային բոլոր պաշարները: Համընդհանուր պաշտպանությունը քաղաքացիական և ռազմական իշխանությունների համագործակցություն է, որի գլխավոր նպատակը պետք է լինի պատերազմի և ճգնաժամի կանխումը, նրանց հետևանքների մեղմացումը և կորուստների նվազեցումը:

Համընդհանուր պաշտպանությունը նաև ապահովող ուժերն են՝ փնված ուժերը, ռադիկալությունը, քաղաքացիական պաշտպանության և փրկարար ըստորաբաժանումները և քաղաքացիական իշխանությունները:

*Զինված ուժերը* հանրապետության անվտանգության ապահովման հիմնական գործոնն են: Նրանց նպատակն է մասնավորապես մասնակցությունը պատերազմի կանխման, հանրապետության ինքնիշխանության պաշտպանության գործում, ինչպես և՛ աջակցությունը ամբողջ աշխարհում խաղաղ վարգայմանը: Պատերազմի կանխման խնդիրը պետք է լուծվի դաշնակիցների հետ համատեղ ջանքերով, ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի գործունեության շրջանակներում: Սակայն երբ պատերազմի կանխումը չի հաջող-



վում, փնված ուժերը պետք է ի վիճակի լինեն հետ մղելու հարձակումը:

Զինված ուժերը, համագործակցելով համընդհանուր պաշտպանության համակարգի մեջ մտնող այլ կառույցների հետ, պատրաստվում են ճգնաժամի կամ պատերազմի ժամանակ առաջացող տարբեր խնդիրների լուծմանը: Սաղաղ ժամանակվա արտակարգ իրավիճակների դեպքում փնված ուժերը մասնակցում են քաղաքացիական բնակչությանն օգնություն ցույց տալուն, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանմանն ուղղված գործողություններին:

*Ոստիկանությունը* խաղաղ ժամանակ հսկողություն է սահմանում առօրյա անվտանգության և կարգ ու կանոնի, օրենքների և սահմանափակումների կատարման նկատմամբ, իրականացնում է քրեական հանցագործությունների հետաքննությունը: Նրա խնդիրների ծավալը ավելի է աճում ճգնաժամների ու պատերազմի ժամանակ, ընդ որում նրանց բնույթը կարող է և մասնակիորեն փոխվել: Ոստիկանությունը մասնակցում է բնակչությանը ապարարմանը, նրա տարահանմանը և այլ գործողությունների, որոնք կատարվում են տուժած շրջաններում, ապահովում է կարևորագույն օբյեկտների պահպանությունը, աջակցում է փնված ուժերին, այդ թվում վորահավաքի գործում:

Այսպիսով, ոստիկանությունն ունի գործունեության լայն դաշտ՝ սկսած տրանսպորտի սովորական հսկողությունից և վերջացրած գործուն մասնակցությամբ՝ պատերազմի, խոշոր վթարների և աղետների ժամանակ բնակչության պաշտպանության, քաղաքացիների և պետության ունեցվածքի պահպանության խնդիրների լուծման գործում:

*Քաղաքացիական պաշտպանության և փրկարար ստորաբաժանումները* որպես համընդհանուր պաշտպանության ուժերի բաղկացուցիչ մաս պետք է ի վիճակի լինեն պաշտպանելու բնակչությանը՝ ապահովելով նրա այնպիսի հոգեվիճակ, որ հակառակորդի հարձակման սպառնալիքը չօգտագործվի որպես

այդ բնակչության ճնշման միջոց: Նըրանց գլխավոր խնդիրներն են՝ խոշոր տարերային և տեխնաժիկ աղետների և վթարների, ռազմական գործողությունների և պատերազմի սպառնալիքի հետևանքով բնակչությանը, քաղաքացիների և պետության ունեցվածքին, շրջակա միջավայրին հասցվող վնասի կանխումը, մեղմացումը, հետևանքների վերացումը: Կանխմանն ուղղված գործողություններն են՝ քաղաքացիական կառավարման մարմինների պատրաստվածության բարձրացումը, բնակչության նախապատրաստումը, տեղեկացումը, պատասխարումը, տարահանումը և այլն: Հետևանքների վերացմանն են ծառայում փրկարարական, վթարային-վերականգնողական աշխատանքները, բժշկական օգնությունը տուժած բնակչությանը, ինչպես նաև կենսապահովմանն ուղղված գործողությունները:

Նշված կարևորագույն խնդիրների լիակատար, ամենօրյա և օպերատիվ լուծման համար հանրապետության տարածքային կառավարման բոլոր մակարդակներում՝ հանրապետական, մարզային, համայնքային, պետք է ունենալ համապատասխան ճգնաժամային կառավարման մարմիններ, ինչպես նաև անհրաժեշտ պատրաստվածությամբ, կախավորվածությամբ և տեխնիկական հագեցածությամբ տարբեր պրոֆիլի փրկարարական պետական և կամավոր կառույցներ, որոնք ի վիճակի լինեն համաձայնեցված գործողություններ կատարելու տարբեր մասշտաբների արտակարգ իրավիճակներում:

*Քաղաքացիական իշխանությունները* որպես համընդհանուր պաշտպանության կարևորագույն մաս պետք է բնակչությանը և տնտեսությունը նախապատրաստեն ճգնաժամային կամ պատերազմական պայմաններում կարճաժամկետ և երկարաժամկետ գոյատևման՝ դրանով իսկ երաշխավորելով պետության գոյությունը:

Քաղաքացիական կառավարման մարմինների պատրաստվածության ապահովումը նշանակում է նրանց համար ան-

տվոր պատերազմական, ճգնաժամային և այլ արտակարգ պայմաններում հասարակության ամենօրյա գործառույթյան պլանավորում և ապահովում: Բաղաքայիական կառավարման մարմինների պատրաստվածության ապահովման նպատակն է նաև համընդհանուր պաշտպանության պայմաններում քաղաքայիական հասարակության ռեսուրսների լավագույն ձևով օգտագործման երաշխիքների ստեղծումը:

Ջուրը, սնունդը, էլեկտրականությունը, կապը, տրանսպորտը, բժշկական ըսպասարկումը, երեխաների խնամքը, կրթության համար պայմանների ստեղծումը, հասարակության կառավարումը, լինելով խաղաղ ժամանակվա մեր ամենօրյա կյանքի տարրեր, կարևոր նշանակություն են ստանում ճգնաժամի և պատերազմի ժամանակ: Նույնիսկ ռեսուրսների սահմանափակության պայմաններում պետք է երաշխավորված լինի ամենօրյա կյանքի սովորական ընթացքը:

Բաղաքայիական կառավարման մարմինների պատրաստվածությունը՝ գործելու պատերազմի, ճգնաժամի կամ այլ արտակարգ պայմաններում մեծապես կնպաստի հասարակության կայուն գործունեությանը խաղաղ ժամանակվա պայմաններում: Այս առումով քաղաքայիական իշխանությունների պատրաստ-

վածությունն ընդգրկում է շատ տարրեր և ենթադրում է կառավարման բոլոր մակարդակներում համապատասխան պատրաստվածությամբ մեծ քանակի մարդկանց առկայություն: Այն անձը, որը պատասխանատվություն է կրում քաղաքայիական իշխանությունների գործունեության այս կամ այն բնագավառի համար խաղաղ ժամանակ, պետք է պատասխանատվություն կրի նաև աղետի, ճգնաժամի և պատերազմի ժամանակ:

Համապատասխան պատրաստվածությամբ մարդկային ռեսուրսները դառնում են քաղաքայիական իշխանությունների լավ կարգավորված գործունեության հիմնական կրողները:

Այսպիսով՝ համընդհանուր պաշտպանությունը հանրապետության անվտանգության քաղաքականության հիմքն է: Կառավարությունը պետք է մշակի գործունեության այնպիսի ծրագրեր, որոնք ընդգրկեն ինչպես վիճակի կայուն և քաղաքայիական իշխանություններին, այնպես էլ համայնքներին, տարբեր կամավոր կազմակերպություններին:

Համընդհանուր պաշտպանությունն ընդգրկում է հանրապետության հասարակության մեծ մասին և պետք է իր արտացոլումը գտնի երկրի պարզաման կարևորագույն ծրագրերում:

## ВОЕННАЯ ПОЛИТИКА

### ОБЕСПЕЧЕНИЕ ВЫЖИВАНИЯ НАСЕЛЕНИЯ И ЭКОНОМИКИ В ЧРЕЗВЫЧАЙНЫХ СИТУАЦИЯХ В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

*С. С. БАДАЛЯН, начальник Управления по чрезвычайным ситуациям – министр РА\**

#### РЕЗЮМЕ

Проблемы национальной безопасности принято рассматривать с точки зрения обеспечения независимости и суверенитета государства. Естественно, при таком подходе внимание, в первую очередь, уделяется проблемам обеспечения безопасности вооруженными силами. Однако проблемы национальной безопасности можно и нужно рассматривать в более широком пла-

\* Автор статьи 3-го июля с. г. назначен директором Европейского регионального центра подготовки спасателей. *Рег.*

ընդհանուր առմամբ — в контексте ее обеспечения не только путем предотвращения войны или отпора агрессору в случае ее возникновения, т. е. при доминировании военного фактора, но и при природных и техногенных катастрофах. При подобном подходе к этой проблеме на первый план выдвигается необходимость взаимодействия гражданских и военных властей по организации защиты населения, обеспечению нормального функционирования экономических и политических структур, краткосрочного и долгосрочного выживания населения и экономики как в условиях войны, так и при возникновении чрезвычайных ситуаций вышеупомянутого характера.

Автор предлагает рассматривать обеспечение национальной безопасности как организацию общенациональной тотальной защиты. В этом аспекте в статье рассматриваются функции и вопросы взаимодействия ее четырех органов (вооруженные силы, полиция, подразделения гражданской обороны и спасателей, гражданские власти), с этой точки зрения определяются ключевые задачи, требующие первоочередного решения.

В статье отмечается, что общей целью вооруженных сил, как важного фактора политики безопасности государства, является участие в миротворческих процессах, имеющих конечной целью предотвращение войн. Но армия должна быть готова дать отпор агрессии в случае развязывания войны. В чрезвычайных ситуациях мирного времени вооруженные силы должны принять участие в оказании помощи гражданскому населению, в действиях по ликвидации чрезвычайных ситуаций и защите окружающей среды.

На полицию возлагаются задачи по обеспечению индивидуальной и общественной безопасности гражданского населения в рамках поддержания общественного порядка, соблюдения законности, борьбы с преступностью. В условиях чрезвычайных ситуаций, в том числе в военное время, круг задач, стоящих перед полицией, существенно расширяется, причем с возможным частичным изменением их характера. В частности, на полицию могут возлагаться дополнительные обязанности по оповещению населения пострадавших районов, эвакуации, охране важных объектов, а также по оказанию помощи армии в проведении мобилизации.

Подразделения гражданской обороны и спасателей должны быть способны оказать населению всестороннюю помощь от простой медицинской помощи до развертывания жизнеобеспечивающей деятельности. Задача этих подразделений — предупреждение, уменьшение ущерба, наносимого населению, имуществу граждан и государства в результате крупных природных и техногенных катастроф и аварий, военных действий и ликвидация их последствий. Предупреждающие действия заключаются в проведении комплексов мероприятий, направленных на предотвращение чрезвычайных ситуаций, смягчение последствий катастроф, уменьшение потерь от них, в подготовке гражданских властей и населения к правильным действиям в чрезвычайных ситуациях, проведении мероприятий по защите населения, его своевременному оповещению, эвакуации. На ликвидацию чрезвычайных ситуаций направлены действия по проведению спасательных и аварийно-восстановительных работ, оказанию первой помощи пострадавшим и жизнеобеспечению населения.

Для полного каждодневного оперативного решения этих важнейших задач на всех уровнях территориальных органов управления республики: республиканских, областных, общинных — должны функционировать соответ-

ствующие органы кризисного управления, а также должным образом подготовленные и оснащенные государственные и добровольческие спасательные структуры различного профиля, способные вести согласованные действия в чрезвычайных ситуациях различного масштаба.

Гражданские власти должны обеспечить подготовку населения и экономики к краткосрочному и долгосрочному выживанию, тем самым гарантируя существование государства.

Степень обеспечения жизнедеятельности населения и готовности органов гражданского управления к чрезвычайным ситуациям является одним из важнейших факторов, предопределяющих исход войн и уровень потерь от природных и техногенных катастроф. Предотвращение или уменьшение опасности стихийных бедствий и крупных аварий, готовность к соответствующим действиям в чрезвычайных ситуациях должны стать неотъемлемой частью общей стратегии и программ развития каждого государства на местном, национальном, региональном и международном уровнях. Без этого невозможны устойчивый экономический рост и сбалансированное развитие, препятствуется процесс социально-экономического развития, поскольку предусмотренные для этого материальные и духовные средства вынужденно выделяются на устранение последствий катастроф.

## MILITARY POLICY

### ENSURING THE SURVIVAL OF THE POPULATION AND THE ECONOMY IN EMERGENCY SITUATIONS WITHIN THE NATIONAL SECURITY CONTEXT

*S. S. BADALIAN, Minister, Department of Emergency situations\**

#### SUMMARY

It is an accepted norm to consider the problems of national security from the standpoints of ensuring the independence and the sovereignty of the state. This security is accomplished by the armed forces. The problems of national security, however, ought to consider a broader context. They should ensure the prevention of war or the repulsion of an aggressor in predominantly military context. They should also deal with natural or human-made disasters, in such circumstances the primary issue to the interaction of the civil and military authorities. They must organize the protection of the population to ensure normal operations in the economic and political structures. They must also deal with the short-term and long-term survival of the population and the economy both in conditions of war, and during the nascent emergency situation.

The author suggests insuring national security as the organization of a comprehensive national defense. In this regard, the article considers the functions and issues of the interaction of its four components: armed forces, police forces, units of civil rescue teams, and civil authorities). These components must define the required priorities in the decision-making tasks.

\* On the 3-rd of July, 1997, the author of this article was appointed as a Director of the European Regional Rescuers' Training Center. *Ed.*

The article notes the general goals of the armed forces as an important factor of policy in state security. It includes participation in peace-keeping operations in order to prevent wars. The army, however, must be ready to rebuff aggression. In peace-time emergency situations, the armed forces must help the civilian population and take part in operations aimed at overcoming such crises and protecting the environment.

The police authorities are given the task of ensuring the individual and public security of the civilian population. This is to be done within the framework of the maintenance of public order, the observance of legality, and the campaign against criminal elements. Under emergency conditions, including war-time operations, the number and the complexity of tasks facing the police are greatly increased. In particular, the police has to inform the population of ravaged regions, evacuation routes and plans, the protection of crucial structures, as well as provide assistance to the armed forces during their mobilization.

Civil emergency units and rescuers should be able to provide a wide range of assistance programs: from basic first-aid to life-saving operations. The task of these units is to warn, provide damage control and reparation for material and human losses caused by natural and human-made disasters, accidents, and hostilities. Activities aimed at warning others about emergency situations include the prevention of emergencies, attenuating the consequences of disasters and the reduction of losses. These activities also include the preparation of the civil authorities and the general population to react correctly when faced with such emergencies by informing them of actions to take for protection, timely notification, and evacuation.

The day-to-day operational decision-making processes for these tasks is the responsibility of organs of crisis management which run parallel to all levels of territorial state management at the national, regional, and community levels. They must collaborate with appropriate organs of crisis management, as well as properly trained and equipped state and voluntary rescue teams having various profiles. These teams should be capable of coordinating their activities under a range of emergency situations.

Civil authorities have to prepare the population and the economy to ensure short-term and long-term survival. They must guarantee the existence of the state.

The ability to ensure the vital activity of the population and the readiness of the civil management organizations in emergency situations are the most important factors which determine the outcome of wars and the level of losses from natural and human-made disasters. The prevention or the reduction of danger from natural disasters and catastrophes together with the readiness to undertake appropriate actions in emergency situations must be integral parts of the general strategy and programs of the development of every state. This should take place on local, national, regional and international levels. Failing this, it becomes impossible to consolidate economic progress and balanced development. Socio-economic development is thwarted while material and spiritual facilities are rushed to counteract the consequences of disasters.

# ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## ԶԻՆԱՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀՀ ՆՈՐ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ՝ ՆԵՐՎԱՅՆՑՎԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Հ. Ա. ՊԱՆՅԱՆ, փոխգնդապետ, Ա. Գ. ԱՆԴՐԱՎՅԱՆ, մայոր

«Զինապարտության մասին» ՀՀ նոր օրենքի անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով:

1. Կայացել է Հայաստանի Հանրապետության անկախությունը, ինչը թելադրում է ունենալ երկրի հուսալի պաշտպանությունն ապահովող մարտունակ և ժամանակին համալրվող զինված ուժեր:

2. «Զինապարտության մասին» ՀՀ գործող օրենքի հիմքը նախկին ԽՍՀՄ նույնանուն օրենքն է, որը բնականաբար հնացել է և չի կարող կարգավորել այդ բնագավառում ծագած, իրենց բընույթով նոր հասարակական հարաբերությունները:

3. Գործող օրենքն ընդունվել է 1991 թ., և դրան հաջորդած յուրաքանչյուր տարում նրանում կատարվել են փոփոխություններ ու լրացումներ (այսօրվա դրությամբ օրենքի 11 գլուխներից 8-ում կատարվել են էական բովանդակային, իսկ մնացած 3-ում՝ խմբագրական բնույթի փոփոխություններ), որի պատճառով առաջացել է այն լրամշակելու և տարիների ընթացքում ձևավորված պրակտիկան նրանում օրենսդրոյին ամրապնդելու անհրաժեշտություն:

4. ՀՀ հիմնական օրենքի՝ սահմանադրության ընդունումը, ինչպես նաև պաշտպանության բնագավառի օրենքների (պաշտպանության և ռազմական դրրության մասին) և դրանց հետ առնչվող մի շարք օրենքների (տեղական ինքնակառավարման մարմինների մասին, քաղաքայինության մասին, ձեռնարկատիրական գործունեության մասին և այլն) ընդունումը անհրաժեշտություն են առաջացրել զինապարտության մասին ՀՀ

օրենքը համապատասխանեցնելու այդ օրենքներին:

Նոր օրենքի սույն նախագիծը, որն արժանացել է կառավարության հավանությանը, քննարկման է դրված Ազգային ժողովում և արդեն ընդունվել է որպես հիմք: Կառույվածքային առումով նրա համար հիմք է ծառայել «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքը: Բայց նախագծում օրենքը գլուխների է բաժանված ավելի ռացիոնալ ձևով (դրանց թիվը 11-ից հասցվել է 8-ի): Ընդ որում, պահպանված են «Ընդհանուր դրույթներ» և «Զինվորական հաշվառում» գլուխների վերնագրերը, բայց հողվածներն ամբողջովին նորացվել են բովանդակային առումով: Մտցվել են քաղաքացիներին պիտոյական ծառայության նախապատրաստելու մասին, ինչպես նաև կրավարկիչ դրույթներ պարունակող նոր գլուխներ: Գործող օրենքի 2—5-րդ գլուխները ամփոփվել են մեկ ընդհանուր՝ «Զինվորական ծառայություն», գլխում, որում ընդգրկվել են զինապարտների պորակոչի և պիտոյական ծառայության անյման մասին հողվածները: Նույն կարգով «Պահեստապոր» գլխում ընդգրկվել են գործող օրենքում պահեստապորի բոլոր տեսակների վերաբերյալ եղած հողվածները (6—8-րդ գլուխներ):

1-ին գլուխը, որը կոչվում է «Ընդհանուր դրույթներ», գործող օրենքի համեմատությամբ ամբողջովին թարմացված է: Նրանում տեղ են գտել օրենքի կարգավորման առարկան, զինապարտության մասին օրենսդրությունը, օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները, զինապարտության բովանդակությունը և նրա կատարման ա-

պահովումը պարզաբանող հողվածները: Գլխի հողվածներում կիրառվել են նոր մոտեցումներ և սկզբունքներ, և մենք հարմար ենք գտնում դրանց վրա կանգ առնել առանձին-առանձին:

«Օրենքի կարգավորման առարկան» վերնագիրը կրող 1-ին հողվածը գործող օրենքի 10-րդ հողվածի ճշտված վերարտադրությունն է: Նախ՝ հողվածը բերվել է օրենքի սկիզբը. այն առավել ընդհանուր դրույթն է, բնութագրում է հենց սույն օրենքը, և տրամաբանական է, որ օրենքն սկսվի իրեն իսկ վերաբերող հողվածով: Երկրորդ՝ հողվածում որպես կարգավորվող օբյեկտ ավելացվել է պինվորական հաշվառումը: Եվ երրորդ՝ հողվածից հանված է պորահավաքի հիշատակությունը:

2-րդ հողվածում պարզաբանվում է պինապարտության մասին ՀՀ օրենսդրության կառուցվածքը: Այդպիսի մոտեցումը կիրառվում է համանման կարգի օրենքներում:

Նախագծում՝ 3-րդ հողվածում, առաջին անգամ փորձ է արվում սահմանելու օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները՝ «պինապարտություն», «պինվորական ծառայություն», «ժամկետային պինվորական ծառայություն», «նախապորակոչիկ», «պորակոչիկ» և այլն: Հողվածն առանձնահատուկ է նաև այն առումով, որ նրանում՝

ա) առաջին անգամ իրարից սահմանապատվում են ՀՀ պինված ուժերը և մյուս պորքերը,

բ) օրենքի ուժ է ստանում պինծառայության ճանաչումը որպես պետական ծառայության հատուկ տեսակի,

գ) «նախապորակոչիկ» հասկացությունը հնարավորություն է տալիս պինապարտների նախնական կցագրումը և հաշվառումն սկսելու 16 տարեկանից, իսկ դա մեծապես կնպաստի պինվորական հաշվառման կարգավորմանն ու հաջող իրականացմանը,

դ) նշված սահմանումներն էապես տարբերվում են նախկին ՄԱՀՄ և ԱՊՀ մասնակից պետությունների (ՌԳ, Բելառուս) օրենսդրություններում եղած հա-

մապատասխան սահմանումներից և իրենց բովանդակությամբ նորույթ են պինվորական օրենսդրության մեջ: Մասնավորապես, նշված երկրների նույնանուն օրենքներում «պինապարտ» հասկացությունը սահմանվում է միայն որպես պահեստավոր արձակված քաղաքացի, այնինչ մեր նախագծում այն ներկայացվում է ավելի լայն ընդգրկմամբ՝ որպես «նախապորակոչային, պորակոչային տարիքի և պահեստավորում հաշվառված արական, ինչպես նաև պինվորական մասնագիտություն ունեցող կամ ժամկետային պինվորական ծառայություն անցած իգական սեռի քաղաքացի»:

4-րդ հողվածում պարզաբանվում են պինապարտության փուլերը, որով մեկ անգամ ևս հաստատագրվում է «պինապարտ» հասկացության լայն ծավալը:

5-րդ հողվածում սահմանված են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պարտականությունները՝ կապված քաղաքացիների կողմից պինապարտության կատարման հետ: Հողվածում՝

— վերոհիշյալ մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների և հաստատությունների կողմից քաղաքացիների պինապարտության կատարման ապահովումը հաստատագրվում է որպես պարտականություն, որի հիման վրա նախատեսվում է այդ գործընթացին խոչընդոտող պաշտոնատար անձանց ենթարկել պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով (սույն ձևակերպումը թելադրում է համապատասխան պատասխանատվության ձևեր սահմանել ՀՀ քրեական, վարչական իրավախախտումների և այլ օրենսգրքերում),

— խմբավորվում և կոնկրետացվում են պինապարտության կատարման ապահովման ձևերը և գործառույթները պինապարտության բոլոր փուլերում,

— ավելացված է նոր քրեական օրենսգրքի ընդհանուր մասին համապատասխանող դրույթ, ըստ որի ապարտոթ-

յան սահմանափակման, կալանքի, որոշակի ժամկետով ազատազրկման և ցմահ ազատազրկման դատապարտված գորակոչիկների հաշվառման վկայականները, պինծառայողների և պահեստազորայինների պինվորական գրքույկները դատավճիռն ուժի մեջ մտնելուց հետո դատարանների կողմից մեկշաբաթյա ժամկետում ուղարկվում են համապատասխան պինվորական կոմիսարիատներ,

— նշված բնագավառում լրացուցիչ իրավասություններ են սահմանվում ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների համար, ինչը խիստ անհրաժեշտ է գորակոչային սուղ ռեսուրսներ ունեցող Հայաստանի համար:

2-րդ գլուխը նվիրված է պինվորական հաշվառման խնդիրների կարգավորմանը և իր բովանդակությամբ նույնպես զգալի չափով նորույթ է: Այն պարունակում է պինվորական հաշվառման հասկացությունը, տեսակները, քաղաքացիների նախնական կյանքումն ու հաշվառումը, ինչպես նաև վերջինիս հետ կապված պարտականությունները պարզաբանող դրույթներ: Գլխում ընդգրկված են նաև գործող օրենքի այն հոդվածները, որոնք համահունչ են ժամանակի պահանջին և արդյունավետ կերպով կիրառվում են:

Գլխի 6-րդ հոդվածը վերաբերում է պինվորական հաշվառման կապակերպմանը, և, ի տարբերություն գործող օրենքի, նրանում պինվորական հաշվառումը ներկայացվում է ամբողջական և լրիվ ձևով: Հոդվածում տրվում են պինվորական հաշվառման և նրա տեսակների սահմանումները, նշվում են այն իրականացնող մարմինները, սահմանվում է պետական մարմինների կողմից ծառայողների պինվորական հաշվառման վերցվելու կարգը:

8-րդ հոդվածում որոշակիորեն նըշված են այն պարտականությունների իրականացման կարգն ու դեպքերը, որոնք կապված են պինապարտի պինվորական հաշվառման հետ: Ընդ որում, հոդվածում նույնությամբ կամ փոփոխված

ձևով օգտագործված են գործող օրենքի՝ նշված խնդիրները կարգավորող հոդվածները՝ լրացված նոր դրույթներով:

3-րդ գլուխը վերաբերում է քաղաքացիներին պինվորական ծառայության նախապատրաստելուն: Այս գլխում նույնպես առանձին-առանձին, որոշ դեպքերում նորովի ներկայացվում են գործող օրենքի համապատասխան հոդվածների դրույթները: Այսպես օրինակ՝ նախազորակոչային պատրաստության դրույթը ներկայացվում է գործող օրենքի ձևակերպմամբ, բժշկական քննության ու հետազոտման, ինչպես նաև պաշտպանական բնույթի մարվատեխնիկական կրթօջախներում ուսուցման դրույթները նորույթ են, իսկ պինվորական ուսումնական հաստատություններում ուսուցման դրույթը ներկայացվում է նորովի:

Գլխում մեծ տեղ է հատկացված պինապարտների բժշկական քննությանն ու հետազոտմանը: 10-րդ հոդվածում հատուկ նշված է, որ դրանց կատարումը պարտադիր է, անվճար և արտահերթ, սահմանված են դրանք անցկացնող հանձնաժողովի կազմման սկզբունքը, ինչպես նաև առանձին դեպքերում պինապարտներին հետազոտվելու համար այլ բուժիմանարկներ ուղարկելու և բժշկական հետազոտումը ֆինանսավորելու կարգը:

11-րդ հոդվածում կարգավորված է նախազորակոչիկների նախնական պատրաստության և պինվորական մասնագիտության ձեռքբերման հարցը, ինչը կնպաստի պաշտպանական բնույթի մարվատեխնիկական կրթօջախների դերի բարձրացմանը, ինչպես նաև հանրակրթական դպրոցներում նախնական պինվորական ուսուցումը պետական հովանավորությամբ իրականացնելու հարցի կարգավորմանը:

Գործող օրենքի այն դրույթներում, որոնք վերաբերում են պինվորական ուսումնական հաստատություններին, կատարվել են որակական փոփոխություններ պինվորական կրթություն ստացող քաղաքացիների պատասխանատվության և ուսման որակի բարձրացման



առումով: Հանվել է պինդորական ուսումնական հաստատություններ դիմելու նվազագույն տարիքի սահմանափակումը (17 տարեկան) և սահմանվել է առավելագույն տարիք (23 տարեկան), կոնկրետացվել են բուհերից հեռացված կուրսաւսնների ուսման ժամանակաշրջանը ժամկետային պինդորական ծառայություն հաշվելու դեպքերը:

4-րդ գլուխը ծավալով ամենաընդարձակն է: Այստեղ պարզաբանվում և կարգավորվում են պինդորական ծառայության տեսակները, ժամկետները, քաղաքացիների պորակոչը և դրանից տարկետում ստանալն ու ազատվելը, պորակոչի կազմակերպումը, պինդորական ծառայություն անցնելը և այլն: Գլխում հիմնականում օգտագործվում են գործող օրենքի հոդվածները, որոնք լրացված են պրակտիկայի վերլուծության արդյունքների հիման վրա մշակված նոր դրույթներով: Այսպես օրինակ՝

ա) տարանջատվել են պարտադիր և պայմանագրային պինդորական ծառայությունները (13-րդ հոդված), և կոնկրետացվել են դրանց ժամկետները, հաստատագրվել է պինդորական ծառայության ավարտի օրը (14-րդ հոդված),

բ) մտցվել են պահեստապորի սպաների և պորակոչի ավարտից հետո պինդումիսարհատ ներկայացած անձանց պինծառայության կանչելու կարգը հրատակեցնող կետեր (15-րդ հոդվածի 3-րդ կետ և 4-րդ կետի վերջին պարբերություն) և դիտավորյալ հանցագործություն կատարած առանձին կատեգորիաների անձանց չպորակոչելու վերաբերյալ դրույթներ (15-րդ հոդվածի 1-ին կետ),

գ) եղած առաջարկությունների և առանձին երկրների օրենսդրություններում դրսևորված մոտեցման հաշվառումով պարտադիր պինդորական ծառայությունից ազատվող պինապարտների կատեգորիաները մեկից հասցվել են երեքի (16-րդ հոդված): Ընդ որում, վերականգնվել է հոր կամ եղբոր պոհվելու կապակցությամբ պարտադիր պինդորական ծառայության պորակոչից ընտանիքի միակ արու զավակ պինապարտի

ազատվելու իրավունքը, որը գործում էր մինչև 1993 թ. նոյեմբերը (համեմատության համար նշենք, որ համաձայն ՀՀ կառավարության 1994 թ. մայիսի 16-ի հմ. 226 որոշման տարկետում է տրվում ընտանիքի միակ արու զավակ այն պորակոչիկին, որի եղբայրը պոհվել է ՀՀ պինված ուժերում ծառայողական պարտականությունները կատարելու ժամանակ: Մակայն հոր կամ եղբոր պոհվելու դեպքին համապատասխանում է պարտադիր ծառայության պորակոչից ազատվելու իրավունքի վերապահումը, որը կարող է կատարվել միայն օրենքով),

դ) սույն օրենքը գործող օրենսդրությանը համապատասխանեցնելու և պորակոչից խուսափման հաճախակի դեպքերը կանխելու նկատառումներով որոշակիացվել են պորակոչից տարկետման իրավունք վերապահող դրույթները (17-րդ հոդվածի առաջին կետի «ա», «ե» ենթակետեր և երկրորդ պարբերություն),

ե) գործող օրենքով պինված ուժերում արգելվում են ընդհանրապես հասարակական կազմակերպությունների, իսկ նախագծով՝ միայն պինդորական կանոնագրքերով (կանոնադրություններով) չնախատեսված հասարակական կազմակերպությունների ստեղծումը և գործունեությունը,

զ) վերացվում է (Ազգային ժողովի հատուկ որոշմամբ՝ 1998 թ. սեպտեմբերի 1-ին) գիտակրթական համակարգի սովորողների տարկետում ստանալու իրավունքը:

Այդ հարկադրական քայլին դիմելու դրդապատճառները հետևյալներն են:

ա) Չկարգավորվող արտագաղթի, պորակոչից խուսափելու և այլ պատճառներով պորակոչից պորակոչ պակասում է պինված ուժեր կանչվող քաղաքացիների և, դրան հակառակ, ավելանում է պետական բուհերի սովորողների թվաքանակը:

բ) Գործող օրենքի 28-րդ հոդվածով սահմանվում է, որ կրթությունը շարունակելու համար տարկետում ստացած քաղաքացիները ժամկետային պինդորական ծառայության կարող են կանչվել մինչև 27 տարին լրանալը: Սույն դր-

րույթը պինվորակյան կառավարման մարմիններին իրավունք է տալիս ընդհատելու որոշակի տարիքի հասած ուսանողների տարկետումը և նրանց պորակոչելու պինված ուժեր: Պրակտիկայում, որպես կանոն, ուսանողները պորակոչվում են 27 տարին լրանալուն նախորդող պորակոչի ժամանակ, որի հետևանքով հիմնականում ընդհատվում է բուհերի ավարտական կուրսերում և ապա իրանտուրայում սովորողների ուսումը: Այդպիսի հանգամանքը հաշվի առնելով՝ նախագծի հեղինակները գտել են, որ ոչինչ արտառոտ չի լինի, եթե ուսանողները պորակոչվեն ուսման սկզբբուն, երբ առավել հեշտ կտանեն ծառայության դժվարությունները և այն ավարտելուց հետո առանց որևէ բարդության կշարունակեն իրենց ուսումը:

գ) Պետք է վերականգնել սոցիալական արդարության սկզբունքը և 18 տարին լրացած բոլոր քաղաքացիներին հնարավորություն տալ հավասար պայմաններում մասնակցելու Հայաստանի պաշտպանությանը: Չէ՞ որ ՀՀ սահմանադրությունը (35-րդ հոդված), ամրագրելով բոլոր քաղաքացիների կրթությունն ստանալու իրավունքը, ուսանողներին չի ազատում պետության առջև ունեցած պարտականություններից կամ չի հետաձգում դրանց կատարումը:

դ) Գաղտնիք չէ, որ հանրապետության կրթօջախներում մատաղ սերնդի պինվորակյան պատրաստության գործընթացը բարձիթողի վիճակում է: Իսկ ստեղծված ռազմաքաղաքական իրադրության պայմաններում ավելորդ շրջապատում է 22—25 և ավելի տարիք ունեցող երիտասարդներին ռազմական գործից և ինքնապաշտպանության տարրական հմտություններից հեռու պահելը: Նախագծի հեղինակները ելևում են այն իրողությունից, որ տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրավիճակը հիմք է տալիս ենթադրելու, որ առաջիկա տարիներին կպահպանվի պատերազմի վտանգը, և ուրեմն հայ երիտասարդը պետք է պատրաստ լինի ամեն պահի պորավիզ լինելու հայրենի

երկրին ու պաշտպանելու սեփական օջախը:

5-րդ գլխում ամփոփված են պահեստավորի հարցերը: Նրանում ընդգրկվել են գործող օրենքի այն հոդվածները, որոնք կարգավորում են պինված ուժերի շարքերից տարբեր կազմերի (շարքային, ենթասպայաչակյան, սպայական) պինծառայողների արձակման հետ կապված հարցերը: Գլխի հոդվածներում կատարված լրացումները և փոփոխությունները մեծ մասամբ խմբագրական բնույթի են: Դրանց շնորհիվ հստակեցվել է պինված ուժերի շարքերից արձակելու կարգը (23-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետեր), մտցվել է երրորդ խմբի պահեստավորում հաշվառված շարքային կազմի պինասպարտներին վարժական հավաքների չկանչելու մասին դրույթ (25-րդ հոդվածի 6-րդ կետ): Հաշվի առնելով պինված ուժերի խնդիրները՝ ավելացվել է սպայական կազմի ժամկետային պինծառայության մեջ և պահեստավորում գտնվելու սահմանային տարիքը, ինչպես նաև մտցվել է այդ ժամկետները երկարաձգելու վերաբերյալ կետ (27-րդ հոդվածի 2-րդ կետ):

Զինծառայողների և պինասպարտների իրավունքներն ու պարտականությունները սահմանված են 6-րդ գլխում: Այստեղ պահպանված է ներկայիս օրենքով գործող կարգը և որոշակիություն է մտցված ծառայության ընթացքում պինծառայողների զոհվելու կամ մահանալու դեպքում նրանց ընտանիքների անդամների արտոնությունների և երաշխիքների հարցում (29-րդ հոդվածի 5-րդ կետ), մտցված են անհարգելի պատժանքներով պինծառայություն չունեցած քաղաքացիների համար սահմանափակումներ (29-րդ հոդվածի 7-րդ կետ):

7-րդ գլուխը վերաբերում է գորահավաքին, և գործող օրենքի ձևակերպումները նրանում չեն փոխվել և չեն լրացվել:

Օրենքի նախագծում մտցվել է այդ օրենքն ուժի մեջ մտնելու և գործող օրենքն ուժը կորցրած ձանաչելու կարգը, որը ձևակերպվել է որպես 8-րդ գլուխ:

Մեր կարծիքով «Զինասպարտության

մասին» օրենքի սույն նախագիծը անկախության անցած տարիների ընթացքում ձևավորված իրավաբանական մտքի և բանակաշինության բնագավառում կուտակված փորձի ամփոփ արդյունքն է և այդ գործընթացի հետևանքով ձևավորված նոր հասարակական հարաբերությունների արտացոլումը: Այն նպատակաուղղված է հպոր և մարտունակ պիկված ուժերի ստեղծմանը և այդ նկա-

տառումով էլ կառուցված է, մասնավորապես, սոցիալական արդարության սկզբունքների վրա:

Տարածաշրջանում տիրող աշխարհաքաղաքական բարդ ու պայթյունավրտանգ իրավիճակում մեր նորանկախ պետության համար այս նոր օրենքի ընդունումը խիստ շահեկան կլինի, և ակընկալվում է հասարակայնության աջակցությունն այդ գործում:

## ВОЕННОЕ ПРАВО

### ПРОЕКТ НОВОГО ЗАКОНА РА «О ВОИНСКОЙ ОБЯЗАННОСТИ», ПРЕДСТАВЛЕННЫЙ МИНИСТЕРСТВОМ ОБОРОНЫ

*Օ. Տ. ՔԱԼՅԱՆ, подполковник, Ս. Գ. ՏԵԴՐԱԿՅԱՆ, майор*

#### ՐԵԶԻՄԵ

Необходимость нового Закона РА «О воинской обязанности» обусловлена следующими обстоятельствами.

1. В настоящее время, когда состоялась независимость Республики Армения, необходимо иметь боеспособные, своевременно комплектуемые оруженные силы, способные надежно защищать суверенитет республики.

2. В основе действующего Закона РА «О воинской обязанности» лежит одноименный закон бывшего СССР, который, естественно, устарел и не может регулировать сложившиеся в республике, новые в своей сущности социальные отношения в этой сфере.

3. Действующий Закон был принят в 1991 г., а за прошедшее время в него ежегодно вносились дополнения и изменения, вследствие чего возникла необходимость его доработки и законодательного закрепления в нем сформировавшейся за это время практики.

4. Принятие Конституции РА, законов, действующих в области обороны и в смежных областях, вызывает необходимость приведения данного закона в соответствие с ними.

В структурном плане основой для данного проекта послужил действующий Закон РА «О воинской обязанности», однако деление на главы в проекте осуществлено более рационально: количество глав сокращено с 11 до 8, внесены изменения в их компоновку и содержание.

Например, I глава под названием «Общие положения» совершенно отличается от соответствующей главы действующего Закона. Она состоит из статей, в которых указываются предмет регулирования, законодательные акты, относящиеся к воинской обязанности, даются определения используемых в Законе основных понятий, излагаются содержание и требования обеспечения выполнения воинской обязанности. В частности, в 3-й статье проекта Закона делается попытка дать определение таким основным понятиям, как «воинская обязанность», «военная служба», «срочная военная служба», «призывник» и т. д. Статья выделяется и в том плане, что здесь впервые

проводится разграничение между вооруженными силами и другими войсками РА, получает силу закона признание военной службы как особого рода государственной службы, дается определение термина «допризывник», что делает возможным взятие на учет военнообязанных с шестнадцатилетнего возраста, многие определения существенно отличаются от принятых в бывшем СССР и странах СНГ и по содержанию являются новыми для военного законодательства. В частности, термин «военнообязанный» определяется как «граждане мужского пола допризывного, призывного возраста и взятые на учет в запасе, а также женского пола, имеющие военную специальность или прошедшие срочную военную службу». В 5-й статье определены обязанности органов государственного управления и местного самоуправления, предприятий, учреждений, организаций и учебных заведений, относящиеся к исполнению гражданами своих воинских обязанностей.

II глава посвящена вопросам регулирования задач воинского учета и также содержит много нового. Однако в этой главе сохранились и некоторые положения действующего Закона, которые продолжают соответствовать требованиям времени и в настоящее время эффективно применяются.

III глава регулирует вопросы подготовки граждан к прохождению воинской службы. Особое внимание уделено вопросам их медицинского осмотра и врачебного обследования. В тех положениях действующего закона, которые относятся к военно-учебным заведениям, произведены качественные изменения, направленные на повышение ответственности граждан, получающих военное образование, и качества учебы. Произошли изменения и в возрастном цензе на поступление в военно-учебные заведения.

IV глава наиболее объемистая. Здесь разъясняются и регулируются вопросы, связанные с видами военной службы, их сроками, организацией призывов и предоставлением отсрочек. В проекте отсутствует статья действующего Закона, по которой учащимся предоставлялась отсрочка для продолжения учебы.

V глава определены права и обязанности военнослужащих и военнообязанных, уточнены льготы и гарантии, предоставляемые членам семей погибших или умерших в период прохождения службы военнослужащих.

В проекте нового Закона закрепляется порядок вступления его в силу и отмены старого Закона, оформленный в качестве VIII главы.

Проект Закона нацелен на создание боеспособных вооруженных сил и в силу этого строится на неукоснительном соблюдении принципов социальной справедливости. В статье отмечается, что в сложной и взрывоопасной геополитической обстановке в регионе принятие Закона должно послужить интересам национальной безопасности нашего государства.

## MILITARY LAW

### THE DRAFT OF THE NEW LAW OF THE REPUBLIC OF ARMENIA ON MILITARY DUTY AS PRESENTED BY THE MINISTRY OF DEFENSE OF THE RA

*H. S. PALIAN, Lieutenant-Colonel, S. G. SEDRAKIAN, Major*

#### SUMMARY

The adoption of the new Law of the Republic of Armenia on Military Duty is a vital need as determined by the following circumstances.

1. Given the independence of Armenia, it is necessary to have combat-ready, comprehensive armed forces. They must be able to be the bulwark to guarantee the sovereignty of the Republic of Armenia.

2. The basis of the current Law of the Republic of Armenia on Military Duty is similar to the law of the former USSR. This law, of course, is dated and can no longer regulate the new social relationships established in the country.

3. The current Law was adopted in 1991. In the recent past, every year saw amendments being proposed and adopted. This reflected the apparent need to review and change the legislation to better serve the present situation.

4. The adoption of the Constitution of the Republic of Armenia, and the laws pertaining to defense and related areas, sharpened the need to adapt the given law to reflect present realities.

The structural lay-out of the draft Law is based on the current legislation. The divisions according to Chapters in the draft, however, are implemented on a more rational basis. The number of Chapters is decreased from eleven to eight. There also are changes to their design and contents.

For instance, the First Chapter named «General Provisions» is quite different from the same chapter in the current law. It consists of articles which define the subject of regulations and legislative acts concerning Military Duty. Basic concepts of the Law are stated. The contents and the requirements needed to answer issues relating to the implementation of military service are explained. In particular, the Third Article of the draft Law attempts to define such fundamental concepts as «Military Duty», «Military Service», «Conscription Military Service», and «Conscript» amongst others. The Article stands out because, for the first time, the distinctions between the armed forces and other troops of Armenia are laid out. Military Service, as a specific form of state service, is given the power of law. The Article explains the term «Potential Conscript» as the person who, on attaining the age of sixteen, is placed on the Conscription Lists for future service when he turns eighteen. Many aspects are quite different from accepted norms in the former USSR and the CIS countries. The contents are new for military legislation. The term conscript is defined as the male citizens who are of pre-call-up, or call-up age, as well as those who are placed in the reserves. Women, who have a military profession or who have served as volunteers for a fixed length of time, are also considered in the legislation. Article Five defines the duties of government and local administration bodies, enterprises, organizations, and educational institutions as these relate to the performance of their military duties.

The Second Chapter is devoted to questions dealing with the regulation of

tasks of military enlistment and also contains many other new topics. This chapter, however, also contains vestiges of the current Law which still serve the purposes of the present.

The Third Chapter is concerned with the questions surrounding the preparation of citizens for Military Service. It emphasizes the conditions relating to the medical examination of conscripts. Items of the present law which refer to Military Educational Institutions have been qualitatively changed. These emphasize the increasing responsibility of citizens who receive a military education, and the quality of such training. There are changes in the age requirements to enter Military Educational Institutions.

The Fourth Chapter is the longest. Explanations and regulations are made connected to the types of military service, their terms and conditions, the organization of the draft and the granting of deferrals. Unlike the current Law, the proposed draft has no provision for deferrals to continue higher education.

In the Sixth Chapter the rights and duties of servicemen and conscripts are defined. The privileges and assurances given to family members of soldiers who die while on active duty are clarified.

The draft of the new Law provides the modalities of its enforcement and the setting aside of the previous legislation. This is given in the Eighth Chapter.

The new legislation proposes to create combat-ready forces and, based on these considerations, is built on the observance of principles of social fairness.

The authors of the draft are convinced that in the complex and explosive geopolitical situation of this region, the acceptance of this new Law will serve the interests of our state.

# ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ՈՉ ԱՎԱՆԴԱՎԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՍԵԹՈՂՆԵՐԸ

*Ա. Ե. ՍԱՐԳՍՅԱՆ, մայրոք, տեխնիկական գիտությունների դոկտոր,  
Ռուսաստանյան ռազմագիտական ակադեմիայի ակադեմիկոս*

Այսօր մարտական գործողություններում չափազանց աճել է հոգեբանական գործոնի նշանակությունը. դա հաստատում է նաև արտասահմանյան փորձը: Օրինակ՝ Պարսից ծոցում պատերազմի ընթացքում Իրաքի բանակի դիրքերի վրա հարձակման ժամը որոշում էին հոգեբանները: Հարձակման մասին որոշումն ընդունվեց այն ժամանակ, երբ հոգեբանական պայքարի գծով մասնագետները վեկույեցին, որ իրաքյիների աճնակազմի 40—60 %-ը բարոյալքքված է հոգեբանական ներազդման հետևանքով (թոռույիկներ, ռադիոկոչեր, ուժի ցուցադրում և այլն): Արտասահմանյան երկրների մեծ մասում այսօր տարվում են աշխատանքներ բնակչության վանզվածների գիտակցության և հոգեկանի վրա յուրահատուկ ներազդման այնպիսի հպոր համակարգի նպատակամղված վարգայան ուղղությամբ, որն առավելագույնս համապատասխանի ցիվիլատայողների և երկրի պաշտպանության, ազգային անվտանգության խնդիրներին:

Մարտական գործողությունների վարման և տեղեկությի սուսայման ոչ ավանդական եղանակների բնագավառում կատարվող հետազոտությունները համարվում են ռազմական բնագավառում առավել հեռանկարայիններից: Մի շարք պետությունների կողմից դրբանք դիտվում են որպես առաջնային, թեև տեխնիկապես իրագործված շատ նախագծեր կոնսերվացվել են և անցել «հուսահատության վենքերի» շարքը, քանի որ այդ նախագծվող վենքերի կառավարումը չափազանց բարդ է, իսկ երբեմն նույնիսկ անհնարին է, այլև այն պատճառով, որ դրանց կիրառման հետե-

վանքները միշտ չէ, որ կանխատեսելի են: Ջենքի ոչ ավանդական տեսակներից են.

- պսիխոտրոնային վենքը,
- առանց մարմնական վնասներ հասցնելու հավառակորդի չեզոքացման համար նախատեսված միջոցները,
- երկրաֆիզիկական և էկոլոգիական պատերազմի վարման միջոցները,
- կենսաքիմիական, կենսաֆիզիկական և այլ վենքեր:

Վերջին տարիներին բարձր ակտիվություն է նկատվում կենսաէներգետիկայի<sup>1</sup> հիմնահարցերի հետազոտման ոլորտում, հատկապես մարդու հարանորմալ կարողությունների հետ կապված հարահոգեբանության բնագավառում<sup>2</sup>: Պսիխոտրոնիկայի ոլորտին է վերաբերում կենդանի օրգանիզմի շուրջը գոյություն ունեցող յուրահատուկ ֆիզիկական դաշտի օգտագործմամբ տարբեր տեխնիկական սարքերի ստեղծումը: Այստեղից էլ ծագել է **պսիխոտրոնային գենքի** հասկացությունը, մի վենք, որը գործում է մարդու օրգանիզմի հարանորմալ հատկությունների կիրառման սկզբունքով:

Կենսաէներգետիկայի բնագավառում կատարվող ռազմակիրառական հետազոտություններում կարելի է առանձնացնել հետևյալ չորս հիմնական ուղղությունները:

<sup>1</sup> *Կենսաէներգետիկան* մի գիտություն է, որը ուսումնասիրում է օրգանիզմների կենսագործունեության ընթացքում էներգիայի փոխակերպման մեխանիզմները:

<sup>2</sup> Տես *Ք. Ստրոգոմիլով, Ք. Տար. Перцептивный канал передачи информации на дальние расстояния. История вопроса и последние исследования. ТИИЭР, т. 64, N 3, март 1976, сс. 34—65.*

*Առաջին ուղղությունը* մարդու ուժեղացման գործունեության վրա կանխամտածված ներապոման մեթոդների մշակումն է: Մշակվել և տեխնիկապես հաջողությամբ կիրառվել են մարդու ենթագիտակցության մեջ տեղեկությունը էքստրասենսի հրամանով մտցնելու և այնտեղից հանելու մեթոդները: Ընդամին ո՛չ ժամանակը, ո՛չ էլ հեռավորությունը էական նշանակություն չեն ունենում: Ներապոման մյուս ոլորտը հակառակորդի վարքի ձևափոխությունն է, օրգանիզմի պաշտպանական գործառույթների թուլացումը, կամքի և բանականության կաթվածը և անգամ մահացու ելքով էքստրասենսային հեռահար ներգործությունը: Հնարավոր է այս կամ այն շքրջանի բնակչությանը դարձնել բոլորովին պասսիվ, հոգեկան ներապոմամբ դանդաղեցնել երեխաների զարգացումը, նրանց վերածել ապուշների, որոնք հյու-հնազանդ կկատարեն հրամանները, կամ առաջ բերել նրանց մտավոր «ընդունակությունների պայթյուն»: Պսիխոտրոնային ներգործության մեխանիզմը հետևյալն է. նախ մարդուն «ծըրագրավորում» են, այնուհետև նրան հաղորդում են որոշակի հրաման-ազդանշան, որի ազդեցությամբ մարդն սկսում է գործել անգիտակցորեն<sup>3</sup>: Նշենք նաև, որ վերջին տարիներին մշակվել են հոգեկանի կառավարման բազմաթիվ նոր մեթոդներ: Ընդամին հետաքրքիրն այն է, որ այդ բոլոր մեթոդներում առկա է հիպնոսի տարրը:

Օրինակ՝ լեզվաձայնագրային դասասենյակում կարելի է շատ ավելի արագ յուրացնել օտար լեզուները, եթե մի ականջակալում հնչում է ոչ բարձր ջրիկոցներով ուղեկցվող թեթև ժանրի նվագախմբային երաժշտություն, իսկ մյուսում՝ հիշելու ենթակա բառերն ու արտահայտությունները: Ընդամին այդ ջրիկոցների համաժամանակորեն էկրանին բռնկվում է մի կանաչ վառ բիծ: Հետզհետե բծերի հաճախականությունը

նվազում է, իսկ ուսանողներն ակամայից հարմարվում են դրան. նրանք ըսկընում են ավելի դանդաղ շնչել, դանդաղում է վարկերակը և այլն: Մարդիկ հայտնվում են հիպնոսային վիճակում: Այդ վիճակում ցանկացած տեղեկությունում է անմիջականորեն ենթագիտակցության մեջ և ընդմիջտ հիշվում:

Այդ մեթոդը մոտ տասը տարի է, ինչ կիրառվում է Քիշնևի պետական համալսարանում, կոչվում է ռիթմոպեդիա: Այն ուսանողներին հնարավորություն է տալիս հիշողության մեջ պահելու մի քանի անգամ ավելի ծավալուն ուսումնական նյութ և զգալիորեն ավելի երկար, քան սովորական եղանակով յուրացման դեպքում: Բայց առավել զարմանալին այն է, որ ուսանողները դասերին բոլորովին չեն հոգնում, դեռ ավելին, հանգստանում են, դասի վերջում զգում են ուժերի հորդում, նրանց տրամադրությունը բարձրանում է: Այդպիսին է արվեստի և ռիթմի կախարդական ուժը:

*Երկրորդ ուղղությունը* ներառում է այն հարանորմալ երևույթների հետազոտությունը, որոնք առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում հնարավոր ռավմական կիրառության տեսանկյունից: Գրանք են՝ հեռազգայությունը (տելեպատիա), մոտա-, հեռա- և պայծառատեսումը, հեռախոսորոշումը, ապագատեսումը (ապագայի կանխագուշակումը), հեռաշարժությունը (տելեկինեզ), Բաքստերի էֆեկտը (բույսերի էլեկտրահաղորդականության փոփոխությունը էքստրասենսի ներգործությամբ), հեռախթանումը (անհայտմային մերսում), բուժարարությունը, պսի-ֆոտոն<sup>4</sup>:

Փորձարարական եղանակով հետազոտվել է տեսողական կապի սահմաններից դուրս գտնվող օբյեկտներն ընկալելու մարդու ընդունակությունը («հեռատեսողունակություն»):

Օրինակ՝ հատուկ պատրաստված պանելը սենսաների ժամանակ պետք է մտովի «տեսնելին» որոշակի ջրջաններ

<sup>3</sup> Shu B. Павлычев. Психотронное оружие: миф или реальность? «Зарубежное обозрение», 1994, N 2.

<sup>4</sup> Shu M. Дмтрук. На гребне новой волны. «Социалистическая индустрия», 2 декабря 1989 г.



կամ այնտեղ «այցելելին»՝ այնուհետև մանրամասնորեն նկարագրելով տեսածը: Ստացված տվյալները վկայում են, որ այդ խնդիրն ընդհանուր առմամբ լուծվել է բավարար չափով, թեև ո՛չ փորձարկվողները, ո՛չ էլ փորձերի կազմակերպիչները մինչ այդ ոչինչ չեն իմացել դիտարկման օբյեկտների մասին: Անշահագրգիռ անձինք, որոնք վերահսկում էին փորձերը, հաստատել են բավականաչափ ճշգրիտ տեղեկության ստացման փաստը: Եվ, որպես արդյունք, ակնհայտ են դարձել հեռատեսման և պայծառատեսման կամ հեռաշարժության (տեղափոխություն օրգանիզմից դուրս) միջոցով հետախույզական տեղեկությունների ստացման հեռանկարները, ինչպես նաև առանց մարդու իրազեկության նրանից տեղեկության ստացման հնարավորությունը:

Այս երևույթի կիրառության շրջանակները բավականին լայն են. մարտավարական օդակներում կարելի է հետախույզություն վարել մարտի դաշտում և հակառակորդի թիկունքում: Սակայն այստեղ կան նաև որոշակի դժվարություններ. նման ունակություններով օժտված անձանց թիվը սահմանափակ է և այլն:

Փայտացման վիճակում (գիտակցության լրիվ անշատմամբ, փայտացած մկաններով և իմպուլսների բացակայությամբ) Վոլֆ Մեխնգը պատասխանել է ժամանակին բոլորին հետաքրքրող այն հարցին, թե ինչպես կուժվի կարիքյան ճգնաժամը: Նրա ձեռքն ինքնաբերաբար խլբբել է ալբոմի թերթին՝ «Կլինի խաղաղություն»: Այս սեանսին մասնակցել են գիտնական բժիշկներ, որոնք հաստատել են փայտացումը<sup>5</sup>:

Եվս մի օրինակ: 1989 թ. կատարվել էր մի սպանություն: Հանցանքի վայրում գտնվել էր ենթադրաբար հանցագործի ձեռքով գրված նամակի մի կտոր: Այդ մարդու մասին որևէ այլ տեղեկություն չկար: Եվ ահա այդ թղթի կտորով էքսուրասենսները գտան հանցագործի բնա-

<sup>5</sup> Шу В. Гусев. Мировой парень. «Красная звезда», 2 октября 1993 г.

կայանը և հանցագործին: Ի վերջո, մարդասպանը կանգնեց դատարանի առաջ<sup>6</sup>:

Էքստրասենսի ունակություններն օգտագործվում են ոչ միայն հանցագործությունը բացահայտելու նպատակով, այլև բարդ տեխնիկական միջոցների հեռախտորոշման համար: Ռուսաստանյան ավիացիայում քաջ հայտնի է Գ. Գրաբովոյի անունը, որի աջակցությանն են դիմում նաև օտարերկրյա ավիացիոն ընկերությունները: Գրաբովոյին հաջողվել է հատուկ մասնագիտական հանձնաժողովի ներկայությամբ 25 մ հեռավորությունից հայտնաբերել բուլղարական «Ճր Սոֆիա» ավիաընկերության նոր վայրէջք կատարած ինքնաթիռի թաքնված թերությունները: Կան պաշտոնատար անձանց կողմից վավերացված հարյուրավոր վկայություններ, որոնք հաստատում են, որ Գրաբովոյը կարողացել է հայտնաբերել տարբեր ինքնաթիռների թերությունները՝ չլինելով ինքնաթիռաշինության բնագավառի մասնագետ և անգամ չտեսնելով տվյալ նմուշը, այլ միայն իմանալով ինքնաթիռի համարը<sup>7</sup>:

Այս բնագավառում որոշակի հաջողությունների են հասել նաև արտասահմանյան պայծառատեսները:

Ընդհանրապես մշակված են հեռավորության վրա էքստրասենսի և թըղթակցի միջև երկկողմանի հեռագալսական կապի հաստատման այնպիսի մեթոդներ, որոնցով իրագործվում է կապը մեծ կարևորություն ունեցող հեռավոր շարժական օբյեկտների, այդ թվում դիվերսիոն խմբերի հետ: ԽՍՀՄ-ում հաջողությամբ լայնամասշտաբ փորձեր են կատարվել 10 քաղաքների միջև էքստրասենսային հաղորդակցության հաստատման ուղղությամբ<sup>8</sup>: Փորձերի արդյունքների հիման վրա եզրակացություն է առելի, որ հնարավոր է երկրագնդի

Шу В. Примочкин. Куда смотрит милиция. «Юный техник», 1990, N 2.

<sup>7</sup> Шу В. Суяков. Человек-рентген. «Гражданская авиация», 1997, N 4.

<sup>8</sup> Шу В. Парапсихология. Космос, не известный нами. «За рубежом», 1990, N 39.

տարբեր կետեր հաստատուն հիմքով իրար կապել հեռագայական կապի միջոցով:

Որոշակի ձևի էներգիա ճառագայթելու մարդու օրգանիզմի ընդունակությունը ներկայումս հաստատված է ճառագայթային դաշտի լուսանկարով. այդ երևույթը հայտնի է որպես Կիռլիանի էֆեկտ: Կառավարվող հոգեշարժությունը բացատրվում է առարկայի կողմից այնպիսի էլեկտրամագնիսական ուժի գեներացմամբ, որը կարող է տեղաշարժել կամ քայքայել որոշակի օբյեկտներ: Փորձերի հետևանքով քայքայված առարկաների հետազոտումը ցույց է տալիս, որ դրանց բեկվածքն իր տեսքով տարբերվում է ֆիզիկական ուժի ազդեցությամբ քայքայված առարկաների բեկվածքից: Նշենք նաև, որ արձանագրված է միայն կամքի ազդեցությամբ ամպերի ցրման փաստը:

*Երրորդ ուղղությունը* այն հետազոտություններն են, որոնք կատարվում են պորքերի կառավարման և կապի համակարգերի, սպառազինության, հատկապես էլեկտրոնային սարքերի վրա կենսաճառագայթումների ներգործության բնագավառում, ինչպես նաև կենսաէներգիայի արհեստական գեներատորների, ոչ նորմալ հոգեկան վիճակի ստեղծման նպատակով պորքերի անձնակազմի և բնակչության վրա ներգործող սարքավորանքի մշակումը:

80-ական թվականների վերջերին ԱՄՆ-ում կատարվել է մի փորձ, որի ժամանակ հոգեշարժության և հեռատեսման ներգործությամբ տեղի են ունեցել տեխնիկայի ու սպառազինության շարքից հանում, խանգարումներ համակարգիչների, պատահական թվերի էլեկտրոնային սովիչների ու մարտական էլեկտրոնային սարքավորումների աշխատանքում: Փորձի արդյունքները հաստատել է մի անշահագրգիռ հանձնաժողով: Նման փորձեր կատարվել են նաև ԽՍՀՄ-ում և տվել են դրական արդյունքներ:

Բավարար հիմքեր կան պնդելու, որ իրոք կատարվել են հետազոտություններ՝ կապված այնպիսի սարքավորանքի

ստեղծման հետ, որն ի վիճակի է տարածության վրա մարդկանց պարտադրել որոշակի վարքագիծ:

Վերջին՝ *չորրորդ ուղղությունը* ներառում է բնական և արհեստական վրտանգավոր կենսաճառագայթումների հայտնաբերման ու վերահսկման համակարգերի, ինչպես նաև դրանցից ակտիվ և պասիվ պաշտպանության եղանակների մշակումը: Առայսօր մարդկանց հոգեկանի, առավել խոցելի տեղեկության և ռազմական սարքավորանքի պաշտպանության կապակերպման ժամանակ լավ արդյունքներ են տալիս էքստրասենսային ընկալումը, հեռատեսումը և պայծառատեսումը:

Ի դեպ, ԱՄՆ-ի նախագահներին այդպիսի ներգործությունից պաշտպանելու նպատակով վաղուց գործում է հոգեէներգետիկ-կենսաբարոյագետների ծառայությունը: Ռեյգանին պահպանում էին 12 այդպիսի մասնագետներ, Բուշին՝ 6, Բիլնտոնին՝ փոքր-ինչ ավելի: Նշենք նաև, որ ՌՆՀՁ՝ Ստավրոպոլի կապի բարձրագույն ուսումնարանում արդեն ստեղծված է մի սարք, որը վերահսկում է արտաքին ներգործությունները՝ դրանց ազդեցության աստիճանի գնահատմամբ (արագ կենսաբանական ռիթմերի վերահսկում): Դա, հայտնի տեխնիկական լուծումներից բացի, կարևոր է մասնավորապես ՌՆՀՁ կառավարման կետերի օպերատորների կողմից հրթիռների արձակման վերաբերյալ չիրահանված գործողությունները կանխելու համար:

Այսպիսով՝ կան փաստեր, որոնք վերկայում են պսիխոտրոնային զենքի գոյությունը, թեև նրա հնարավորությունները դեռևս լիովին պարզված չեն: Միևնույն ժամանակ շարունակվում են մարդու էքստրասենսային ընդունակությունների վարգայման տեխնիկայի մշակումը և յուրացումը:

Չարգայած պետություններում մշակվում են զինված պայքարի սկզբունքորեն նոր միջոցներ՝ «ոչ մահաբեր տեխնոլոգիաներ»: Խոսքը վերաբերում է զենքի այնպիսի համակարգերի ստեղծ-

մանը, որոնք կարող են շարքից հանել հակառակորդի մարտական ներուժը, արգելակել նրա հարձակողական գործողությունները, խոցել նրա մարտավարական համակարգերը և ընտրողաբար ոչնչացնել ռապիդարական նշանակություն ունեցող օբյեկտները՝ վնաս չսպառնառեղով կենդանի ուժին, նյութական միջոցներին և շրջակա միջավայրին<sup>9</sup>:

Առաջարկվող նոր տիպի գեներերը կարելի է բաժանել երեք դասի՝

— թշնամու պինվորների չեզոքացման միջոցներ,

— բանակի ինֆրակառուցվածքը և հանդերձանքը շարքից հանող քիմիական և կենսաբանական միացություններ,

— «էլեկտրոնային պատերազմի» վարման միջոցներ:

*Առաջին դասին* պատկանում են՝ հատուկ մշակված հորոգրամներն ամպերի վրա պրոյեկտող միջոցները (այդ հորոգրամները բարոյալքում են հակառակորդի պինվորներին՝ ընկճվածություն, վախ, տարածական կողմնորոշման կորուստ առաջ բերելով նրանց մեջ), վայր գցող, բայց չսպանող գնդակները (ավազապարկիկների ձևով), քիմիական աերոպոլները և ինֆրաձայնի գեներատորները, լազերային հրացանները, կուրայնող արկերը, «շոկային» նռնակները, քնաբեր միջոցները<sup>10</sup>: Մշակված են նրռնականետների համար լազերային արկեր, որոնց շլացուցիչ գործողությունն ուղղված է բոլոր կողմերը: «Շոկային» ազդեցության նռնակները համատեղում են շլացուցիչ և խլացուցիչ էֆեկտները: Պայթեղով՝ այդ նռնակներն առաջացնում են պայթյունի թնդյունով ուղեկցվող փայլատակում և որոշ ժամանակով «նոկաուտի» են ենթարկում հակառակորդի կենդանի ուժը:

<sup>9</sup> Այդ մասին տես նաև՝ *Ռ. Ա. Ղազարյան, Ձեռքի ոչ ավանդական տեսակների մշակման հետանկարների համառոտ տեսություն*: «ՀԲ», 1996 թ., հմ. 1:

<sup>10</sup> *Shu A. Жилев. Гуманная такая война.... «Комсомольская правда», 5 января 1996 г.*

Ինֆրաձայնի գեներատորի կիրառումը (սովորաբար 6—19 Հց հաճախականությունների տիրույթում) առաջացնում է ծովախտ, փսխում, գլխապտույտ, սպազմ, կողմնորոշման կորուստ, քանի որ երբ ինֆրաձայնի հաճախականությունը մոտ է լինում մարդու օրգանների տատանման սեփական հաճախականությանը, առաջանում է ռեզոնանս, որի հետևանքով օրգաններն սկսում են թրթռալ: Ինֆրաձայնի աղբյուրներ են բլնության այնպիսի երևույթները, ինչպես ամպրոպները, փոթորիկները, երկրաշարժերը, ուժեղ քամիները, ինչպես նաև տարբեր պայթյուններ, տիեզերական թռիչքները և այլն: Ինֆրաձայնը կարող է տարածվել հսկայական հեռավորությունների վրա:

Հանգստության պայմանում և քնկոտություն են առաջացնում քնաբեր դեղորայքները՝ համատեղված կրող նյութի՝ մեթիլսուլֆոբսիդի հետ, որը հեշտությամբ ներթափանցում է մաշկի և արյան միջոցով:

Կան և ավելի արտառոտ տեխնոլոգիաներ: Այս պնքն ստեղծվել է ամերիկյան միջուկային մարտագլխիկները արձակման հորանցքերում ահաբեկիչների գրավումից պաշտպանելու համար, քանի որ դրանց պաշտպանությունը առանձնապես բարդ գործ է պայթուցիկ նյութերի և հրավենի կիրառության բացառման պատճառով: Այս նպատակով առաջարկվում է երկու տեսակի փրփուր: Առաջինը գերսոսնձիչ է. օդի հետ շփվելով՝ այն ծածկում է բոլոր առարկաները մի շերտով, որը նման է իրիս կոնֆետը հիշեցնող հալած կարամելի: Մյուս տեսակն ընդունում է օձառի շատ խիտ պղպջակների հոծ վանգվածի տեսք, որը ահաբեկիչներին զրկում է տեսնելու և լսելու հնարավորությունից, խանգարում է շարժվելու<sup>11</sup>:

*Երկրորդ դասին* պատկանում են այնպիսի նյութերը, որոնք խոչընդոտում են կամուրջներին, ափեպրին մոտենալը, ինչպես նաև շարժումը ճանապարհին:

<sup>11</sup> *Shu H. Хоружий. Неспиральное оружие. «Московские новости», 1994, N 47.*

րով, շարքից հանում են ռադիոէլեկտրոնիկան, օպտիկան, շարժիչները, անհատական և կոլեկտիվ պաշտպանության ժամանակակից միջոցները, փոխում են վառելանյութի բաղադրությունը, առաջացնում են ավիացիոն տեխնիկայի քայքայում:

Կան նյութեր (ցիանաքրիլատային սոսինձներ), որոնք սրահատեխնիկան և փոխադրամիջոցները սոսնձելով գամում են ճանապարհին կամ վերջինս այնքան սայթաքուն են դարձնում (տեֆլոն), որ ցանկացած շարժում դառնում է տեղապտույտ: Նույն նպատակին են ծառայում նաև ցանցերը, մետաղյա ցանցերը՝ տանկերի և այլ շարժական տեխնիկայի համար, կոտրից պատրաստվածները՝ կենդանի ուժի համար: Գրանք համապատասխան նշանակետին իջեցվում են բեռնարկներով, որոնք իրենց չափերով հազիվ գերազանցում են կալաբարի (սողա) տուփերը:

Այլ տեխնոլոգիաներ, օրինակ՝ գերուռաիչ նյութերը (ֆտործարիրային թըթու), որոնք «լափում» են մետաղը, կառուցուկը, պլաստիկ նյութերը, բետոնը, ապակին, կարող են շարքից հանել ոչ միայն սրահատեխնիկան ու կառույցները, այլև գործնականում ամբողջ գոյություն ունեցող տեխնիկան:

Մշակվել են այրման արգելաններ (ինգիբիտորներ): Եթե այդպիսի նյութը խառնվի բենզինին, ապա վերջինս կդառնա չայրվող կամ այնքան մածուցիկ, որ կխցանի գազատարը (կարբոնաթուր): Բենզինը տարրալուծելու նպատակով կարող են կիրառվել նաև որոշ մանրէներ, որոնց «ազգակիցները» կիրառվում են նավթատար նավերի վթարներից հետո ծովափերում նավթի մնացորդները վերացնելու համար:

*Երրորդ դասն* ընդգրկում է տեղեկության վիրուսները, էլեկտրամագնիսական թրթռումները, բարձր հոսրության միկրոալիքները, ստորբացույցները, ուլտրաձայնային զենքը:

«Երկրաֆիզիկական պատերազմ» տերմինը նշանակում է ռազմական նպատակներով ցանկացած այնպիսի միջոց-

ների կիրառում, որոնք կարող են առաջ բերել երկրի կեղևում, ջրոլորտում և մթնոլորտում ընթացող որոշ ֆիզիկական պրոցեսների փոփոխություն<sup>12</sup>:

«Երկրաֆիզիկական պատերազմ» վարման նախագծերով նախատեսվում են արհեստական երկրաշարժեր, բևեռային սառցածածկույթի տարածում միջին լայնությունների վրա, փոթորիկների ուղղության փոփոխում, ցունամիի տիպի ավերիչ մակընթաց ալիքների ստեղծում, ծովային հոսանքների փոփոխում կլիմայական կործանարար հետևանքներով, հրաբուխների վերակտիվացում, օվկիանոսի ֆիզիկական և քիմիական բնութագրերի փոփոխում, որոշակի տարածաշրջաններում ջերմակարգի փոփոխում: Վերջինս կատարվում է մթնոլորտի վերին շերտերում այնպիսի նյութերի ցրումով, որոնք կլանում են արևի ճառագայթները կամ երկրագնդի մակերևույթից դեպի տիեզերք անդրադարձվող ջերմությունը, ինչի հետևանքով կարող են առաջանալ երկրային մակերևույթի տեղական գերտաքացում կամ գերսառեցում և օդոնային շերտում հատուկ նյութերի (օրինակ՝ բրոմի միացությունների) աղդեցությամբ «պատուհաններ», որոնցով ամբողջ տարածաշրջաններ կարող են ենթարկվել Արեգակի կոշտ ուլտրամանուշակագույն ճառագայթման, և այլն: Կալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Մակդոնալդը, ԱՄՆ-ի սենատի հանձնաժողովի նիստում թվարկելով այս բոլոր նախագծերը, համարում է, որ առայժմ միակ անհնարինը երկրի առանցքի այնպիսի փոփոխումն է, որով կտեղաշարժվեն կլիմայական գոտիները<sup>13</sup>:

«Էկոլոգիական պատերազմը» այնպիսի գործողությունների համախումբ է, որոնք ուղղված են շրջակա միջավայրի, կենսապահովող կենդանական ու

<sup>12</sup> Տես «Проблемы метеорологической и геофизической войны и способы их ведения». Научно-технический сборник «Военная техника и экономика», серия «Вооружение и техника сухопутных войск», вып. 1, 1975.

<sup>13</sup> Տես Ю. А. Школенко. Философия, экология, космонавтика. М., 1983.

բուսական աշխարհների ոչնչացմանը<sup>14</sup>: Իր էությունը, վարման եղանակներով և հետևանքներով «էկոլոգիական պատերազմը» «երկրաֆիզիկական պատերազմի» հիմնական տարրն է:

«էկոլոգիական պատերազմի» վարման առավել լայն տարածում գտած միջոցներից են հերբիցիդները (կրկնակի կիրառման միջոցներ): Դրանց հիմնական վանգվածը կազմում են դեֆոլիանտները, որոնցով, հակառակորդի պորամաների տեղաշարժի քողպերծման նպատակով, ոչնչացվում էր ջունգլիների սաղարթածածկույթը: Հերբիցիդների վանգվածային կիրառության էկոլոգիական հետևանքներն արտահայտվում են ամենից առաջ այն բանում, որ անտառների ոչնչացմամբ աղքատանում է կենդանական աշխարհը, փոփոխվում է ջրակարգը և սաստկանում է ողողամաշումը (էրոզիա):

«էկոլոգիական պատերազմի» վարման նշանակալից միջոցներից են արհեստականորեն առաջ բերվող մի շարք մթնոլորտային երևույթներ՝ փոթորիկ, բուք, պտուտահողմ, ինչպես նաև տեղատարափ անձրևներ և առատ ձյունատեղում: Ռազմական նպատակներով եղանակի և կլիմայի փոփոխման տարբեր միջոցների կիրառումը մտնում է «**օդերևութաբանական պատերազմ**» հասկացության մեջ: Նման կարգի պատերազմը «էկոլոգիական պատերազմի», հետևաբար և «երկրաֆիզիկական պատերազմի» մի բաղկացուցիչ մասն է: Նշենք, որ լեռնաբլրային ռելիեֆի պայմաններում հաճախակի և առատ տեղումների արհեստական խթանումը հանգեցնում է գետերում ջրի մակարդակի կտրուկ բարձրացման, ամբարտակների խորտակման և հսկայական ցանրատարածությունների հեղեղման, բնակավայրերի ավերման: «Օդերևութաբանական պատերազմը» ռազմական տեսակետից առավել գրավիչ է համարվում, քանի որ ունի երկու կարևոր հատկանիշ. այն հեշտությամբ կարող է վարվել

գաղտնի և չի պահանջում մեծ ծախսեր:

Եղանակը և կլիման այնպիսի ակնհայտ գործոններ են, որոնք ազդում են բոլորների մարտական գործողությունների վրա: Ռազմական արվեստի պատմությունից հայտնի են մեծ թվով օրինակներ, երբ բանակները և նավատորմները այդ գործոններից օգտվել են ինչպես ռազմավարական, այնպես էլ օպերատիվ-մարտավարական մասշտաբներով: Վերջին ժամանակներս, կապված եղանակի և կլիմայի արհեստական փոխման բնագավառում տարվող հետազոտությունների հետ, պատերազմում օդերևութաբանության նշանակությունն էլ ավելի է մեծացել:

ԱՄՆ-ում վիետնամական պատերազմի տարիներին մշակվեց քիմիական մի նոր հակազոգակ, որն արդյունավետ կերպով ներգործում է տաք շերտավոր ամպերի վրա. այն առաջացնում է թրթրվային հատկություններով անձրև, որը կարող է վնասել ՌՏԿ-ների ԶԿՀ-ների ուղղորդման կայանների մետաղա մասերը, տանկերը, բեռնատար մեքենաները և այլն: Հետազոտություններ են տարվում կայծակների և կարկուտի, ինչպես նաև փոթորիկների ավերիչ ուժի թուլացման ուղղությամբ: Գրանց նպատակն է մարտական տեխնիկայի վնասումների նվազեցումը և օդանավակայանների ու նավահանգիստների շրջանում մառախուղի ցրումը:

Շարադրվածի հիման վրա կարելի է հանգել այն եզրակացության, որ գիտության և տեխնիկայի վարգապումը հնարավոր է դարձնում եղանակի ու կլիմայի արհեստական փոփոխման գործուն միջոցների և եղանակների ընդլայնումը «օդերևութաբանական պատերազմի» վարման տարբեր նախագծերի տեխնիկական իրականացման համար, և դա, ամենայն հավանականությամբ, տեղի կունենա մոտ ապագայում: Նշենք նաև, որ ցանկացած համաձայնագրեր, պայմանագրեր կսպիչ դեր ունեն հիմնականում միայն խաղաղ ժամանակ: Ռազմական բախման դեպքում իրավիճակը կարող է արմատապես փոխվել:

<sup>14</sup> Shu «Проблемы метеорологической и геофизической войн и способы их ведения».

Աճել է հետաքրքրությունն այն հետազոտությունների նկատմամբ, որոնք տարվում են կենսաբանության ու քիմիայի սահմանամերձ տիրույթում: Այդ հետազոտությունների շնորհիվ նախադրյալներ են ստեղծվում մի նոր փնտհանումների կենսաբանական գեներմալ մշակման համար, մի կենսաբանական միջավայրի արգելման վերաբերյալ պայմանագրերը: Մեծ նվաճումներ կան կենսաառեխնությունների և գենային ճարտարագործության բնագավառներում:

Քաղաքային արագացվել են անբուսաբույս միացությունների մշակման և սպառազնայինության մեջ կիրառման ուղղությամբ տարվող աշխատանքները: Այդ միացություններն օժտված են էլեկտրամագնիսական ճառագայթման լայն սպեկտրում խանգարումներ առաջացնելու հատկությամբ, իսկ այդ ճառագայթումը կիրառվում է հետախուզության միջոցներում և կենսի կառավարման հա-

մակարգերում: Կատարելագործվում և վերջնամշակվում են սպառազնայինության մեջ արդեն եղած անբույսային հակազդեցության տեխնիկական միջոցները, և մշակվում են դրանց նոր՝ ավելի արդյունավետ տեսակներ, ստեղծվում են օբյեկտների անհատական և կոլեկտիվ պաշտպանության համար անբույսային պատվարների ու էկրանների արագ դրման ավտոմատացված միջոցներ և համակարգեր, ներդրվում են սպառազնայինության ու տեխնիկայի նկատելիությունը նվազեցնող ռադիոկլանող նյութեր և պաշտպանական փրփուրներ<sup>15</sup>:

Երափակելով մեր խոսքը՝ նշենք, որ թվարկված միջոցների ու նյութերի մեծամասնության մշակումն ու ստեղծումը ներկայումս կամ իրագործվել են, կամ տեխնիկապես իրագործելի են:

<sup>15</sup> Shu C. B. Петров. Радиационная, химическая и биологическая защита войск... Проблемы и пути их решения. «Военная мысль», 1994, N 45.

ՄՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ\*

Շ. Ա. ԹԱՓԱԼՅՅԱՆ, գնդապետ

Ներկայումս Կորեայի հագեցվածությունը բազմազան մարտական տեխնիկայով և սպառազնայինությամբ հանգեցնում է ժամանակակից պատերազմների բնույթի արմատական փոփոխության: Պատերազմի հենց սկզբից պայքար է մղվում ռազմավարական նախաձեռնության համար: Պատերազմի սկզբնական շրջանում փնտհանումներ կարևորագույն խնդիրն է հավառակորդի հան-

կարծակի հարվածի կասեցումը և պատասխան ջախջախիչ հարվածը: Այս խնդրի կատարումը հնարավոր է միայն Կորեայի բացառիկ բարձր մարտական պատրաստության դեպքում: Մարտական պատրաստության ապահովման խնդիրը ներկայիս պայմաններում դրվում է նորովի: Նախկինում օրերի և ամիսների փոխարեն այժմ դրա ժամկետը չափվում է ժամերով, րոպեներով, իսկ առանձին դեպքերում՝ նույնիսկ վայրկյաններով: Դրա հետևանքով Կորեայի հագեցվում են ավտոմատացման այնպիսի միջոցներով, որոնք նվազագույնի են հասցնում ձեռքի աշխատանքը: Չորքերի կառավարման գործում շտաբների օպերատիվությունը էապես աճում է՝ դրանց աշխատանքում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների օգտագործմամբ:

\* Շարունակելով սպառազնային ռազմագիտական տերմինաբանության մշակման բարդ, բայց կարևոր աշխատանքը՝ խմբագրությունը հեղինակի հետ համատեղ փորձ է արել սույն հոդվածում, որը հագեցած է բազմաթիվ ռազմատեխնիկական տերմիններով, տարու հայերեն տերմինների համակարգը՝ գիտական տեքստում դրանց կիրառմամբ: Գլոսվար հասկանալի տերմիններն իրենց թարգմանություններով, ինչպես նաև որոշ տերմինների կիրառության վերաբերյալ պարզաբանումները տես «Համարի բառարան» հոդվածում: *Իմը:*

որոնց վրա են դրվում ստացվող տեղեկությունների մշակումը, լուծումների տարբերակների ու օպերատիվ-մարտական հաշվարկների նախապատրաստումը և այլն:

Ռազմական տեխնիկայի բացառիկ բարդության, նրա աշխատանքի ծանր պայմանների, գորքերի մշտական մարտական պատրաստության ապահովման անհրաժեշտության բերումով առանձնահատուկ նշանակություն է ստանում սպառապինության և ռազմական տեխնիկայի գրագեռ շահագործման կազմակերպման հարցը:

Սույն հոդվածում մենք նպատակադրվել ենք անձնական փորձի տեսանկյունից վերլուծելու տարբեր ձեռնարկներում, հրահանգներում, գիտական գորականության մեջ առկա համապատասխան դրույթները և ներկայացնելու առաջարկություններ, որոնք մեր կարծիքով կարող են նպաստել սպառապինության ու ռազմական տեխնիկայի շահագործման ճիշտ կազմակերպմանը և խաղաղ ու պատերազմական պայմաններում դրանց ռացիոնալ կիրառմանը:

Խաղաղ ժամանակ սպառապինության և ՌՏ-ի շահագործումը կազմակերպվում է մարտական պատրաստման պրլանների կատարման և գորամասերի ու ստորաբաժանումների տնտեսական կարիքների բավարարման համար: Որպեսզի այդ ընթացքում մշտապես ապահովվի սպառապինության բարձր մարտունակությունը, դրա օգտագործումը կանոնակարգվում է մոտոռեհտրսի ծախսման տարեկան նորմերով և իրականացվում է խստորեն ըստ պլանի: Պատերազմի ժամանակ սպառապինության և տեխնիկայի շահագործումը կատարվում է ի շահ մարտում հաջողության ձեռքբերման: Այդ նկատառումով մեքենաների օգտագործման և սպասարկման կարգը որոշվում է հրամանատարների կողմից՝ ըստ կոնկրետ մարտական խնդիրների և ստեղծված պայմանների ու վերադաս պետերի ցուցումներին համապատասխան: Մարտական գործողությունների վարման ժամանակ մոտոռեհտրսները ծախսվում են ըստ պահանջմունքի:

1. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատրաստվածքի շահագործական հատկությունները բնութագրում են նրա ըստ նախանշանակման արդյունավետ մարտական կիրառման հնարավորությունները:

Սպառապինության և մարտական տեխնիկայի հիմնական շահագործական հատկություններն են.

- հարմարվածությունը տարբեր պայմաններում շահագործման,
- շահագործական նյութերի ծախսման խնայողականությունը,
- սպասարկելիությունը,
- անձնակազմի աշխատանքի հարմարությունը (էրգոնոմիականությունը),
- հուսալիությունը:

Շահագործական հատկությունները ակտիվ են սպառապինության և տեխնիկայի մարտական հնարավորությունների մի շարք ցուցանիշների վրա:

**Հարմարվածությունը տարբեր պայմաններում շահագործման** սպառապինության և տեխնիկայի այն հատկությունն է, որը դրսևորվում է որպես կոնկրետ պայմաններում շահագործման համար պատրաստ վիճակի հասցվելու ունակություն:

Տեխնիկական միջոցները հերթապահության վիճակից կիրառման վիճակ փոխադրելու համար պահանջվում է կատարել նախապատրաստական աշխատանքներ, որոնց տևողությունը կամ տրված ժամանակամիջոցում կատարման հավանականությունը կախված են տեխնիկական միջոցների առանձնահատկություններից (աշխատանքային բանելակարգի մեջ մտնելու արագությունից, կառավարման ու վերահսկման մարմինների կառուցվածքից և տեղաբաշխումից, սարքինացման և կարգավորման պահանջմունքներից, ավտոմատիկայի առկայությունից) և պատրաստումն իրականացնող անձնակազմի որակավորումից ու վարժվածությունից: Տեխնիկական միջոցների նախապատրաստելիությունը բարելավվում է ինչպես կոնստրուկտորական եղանակով՝ նոր տեսակների ստեղծմամբ ու եղած-

ների կատարելագործմամբ, այնպես էլ շահագործման ընթացքում տեխնիկական միջոցառումների իրականացման միջոցով: Կիրառման համար մեքենաների նախապատրաստման ժամանակի կրճատումը նպաստում է մարտական պատրաստության բարձրացմանը:

**Շահագործական նյութերի ծախսման խնայողականության** որոշվում է մեքենայի ընթացապաշարը մինչև հերթական լիցքավորումը: Մեքենաների վաւորող մինչև հերթական լիցքավորումը պայմանավորված է վառելիքային բաքերի տարողությամբ, վառելիքի ծախսի վրա ներգործող կառուցային գործոններով, շարժման պայմաններով, հիմնական ագրեգատների և մեխանիզմների տեխնիկական վիճակով, վարորդների որակավորմամբ:

Մեքենաների վառելիքային խնայողականությունը գնահատվում է միավոր վաւորողին վառելիքի  $Q_{վ}$  միջին ծախսով՝

$$Q_{վ} = \frac{Q_{վ}}{G \cdot S} \quad (1)$$

որտեղ  $Q_{վ}$ -ն վառելիքի ծախսվելիք պաշարն է,  $G$ -ն՝ մեքենայի զանգվածը,  $S$ -ը՝ մեքենայի վաւորողը, կմ:

$Q_{վ}$ -ի մեծությունը հիմնականում կախված է շարժման տեսակից, կարգավորումից, փոխադրողակի ու ընթացյամասի կառուցվածքից: Որքան քիչ է վառելիքի ծախսը, այնքան էժան է տեխնիկայի շահագործումը: Իսկ մեքենայի վառելիքի ծախսը հիմնականում պայմանավորված է շարժման նկատմամբ առաջացող դիմադրությամբ: Տանկերի համար վառելիքի ծախսը յուրաքանչյուր կմ-ի վրա կարող է փոխվել 1,5—1,7 լ/կմ-ից (բետոնապատ խճուղով շարժման դեպքում) մինչև 5—6,5 լ/կմ (ուղեխաղանքների, ձյան հաստ շերտով ծածկված խոպանի դեպքում): Նույնանման պայմաններում ՀՄՄ-ի (հետևապորի մարտական մեքենա) համար վառելիքի ծախսը մոտ 2 անգամ պակաս է:

Յուղի ծախսը նույնպես կարող է սահմանափակել տանկի ընթացապա-

շարը: Կախված տեխնիկական վիճակից՝ Վ-2 տիպի շարժիչը ժամում 0,5—0,8-ից մինչև 7 լ յուղ է ծախսում, ինչը հանգեցնում է տանկի ընթացապաշարի՝ ըստ յուղի ծախսի փոփոխման 120-ից մինչև 1000 կմ սահմաններում:

Չսպանակի նստման հետևանքով այն ճնշման նվազման դեպքում, որի առկայությամբ բալվում է տանկի շարժիչի սառեցման համակարգի շոգեկափույրը, անհրաժեշտ է լինում 5—6 ժամը մեկ այն համարել սառեցնող հեղուկով:

Մեքենայի միջնորոգումային ժամկետում շահագործական նյութերի նորմալ ծախսը ապահովվում է շարժիչի աշխատանքով օպտիմալ բանեղակարգում, համակարգերի հերմետիկության ժամանակին ստուգմամբ, շահագործական անհրաժեշտ կարգավորումների կատարմամբ և օդամաքիչների ճիշտ սպասարկմամբ, ինչպես նաև տարբեր պայմաններում մեքենայի վարման հմտությամբ:

**Սպասարկելիությունը** մեքենայի այն հատկությունն է, որն արտահայտվում է տեխնիկական սպասարկման նկատմամբ մեքենայի պահանջմունքով ու հարմարվածությամբ:

Մեքենաների սպասարկման *սյարբերականությունը* և *աշխատատարությունը* կախված են նրանց շահագործական տեխնոլոգիականությունից: Շահագործական տեխնոլոգիականության ցուցանիշ է ըստ նախանշանական օգտագործման մեկ ժամվա դիմաց սպասարկման վրա ծախսված ժամանակը: Տանկերի և ՀՄՄ-ների համար այդ ցուցանիշը հավասար է 0,3—0,5-ի: Մեքենաների տվյալ հատկության ցուցանիշը սպասարկման  $C$  տեսակարար աշխատանակությունն է, որը որոշվում է բոլոր տեսակների տեխնոլոգիական սպասարկումների ընթացքում մեքենայի պարապորդի  $T$ , գումարային ժամանակի և  $S_{տ}$  միջնորոգումային ռեսուրսի հարաբերությամբ.

$$C = \frac{T_o}{S_{տ}} \quad (2)$$

Համաձայն գոյություն ունեցող տե-



սակետների, թրթուրավոր մեքենաների սայասարկման տեսակարար աշխատունակությունը մարտական իրադրություններում չպետք է գերազանցի 1—1,5 Ժ-ից՝ 100 կմ, իսկ անհիվավոր մեքենաների համար՝ 2—2,5 Ժ-ից՝ 1000 կմ վազուրդի նկատմամբ հաշված:

**Անձնակազմի աշխատանքի հարմարությունը** մեքենայի այն հատկությունն է, որով գնահատվում է մարտական և մեխանիկական հնարավորությունների լրիվ օգտագործման, անվտանգության միջոցառումների իրականացման և հիգիենայի նորմերի պահպանման համար օպտիմալ պայմանների ստեղծման տեսանկյունից անձնակազմի հետ փոխներգործման համար նրա հարմարվածության աստիճանը: Երկարատև երթերի ընթացքում անձնակազմը ենթարկվում է ֆիզիկական և նյարդային մեծ ծանրաբեռնումների: Օրինակ՝ 300 կմ երթի ժամանակ տանկի մեխանիկ-վարորդը կարող է կորցնել 2—4 կգ քաշ: Մեկօրյա չվերթի վերջում հոգնածության, ուռադրության ցրման, օրգանիզմի հակազդման դանդաղման հետևանքով նա երկու անգամ ավելի վատ է արձագանքում լուսային գրգռչին: Կտրտված տեղանքով շարժվող տանկում 3—4 ժամվա աշխատանքից հետո նշանառուի հակազդումը մի քանի անգամ վատթարանում է:

Փորձը ցույց է տալիս, որ մեքենայում աշխատանքի պայմանները պետք է համապատասխանեն հետևյալ պահանջներին.

— նստոցները պետք է լինեն բավականաչափ փափուկ և ընձեռեն անձնակազմի անդամների հասակին հարմարեցման հնարավորություն,

— աղմուկի մակարդակը չպետք է գերազանցի 100—110 դԲ-ից,

— լծակների վրա ճիգը պետք է լինի 10—15 կԳ-ից, իսկ ոտնակների վրա՝ 30—35 կԳ-ից ոչ ավելի,

— օդում ածխածնի օքսիդի պարունակությունը չպետք է գերազանցի 0,2 մգ/լ-ից,

— անձնակազմի տեղաբաշխման

բաժանմունքներում ջերմաստիճանը պետք է լինի 5—25°C,

— այն գերբեռնվածությունը, որն ստեղծվում է մեքենայի իրանի ուղղաձիգ արագացումների հետևանքով, թույլատրվում է մինչև 2-3 ց և միայն առանձին արգելքների հաղթահարման դեպքում՝ մինչև 4-5 ց,

— մեխանիկ-վարորդի շրջայնման անկյունը ցանկալի է, որ լինի 180° աստիճանին մոտ, իսկ անձնակազմի մյուս անդամներինը՝ 360°:

**Հուսալիությունը** օբյեկտի հատկությունն է ժամանակի ընթացքում պահպանելու տրված սահմաններում բոլոր այն պարամետրների արժեքները, որոնք բնութագրում են տրված բանեկարգում և կիրառման, տեխնիկական սպասարկման, նորոգման ու պահման պայմաններում պահանջվող գործառույթների կատարման ընդունակությունը: Հուսալիությունը բարդ հատկություն է, որը ներառում է անխափանությունը, երկարակեցությունը, նորոգապիտանիությունը և պահպանելիությունը:

*Անխափանությունը* որոշ ժամանակահատվածում կամ որոշ աշխատատևության ընթացքում աշխատունակությունը անընդհատ պահպանելու հատկությունն է:

*Խափանումը* օբյեկտի աշխատունակության խախտումն է:

*Անխափան աշխատանքի P(L) հավանականությունը* այն է, որ տրված վազուրդի սահմաններում մեքենայի որոշակի տեսակի տեխնիկական խափանում չի առաջանում: Վիճակագրորեն այն գնահատվում է L վազուրդի վերջում՝ N(L) և սկզբում՝ N<sub>0</sub> եղած աշխատունակ տարրերի թվերի հարաբերությամբ.

$$P(L) = \frac{N(L)}{N_0} = \frac{N_0 - \sum n_i}{N_0}, \quad (3)$$

որտեղ n<sub>i</sub>-ն L վազուրդի ընթացքում խափանված տարրերի քանակն է:

L վազուրդի ընթացքում օբյեկտի

խափանման  $Q$  հավանականություն (անհուսալիություն) կոչվում է նրա անխափան աշխատանքի պատահույթի հակադիր երևույթը, այսինքն՝

$$Q(L) = 1 - P(L): \quad (4)$$

Երկարակեցությունը օբյեկտի հատկությունն է՝ տեխնիկական սպասարկման և նորոգման հաստատված համակարգի սահմաններում պահպանելու իր աշխատունակությունը մինչև սահմանային վիճակին հասնելը: Սահմանային վիճակը օբյեկտի այնպիսի վիճակն է, որի դեպքում նրա հետագա կիրառումն ըստ նախանշանակման թույլատրելի չէ կամ նպատակահարմար չէ: Երկարակեցությամբ բնորոշվում է տեխնիկական ռեսուրսը:

Նորոգապիտանիությունը օբյեկտի հարմարվածությունն է խափանումների, վնասվածքների կանխարգելմանը, դժբախտ պատճառների հայտնաբերմանը և նորոգումների ու տեխնիկական սպասարկման միջոցով վերացմանը:

Պահպանելիությունը օբյեկտի հատկությունն է մշտապես պահպանելու սարքին և աշխատունակ վիճակը պահման ընթացքում և պահումից ու (կամ) փոխադրումից հետո: Գիրեկտիվ եղանակով այն սահմանվում է 15 տարուց ոչ պակաս:

Խափանումների հոսքի  $\omega$  պարամետրը կամայական աշխատատևության ընթացքում վերանորոգվող օբյեկտի խափանումների թվի հարաբերությունն է այդ աշխատատևության արժեքին: Զրահատանկային տեխնիկայի օբյեկտների անխափանության գնահատման ժամանակ  $S$  վազուրդն ընդունվում է հավասար 1000 կմ-ի.

$$\omega = \frac{m_{\Sigma}}{N \cdot S}, \quad (5)$$

որտեղ  $m_{\Sigma}$ -ն խափանումների ընդհանուր թիվն է  $S$  հազար կմ վազուրդի դեպքում,  $N$ -ը՝ դիտարկվող այն մեքենաների քանակությունը, ըստ որոնց գնահատվում է  $\omega$ -ն:

Գործնական հաշվարկներում վերականգնման  $T_{\text{վ}}$  միջին ժամանակը

ընդունվում է որպես մեկ խափանումը վերացնելու համար անհրաժեշտ ժամանակ և որոշվում է հետևյալ բանաձևով.

$$T_{\text{վ}} = \frac{\sum_{i=1}^m T_{\text{վ}i}}{m_{\Sigma}}, \quad (6)$$

որտեղ  $T_{\text{վ}i}$ -ն  $i$ -րդ խափանման վերացման տևողությունն է՝ արտահայտված ժամերով:

Մեքենայի համար միջին հիմնական վերանորոգման համար հաստատված  $S_{\text{միջ}}$  ռեսուրսը սահմանվում է դիրեկտիվ եղանակով: Այս ցուցանիշն ունի ֆիքսված արժեք:

Հանգույցի կամ մեքենայի ագրեգատի  $S_{\text{միջ}}$  միջին ռեսուրսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$S_{\text{միջ}} = \frac{\sum_{i=1}^m S_{\text{միջ}i}}{m_{\Sigma}}, \quad (7)$$

որտեղ  $S_{\text{միջ}i}$ -ն խափանված հանգույցի միջին ռեսուրսն է՝ արտահայտված կմ-ներով:

Մեքենայի բաղկացուցիչ տարրերի պահպանելիության միջին ժամկետը բընութագրվում է որպես դիտարկվող օբյեկտների  $\tau_{\text{գ}}$  միջին ժամկետների մաթեմատիկական սպասում.

$$\tau = \frac{\sum_{i=1}^m \tau_{\text{գ}i}}{m_{\Sigma}}: \quad (8)$$

2. ՄՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԶՄԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հրթիռատրետանային սպառազինության, զրահատանկային, ավտոմոբիլային, կայի և կառավարման, ճարտարագործական և քիմիական տեխնիկայի շահագործման կազմակերպումը ներառում է հետևյալ հիմնական միջոցառումները.

ա) սահմանվում են «սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործում» հասկացությունը և շահագործ-

ման կազմակերպման հիմնական պահանջները,

բ) սահմանվում են «տեխնիկական վիճակ» և «ռեսուրսի պաշար» հասկացությունները,

գ) որոշվում են այն սկզբունքները, որոնցով պրահատանկային սպառապինությունը և տեխնիկան, ինչպես նաև ավտոմոբիլային տեխնիկան բաժանվում են խմբերի,

դ) որոշվում է խաղաղ պայմաններում մեքենաների օգտագործման կարգը:

**Տեխնիկական միջոցների շահագործումը** նրանց օգտագործումն է որևէ արդյունք ստանալու նպատակով: **Սպառազինության շահագործումը** նրա այն կենսաշրջանն է, որն ընդգրկում է սպառազինության շահագործման հանձնելը, ըստ նախանշանակման օգտագործման, պահման և փոխադրման համար սահմանված աստիճանի պատրաստության բերելը և բուև օգտագործումն ըստ նախանշանակման:

*Առաջին տեսակի տեխնիկայի* (սպառազինության այն տեսակը, որը մինչև պորամասերին հատկացվելը պահվում է բազաներում) *շահագործման* նպատակն այն է, որ տեխնիկական միջոցները երկարատև պահման ընթացքում պահպանեն իրենց սարքինությունը: Ընդամին բոլոր միջոցառումների հիմնական և տեխնիկական խնդիրն է սպառազինության և տեխնիկայի երկարակեցության պահպանումը տրված մակարդակի վրա:

*Սպառազինության պորային շահագործման* նպատակն է նրա արդյունավետ մարտական կիրառումը անսխալ կառավարման պայմաններում:

**Սպառազինության և ռազմական տեխնիկայի շահագործման հանձնում** ասելով հասկանում են նախապատրաստական աշխատանքների մի այնպիսի համախումբ, որն ընդգրկում է պատրաստումից կամ հիմնական նորոգումից հետո ստացված տեխնիկայի վերստուգումն ու ընդունումը պորամասի կողմից և նրա ամրակցումը ստորաբաժանմանը, անձնակազմին, հաշվարկին, մեխանիկվարորդին կամ վարորդին:

Սպառազինությունը և ռազմական տեխնիկան շահագործման են հանձնվում պորամասում նմուշի և շահագործական փաստաթղթերի ստացումից ոչ ուշ, քան երեք օր հետո: Սպառազինության տվյալ նմուշի ընդունումից հետո հաշվարկի, անձնակազմի պետը և ստորաբաժանման հրամանատարը լրիվ պատասխանատվություն են կրում այդ ըսպառազինության տեխնիկական վիճակի, համարվածության, ըստ ուղիղ նախանշանակման օգտագործման և շահագործման կանոնների պահպանման համար:

**Սպառազինության և ռազմական տեխնիկայի՝ ըստ հախանշանակման օգտագործման համար սահմանված մակարդակի պատրաստության բերումը և այդ վիճակում պահպանումը** ենթադրում են նրա տեխնիկական վիճակի վերստուգում, տեխնիկական սպասարկում և պորային նորոգում, որոնցով ապահովվում են բոլոր ազդեցությունների և մեխանիզմների համալիր աշխատանքը և անվտանգության պահանջների կատարումը:

Օգտագործումների միջև եղած ժամանակահատվածներում տեխնիկան հանձնվում է պահման:

**Պահումը** սարքին սպառազինության, տեխնիկայի և գույքի պահումն է հատուկ տեղերում, ինչով ապահովվում է դրանց պահպանվածությունը, սարքինությունը և սահմանված ժամկետներում պատրաստության բերումը:

Սպառազինության և տեխնիկայի պահման ժամանակ դրանց հանգույցներում և մասերում տեղի են ունենում տարբեր ֆիզիկական և քիմիական պրոցեսներ, որոնք փոխում են նրանց որակը: Ընթացող պրոցեսների արագությունը կախված է զանազան գործոններից, որոնցից գլխավորներն են շրջակա միջավայրը, պահման տևողությունը և պայմանները:

Այսպիսով՝ շահագործումը մի բարդ պրոցես է, որի արդյունքը կախված է սպառազինության և տեխնիկայի հուսալիությունից, շահագործող անձնակազմի վարժվածությունից ու որակա-

վորումից, տեխնիկական սպասարկման միջոցների արդյունավետությունից, շահագործական փաստաթղթերի որակից, շահագործման կազմակերպման մեթոդներից և այլն:

Խաղաղ ժամանակ սպառազինության և տեխնիկայի շահագործումը կատարվում է ի շահ վորքերի մարտական պատրաստության պլանի իրագործման և պետք է ապահովի:

ա) մարտական պատրաստության ծրագրի կատարումը,

բ) մտտոռեսուրսի ծախսումը օգտագործման տրված նորմերի սահմաններում,

գ) սպառազինության և տեխնիկայի համաշափ հանձնումը նորոգման և տեխնիկական սպասարկման,

դ) մարտական և շարային խմբերի սահմանված չնվազող մտտոռեսուրսի պահպանումը:

Շահագործման ընթացքում սպառազինության և տեխնիկայի տեխնիկական հնարավորությունների լիարժեք օգտագործումն ապահովվում է:

ա) սպառազինության և տեխնիկայի շահագործման պատշաճ կազմակերպմամբ,

բ) սպառազինության և տեխնիկայի աշխատանքի ու սպասարկման ճշգրիտ հաշվառմամբ,

գ) վորամասերում, ստորաբաժանումներում սպառազինության և տեխնիկայի տեխնիկական վիճակի ու պահման նկատմամբ վերադաս պաշտոնատար անձանց կողմից ժամանակին և որակյալ վերահսկողությամբ,

դ) սարքավորված հավաքակաշանների, սպասարկման մեքենայացված կայուն և շարժական միջոցների առկայությամբ,

ե) վորքերին ըստ հաստիքատախտակների ու նորմերի ռազմատեխնիկական նյութերով ժամանակին ապահովմամբ:

**Սպառազինության և տեխնիկայի տեխնիկական վիճակով** որոշվում է նըրանց պատրաստությունը ուղիղ նախանշանակմամբ օգտագործմանը:

Ժամանակակից սպառազինության և տեխնիկայի տեխնիկական առանձնահատկությունները հետևյալներն են.

ա) տեխնիկական միջոցների էական բարդությունը,

բ) ավտոմատացման բարձր աստիճանը,

գ) հագեցվածությունը ռադիոէլեկտրոնային սարքավորումով,

դ) կիրառվող միջոցների համալիր բնույթը, սպառազինության մեկ նմուշում մեխանիկական, հեղուկաբաշխական, օպտիկական, ռադիոէլեկտրատեխնիկական և այլ սարքվածքների ու համակարգերի համակցությունը,

ե) տեխնիկական միջոցներով խընդիրների լուծումը նվազագույն կարճ ժամանակահատվածներում,

զ) բարձր մարտունակության պահպանումը երկարատև հերթապահության ժամանակ:

Տեխնիկայի շահագործման ընթացքում մաշվածության, ձևախախտումների, կորոզիայի, ծերացման և վնասակար նստվածքների հետևանքով տեղի է ունենում նրա տեխնիկական վիճակի փոփոխություն:

*Մաշվածությունը* շիման հետևանքով մարմնի չափերի այնպիսի աստիճանական փոփոխություն է, որը դրսևվորվում է շիփող մակերևույթից նյութի անջատմամբ և (կամ) մնացորդային ձևվախախտումով: Մաշվածությունը կարող է ուղեկցվել կորոզիայով: Շահագործման բանեղակարգերի, տեխնոլոգիաների ժամկետների խախտման, ոչ ճիշտ պահման դեպքերում նկատվում է մանրակների և հանգույցների մաշվածության աճում, որը հաճախ հանգեցնում է ամբողջ տեխնիկական միջոցի ժամանակից շուտ շարքից դուրս գալուն կամ առանձին անսարքությունների առաջացմանը:

Սպառազինության և տեխնիկայի շահագործման (շարք մտցվելու) սկզբից ետ, ագրեգատի աշխատանքի առաջին պահից սխմում է մանրակների մաշումը: Այդ պատճառով էլ մաշվածությունը անխուսափելի և օրինաչափ երևույթ է:

Սպառազինության և տեխնիկայի

սարքինությունն այն վիճակն է, որի դեպքում նմուշը համապատասխանում է շահագործման փաստաթղթերի բոլոր պահանջներին:

*Սպառապինություն և տեխնիկայի աշխատունակությունն* այն վիճակն է, որում տվյալ համակարգը բավարարում է այն հիմնական պարամետրների վերաբերյալ սահմանված պահանջներին, որոնք բնութագրում են նախատեսված գործառնությունների նորմալ կատարումը այդ համակարգի կողմից:

Վնասված համակարգերի աշխատունակության վերականգնման համար սահմանվում են հետևյալ տեսակի նորոգումները.

— սպառապինության համար՝ ընթացիկ նորոգում (ԸՆ), միջին նորոգում (ՄՆ), հիմնական նորոգում (ՀՆ),

— երկարաժամկետ պահման սպառապինության համար՝ կանոնակարգված նորոգում (ԿՆ),

— ագրեգատների համար՝ ընթացիկ և հիմնական նորոգումներ:

Ինչ վերաբերում է միջնորոգումային ռեսուրսներին, ապա դրանք սովորաբար սահմանվում են պաշտպանության նախարարության հրամաններով:

Չորամասերում և ստորաբաժանումներում սպառապինության և տեխնիկայի շահագործումը կազմակերպվում է այնպես, որ հնարավոր լինի ցանկացած պահի մարտական գործողություններ կատարել մեծ հեռավորության վրա: Դրա համար մեքենաները պետք է ունենան այնպիսի ընթացապաշար, որը բավարար լինի մարտական խնդիրների հաջող կատարման համար:

**Ընթացապաշարը (ռեսուրսը)** այն վաւորողն է՝ արտահայտված կմ-ներով, որը մեքենան պետք է անցնի տվյալ պահից մինչև հերթական նորոգում: Այն սահմանվում է որպես մինչև հերթական միջին կամ հիմնական նորոգում նախատեսված միջնորոգումային ռեսուրսի և մեքենայի փաստացի վաւորդի տարբերություն:

*Սահմանված միջնորոգումային ռեսուրսը* այն նվազագույն ռեսուրսն է,

որին հասնելու դեպքում պրամասի հանձնաժողովը որոշում է տվյալ օբյեկտի պիտանիությունը հետագա շահագործման և սահմանում է որոշակի հավելյալ ռեսուրս կամ որոշում ընդունում այդ տեխնիկական միջոցը նորոգման ուղարկելու մասին:

Հիմնական նորոգում անցած կամ նոր պատրաստվածքի համար նախատեսված են երաշխավորված ժամկետներ, որոնք նշվում են սպառապինության տեղեկամատյանում կամ տեխնիկական վկայականում: Երաշխավորված ժամկետի ընթացքում արտադրող գործարանը կամ նորոգող ձեռնարկությունը պատասխանատու են նմուշի նորմալ աշխատանքի համար և պարտավոր են խափանման դեպքում այն վերականգնել, եթե տեղի չի ունեցել շահագործման, պահման կամ փոխադրման կանոնների խախտում:

### 3. ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԽԱՂԱՂ ԺԱՄԱՆԿ

Խաղաղ ժամանակ մեքենաները կարող են առանց նորացման երկար տարիներ լինել պորքերի սպառապինության մեջ: Քանի որ այդ տարիներին ստորաբաժանումները պեղվում են մարտական պատրաստությամբ, ապա մշտական մարտական վիճակի և չնվազող ռեսուրսի սպահովման համար բոլոր հաստիքային մեքենաները ըստ իրենց նախանշանակման բաժանվում են խմբերի (տես գծապատկերը):


Յուրաքանչյուր խմբի համար սահմանվում է շահագործման խիստ որոշակի տարեկան նորմ: Արտահաստիքային մեքենաները հանձնվում են պահման և չեն օգտագործվում:

Մեր կարծիքով առավել ընդունելի է սպառապինության և տեխնիկայի բաժանումը հետևյալ խմբերի:

**Մարտական մեքենաների խումբ**, որն ընդգրկում է մարտական և բազային մեքենաները, այն է՝

ա) *պրահատանկային տեխնիկա*՝ տանկերը, ԻՀԿ-ները (ինքնագնաց հրետանային կայանք), ՀՄՄ-ները, ՋՓԴ-ներ

ՄԵԲԵՆԱՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԽՄԲԵՐԻ



րը (կրահափոխադրիչ), ՉՀԳՄ-ները (զըրահավոր հետախուզադետքային մեքենա) և դրանց բազայի վրա ստեղծված այն մեքենաները, որոնց վրա տեղակայված են սպառազինության այլ տեսակներ, այդ թվում նաև հրամանատարական և կառավարման մեքենաները,

բ) *ավտոմոբիլային տեխնիկա*՝ այն մեքենաները, որոնց վրա տեղակայված են արձակման, հրետանային, ականանետային, գնդացրային և այլ կայանքներ, ռադիոկայանները, ռադիոտեղորոշումային կայանքները, հրետանային քարշակները, հատուկ կցանքները՝ կահավորված մարտական տեխնիկայով, կառավարման և կապի համակարգերով:

**Ուսումնամարտական խումբ**, որն ընդգրկում է մարտական պատրաստության խնդիրների լիամշակման, ինչպես նաև գործնական վարման կատարելագործման համար հատկացված մեքենաները:

**Շարային խումբ**, որն ընդգրկում է կրահատանկային սպառազինության ու տեխնիկայի տեխսպասարկման և նորոգման համար նախատեսված շարժական միջոցները, տանկային քարշակները և կոունկները, ինչպես նաև ավտոմոբիլային այն տեխնիկան, որը նախատեսված

է անձնակազմի, սպառազինության, զինամթերքի, ռազմատեխնիկական գույքի և այլ նյութական միջոցների տեղափոխման, թոշող ապարատների քարշակման ու սպասարկման, սպառազինության ու տեխնիկայի տարատեղման համար, ինչպես նաև այն մեքենաները, որոնք օժտված են հատուկ պորբերի ճարտարագործական, ճանապարհային, խողովակաշարային և այլ վորամասերի ու ստորաբաժանումների կողմից կիրառվող հաստիքային սարքավորումով ու տեխնիկայով:

**Ուսումնաշարային խումբ**, որն ընդգրկում է այն մեքենաները, որոնք ծառայում են նորոգող պորամասերի ու ստորաբաժանումների համար մասնագետների պատրաստմանը:

**Ուսումնական մեքենաների խումբ**, որն ընդգրկում է վարման և այդ մեքենաների վրա տեղակայված հատուկ սարքավորումների կիրառման ուսուցման համար հատուկ կահավորված մեքենաները:

**Տրանսպորտային մեքենաների խումբ**, որն ընդգրկում է պորամասերի կուլտուրկենցադային, բժշկական և այլ կարիքների բավարարման համար նախատեսվող մեքենաները:

Հարկ է նշել, որ մարտական ու շարային մեքենաների խմբերում պահվում

են միայն հիմնական նորոգում անցած և նոր, տեխնիկապես սարքին, նախատեսված սարքավորումներով ու պահեստամասերով համարված մեքենաները, որոնք ունեն մինչև հերթական նորոգումը չնվազած սահմանված ռեսուրս:

Ռիստմնամարտական մեքենաների խմբի մեջ սովորաբար մտնում են այն մարտական մեքենաները, որոնք ունեն առավել մեծ աշխատատևություն, թողարկման ավելի վաղ տարեթիվ և գտնվում են համեմատաբար վատ տեխնիկական վիճակում: Այդ մեքենաների օգտագործման նման սկզբունքն ապահովում է դրանց համաչափ հանձնումը նորոգման և տեխսպասարկման:

Շարային խմբի մեքենաներն օգտագործվում են զորամասերի զորավարժությունների ժամանակ:

Ըստ գործող սկզբունքների, ղեկավար փաստաթղթերի ու հրահանգների պահանջների, որոնք հաստատվում են գործնական փորձով, սպառապինության ու ռազմական տեխնիկայի ճիշտ և նպատակային կիրառման համար անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների ու պայմանների կատարումը.

— սպառապինության և տեխնիկայի օգտագործում ըստ հաստիքային նախանշանակման՝ ռեսուրսների ծախսման սահմանված նորմերի, շահագործման խմբերի և բոլոր կանոնների, ինչպես նաև անվտանգության պահանջների պահպանմամբ,

— վինամթերքի ծախսում ըստ հաստատված չափաբաժինների՝ օգտագործման հերթականության պահպանմամբ,

— սպառապինության և տեխնիկայի օգտագործում ըստ շահագործական ամսական, տարեկան և հեռանկարային պլանների,

— ստորաբաժանումներում սպառապինության ու տեխնիկայի խստագույն հաշվառում, որի տվյալները պետք է ճշտորեն համապատասխանեն սպառապինության ու տեխնիկայի փաստացի քանակությանն ու որակական վիճակին,

— սպառապինության և տեխնիկայի ընդունում ու հանձնում, դրանց ամրակցում անձնակազմին ու ստորաբաժանմանը և շարք մտնելը,

— պաշտոնատար անձանց կողմից սպառապինության ու տեխնիկայի ժամանակին ստուգապնտում,

— վառելիքաքսուքային նյութերի քանակի, որակի և ծախսման վերահսկում,

— սպառապինության ու տեխնիկայի, ծախսված հրթիռների ու վինամթերքի դուրսգրման փաստաթղթերի ճիշտ և ժամանակին ձևակերպում,

— սպառապինության ու տեխնիկայի տեղեկամատյանների և տեխնիկական վկայականների վարում,

— սպառապինության ու ռազմական տեխնիկայի շահագործական տվյալների ժամանակին վերլուծում:

Կարծում ենք՝ սույն պահանջների կատարումը զորամասերի հրամանատարներին հնարավորություն կընձևեի ապահովելու սպառապինության ու տեխնիկայի մշտական մարտական պատաստությունը խաղաղ ժամանակ և արդյունավետ կիրառումը մարտական գործողությունների պայմաններում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *И. Базовский. Надежность. Теория и практика.* «Мир», М., 1965.
2. *Г. И. Дмитриков, И. Б. Пясик. Надежность механических систем.* «Машиностроение», М., 1966.
3. *А. М. Широков. Основы надежности и эксплуатации электронной техники.* «Наука и техника», Минск, 1965.
4. «ГОСТ В. 25883-83. Эксплуатация и ремонт военной техники. Термины и определения».
5. «Танкотехническое обеспечение танковых (мотострелковых) подразделений в боевых условиях». Воениздат, М., 1989.
հերոս են համարել նրան, ով բավականաչափ ուժ է ունեցել հաղթահարելու և տիրապետելու այդ վախին»<sup>8</sup>:

Նույնիսկ մարդկանցից ամենաքաջերին հարկ է լինում հաշվի նստելու մարտի այդ գործոնների հետ:

Սկոբելևը, որին իր քաջության համար պաշտում էին գործերը, իր բարեկամներից մեկի հետ պրուցելիս ասել է. «Չկա մի մարդ, որը չվախենա մահից: Իսկ եթե մեկը քեզ ասի, թե մահից չի վախենում, ապա թքիր նրա երեսին. նա ստում է: Եվ ես էլ մյուսներից պակաս չեմ վախենում մահից: Բայց կան մարդիկ, որոնք այնքան կամքի ուժ ունեն, որ ցույց չեն տալիս դա, այն դեպքում, երբ մյուսները չեն կարողանում զսպել իրենց և մահվան վախից փախչում են: Ես ունեմ վախս ցույց չտալու կամքի ուժ, բայց փոխարենը ներքին պայքարն ահավոր է, և այն ամեն յուպե անդրադառնում է սրտիս վրա»<sup>9</sup>:

Դր Պիկը, իրերն իրենց անուևով կոչելով, ասում է. «Մարդը սարսափում է մահից»: «Ընտրյալ հոգիներն են միայն ունակ՝ հասկանալու և կատարելու այն մեծ պարտքը, որ նրանց ստիպում է գնալու առաջ, բայց զանգվածը միշտ նահանջում է ուրվականի առաջ: Չանգվածը դողողում է, քանզի մարմինը վերացնել չի կարելի»<sup>10</sup>:

ՈՒստի և վախի տարրը պետք է միշտ հաշվի առնվի որպես մարտի հոգեբանության յուրահատուկ գործոն: «Այս դողողումը սխալմունքի սպառնալիքից, — ասում է Դր Պիկը, — պետք է որպես էական տրվածություն մտնի ամեն մի կազմակերպման, կարգապահության, կարգադրությունների, շարժումների, տարաշարժների, գործառության կերպի մասին պատկերացումների մեջ, այն ամենի մեջ, ինչի

վերջնական նպատակն է թուլացնել այդ զգացումը, խաբել նրան, իրենից վանել և ուժեղացնել հակառակորդի մեջ:

Եթե ուսումնասիրենք այդ դողողումը հնագույն մարտերում, ապա կտեսնենք, որ ռազմական գործում առավել հմտացած ժողովուրդներից ամենաուժեղը նրանք էին, որոնք ոչ միայն ավելի լավ էին հասկանում պատերազմի ընդհանուր վարումը, այլև *բոլորից շատ էին հաշվի առնում մարդկային թուլությունը և միջոցներ ձեռնարկում նրա դեմ*<sup>11</sup>:

*Ինքնապահպանման բնագոյր վախի զգացմունք է առաջացնում:*

ԻՆՉՊԵՍ Է ՄԱՐԴՈՒ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎՐԱ  
ԱՆԴՐԱԳԱՌՆՈՒՄ  
ԻՆՔՆԱՊԱՀՊԱՆՄԱՆ ԲՆԱԶԳԸ

Վախն ամենաուժեղ զգացմունքներից մեկն է, ժամանակային առումով այն առաջինն է ծագում կենդանի էակի մեջ<sup>12</sup>:

«Վախի զգացմունքն առաջ է գալիս եկող (մտտեցող) չարիքը պատկերացնելու ժամանակ: Նրա բնույթն են կազմում տառապանքի կամ դժբախտության յուրահատուկ ձևը, ակտիվ էներգիայի անկումը և սույն երևույթին վերաբերող գաղափարների բացառիկ կենտրոնացումը մտքի մեջ»<sup>13</sup>...

Վախի ֆիզիոլոգիական ուղեկիցներն առաջ են բերում մի արտակարգ վիճակ:

Մենք չենք զբաղվի վախի զգացմունքի մանրակրկիտ ուսումնասիրությամբ, հետաքրքրվողներին հղում ենք հոգեբանության բնագավառի այն հատուկ աշխատություններին, որոնք հիմք են ծառայել մեր եզրակացությունների համար<sup>14</sup>: Նշենք միայն հոգեբանության

<sup>8</sup> Angelo Mosso. Страх. Перевод А. К. Розельон-Сошальской. 1887, с. 222.

<sup>9</sup> «Исторический вестник», 1895, январь, с. 105. Наброски из прошлого, кн. Д. Д. Оболенский.

<sup>10</sup> Де Пик. Исследование боя в древние и новейшие времена. Перевод Пузыревского. 2-е издание, с. 46.

<sup>11</sup> Նույն տեղում:

<sup>12</sup> Рибо. Психология чувств. 1897, с. 187.

<sup>13</sup> Бэн. Психология, II изд., 1887, сс. 250, 251.

<sup>14</sup> Անջելո Մոսո, նշ. աշխ., Բեն, նշ. աշխ., էջ 250—257, Ս. Դձեմ. Психология. Перевод И. И. Лапшина. Изд. 5-ое, 1905, с. 331—336, Ռիբո, նշ. աշխ., էջ 187—196:

տվյալներին արված կարահանգումները. վախի զգայմունքը ինչպես պետք է ազդի մտքի վրա:

Միանգամայն հասկանալի է, որ վախի զգայմունքի ներգործության աստիճանը համապատասխանում է մարտիկին երևացող վտանգի ստտիճանին:

դու թյուններում, որոնք են այն ամենը, ինչ վերաբերում է վտանգի խուսափելուն: Դրանով է բացատրվում փախուստի դիմելու այդ հանկարծակի անհաղթահարելի ձգտումը: Այդ ձգտումն այնքան զորեղ է լինում, որ ամենաբաց վիճակում կարող են ենթարկվել խուճա-



Առաջին համաշխարհային պատերազմ. ավտորիայի փնտրվող գեղի են հանձնվում ռուսներին  
(«Великая война в образах и рисунках». Изд. Мамонтова, 1916 արտոմպ.)  
Հայաստանում տպագրվում է առաջին անգամ)

1) *Մտածողությունը զգալի չափով ճնշվում է*, դրա հետ մեկտեղ վախի զգայմունքը առաջապնում է մտքի մեջ վախի առարկային վերաբերող գաղափարների ոչ կամային կենտրոնացում, ուժ են ստանում *գաղափարների բնազդային գուգորդումները* և վախի պատճառների ուղղությանը *սկսում է գործել նրանց կայունությունը*: Այսպիսով վախի ծայրահեղ ձևերում նվազում է մարտիկի կամային գիտակցականությունը, ինչը հասնում է բանականության լրիվ կորստի:

2) *Էներգիայի անկում*. ինչպես մարտիկի բանական կարողությունների ոլորտում աշխուժանում է վախի պատճառների հետ կապված գործունեությունը, այնպես էլ աճում է էներգիան մարդու որոշ անգիտակցական գործո-

ւթի<sup>15</sup>: Իսկ երբ վախն աճում հասնում է սարսափի հոգեվարքի, տեղի են ունենում կաթված, ուշադրափոխություն և մահ:

Այսպիսով, մենք տեսնում ենք, որ վախի զգայմունքը ձգտում է սահմանափակելու մարդու բանականությունն ու կամքը՝ նրա ողջ գործունեությունն ուղղելով ինքն իրեն փրկելուն: Դրա հետևանքով մարտիկի գիտակցականությունը նվազում է և նրա գործունեության դրդապատճառները փոխադրվում են անգիտակցականի (բնագոյի) ոլորտ: Ինքնապահպանման բնագոյը մարդու մեջ առաջապնում է *վտանգի խուսափելու ձգտում*: Բարևի որ ինքնապահպանման բնագոյը մարդու էության մեջ ամուսնուժեղ բնագոյներից մեկն է, ապա

<sup>15</sup> Դարվին (մեթեթված է Ջեմսի գրքում. *Ջենս*, նշ. աշխ., էջ 332):

վտանգից խուսափելու ձգտումը, վտանգի աճման համեմատ, ավելի ու ավելի է դժվարանում, և այդ պայքարն էլ ավելի է դժվարանում նաև այն պատճառով, որ վախը մարդուն գրկում է բանականության և գիտակցական էներգիայի աջակցությունից:

ՎՏԱՆԳԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՄԱՐԳՈՒ  
ՉԳՏՈՒՄԸ

Մարդը մարտի մեջ է մտնում թշնամուն հաղթելու ցանկությամբ: Սակայն մարտի իրադրությունը, վտանգի՝ իրեն բնորոշ տարրով, առաջացնում է, ինքնապահպանման բնագոյի ավզեցության, այդ վտանգից խուսափելու ձրգտում:

ա) ՄԱՐԳՆ ԱՆՈՒՄ Է ԻՐԵՆԻՑ ԿԱՄՎԱՏ ԱՄԵՆ  
ԻՆՉ ՊԱՅՔԱՐԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թե որքան է վորեղ երկրորդ ձրգտումը, երևում է նրանից, որ *մարդն անում է իրենից կախված ամեն ինչ պայքարը վերացնելու համար*:

Դա հատկապես ակնհայտ է լինում վայրենիների պայքարի ժամանակ:

Վայրենու քաջությունը կասկած չի հարուցում: Մշտական պայքարը այն վտանգի հետ, որ ներկայացնում են բռնությունը, կենդանիներն ու մարդիկ, չէր կարող չկոփել վայրենու արիությունը և չսովորեցնել նրան թանկ գրնահատել իր կյանքը: Վախը մշտապես հետապնդում է վայրենուն, նա միշտ վրտանգի մեջ է, միշտ պոն է: Նա ոչ որքի չի կարող վստահել, և ոչ որ չի վստահում նրան<sup>16</sup>: Դրա հետևանքով վայրենու մեջ պետք է մշակվի ընտելացում վտանգին և անվախության սովորություն:

Կարող է թվալ, թե վայրենու անվիճելի քաջության հետևանքով բաց մարտը պետք է որ սովորական երևույթ լինել:

Մինչդեռ մենք հակառակն ենք տեսնում:

Ըստ Թայլորի<sup>17</sup>, «վայրենիների շըր-

ջանում սովորություն կա թշնամու վրա հարձակվելու հանկարծակի՝ նրան ինչպես վայրի գապանի սպանելու միտումով»:

Համեմատական լեզվաբանությունը ցույց է տալիս, որ ինչպես սեմիտների, այնպես էլ արիացիների լեզուներում պատերազմը և որսը ունեն միևնույն անվանումը (vudh, zud)<sup>18</sup>:

Վայրենի ժողովուրդների միջև մղովող պատերազմը, հաճախ էլ՝ մեք ժամանակներում<sup>19</sup>, դարանից վարվող մի պատերազմ է, որ վարում են մարդկանց խմբերը, որոնցից յուրաքանչյուրը հարձակվելիս ընտրում է ոչ թե հակառակորդ, այլ պոն և սպանում է նրան:

«Դա տեղի է ունենում այն պատճառով, — մարտի իր դասական ուսումնասիրության մեջ պարզաբանում է Դը Պիկը, — որ երկու կողմի պենքը նույնն է, և իր համար շանս ձեռք բերելու միակ եղանակը հանկարծակի հարձակումն է: Հանկարծակիի եկած մարդը պետք է մի րոպե ունենա, որպեսզի վննի իր շուրջը և պաշտպանական դիրք բռնի. այդ ակընթարթում նա, եթե փախուստի չդիմի, սպանվում է:

Հանկարծակիի եկած հակառակորդը չի պաշտպանվում. նա փորձում է փախչել, և նախնադարյան պենքով, կացնով կամ դանակով, դեմ առ դեմ, մեկը մեկի դեմ մարտը, որը չպաշտպանված թշնամիների համար (այսինքն՝ նախապաշտպանական պենքից պուրկ հակառակորդների) այնքան սարսափելի է, ծայր աստիճան հավաղեպ է պատահում: Այն կարող է տեղի ունենալ միայն այն թշնամիների միջև, որոնք միմյանց վրա անսպասելիորեն են հարձակվել, ընդամին երկուսի համար էլ հաղթանակը միակ փրկությունն է: Այն էլ... այդպիսի հանկարծակի հարձակման դեպքում: Փրկությունը հնարավոր է նաև մեկի և մյուսի նահանջի կամ փախուստի դեպ-

<sup>18</sup> Гельвальд. История культуры. Перевод под ред. М. Филиппова, с. 293.

<sup>19</sup> L'annonnon իր «L'évolution politique dans les diverses races humaines» աշխատության մեջ (էջ 492) ավստրալիների պատերազմն անվանում է «մի սովորական մարդարս»:

<sup>16</sup> Дж. Леббок. Доисторические времена. Перевод под ред. Анучина, с. 274.

<sup>17</sup> Тайлор. Антропология, с. 221.

քում: Եվ դրան դիմում են ոչ հազվադեպ»<sup>20</sup>:

Մարտիկի ձգտումը խուսափելու վտանգից՝ որքան հնարավոր է վերացնելով պայքարը, ապացուցվում է պենքի վարզացման ողջ պատմությամբ: Այդ պատմության ամբողջ իմաստը կարելի է արտահայտել մի քանի բառով. *մարդը հնար է գտնում սպանելու թշնամուն՝ խուսափելով սպանվելուց*: Նա մարտի է ելնում լախտով ընդդեմ բրի, նեո ու աղեղով՝ ընդդեմ լախտի, վահանով՝ ընդդեմ նեո ու աղեղի, վահանով ու լանջապանակով՝ ընդդեմ միայն վահանի, երկար գեղարդներով՝ ընդդեմ կարճ տեգերի, պողպատե սրերով՝ ընդդեմ երկաթե սրերի, փնկած մարտակառքերով՝ ընդդեմ հետիոտն մարդու և այլն: Նա հմտորեն ստեղծում է հնարավորին չափ հեռահար հրապաններ ու թնդանոթներ, որպեսզի իրենից հեռացնի պայքարը:

բ) ՊԱՍՏՊԱՐԱՆՆԵՐԻ ԶԳՈՂ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից մարտում վտանգից խուսափելու ձգտումը ցայտուն կերպով արտահայտվում է մարտիկների վրա պատասպարանների ձգող ազդեցության ձևով...

Երբ կործանումը մարդուն անխուսափելի է թվում, ինքնապահպանման բնագոյն սկսում է նրանում խոսել իրեն հատուկ ողջ ուժով: «Կարելի է իրավացիորեն պնդել, — իր «Ձգայմունքների հոգեբանություն» աշխատության մեջ ասում է Ռիբոն, — որ վախը կրում է նըպատակաբանական բնույթ, որ այն ուղղված է մեկ նպատակի՝ կծկվելու, թաքնվելու, որքան հնարավոր է սակավ որս դառնալու հարձակման համար»<sup>21</sup>: Գնդակների տարափի տակ, երբ վախի զգայմունքը համակում է մարտիկին, նա հպվում է գետնին, նա փնտրում է թաքստոց, որը, նրան թվում է, կարող է իրեն պատասպարել հակառակորդի կրակից: *Դա կատարվում է բնագոյն, երբ բնան բացարձակապես առանց դատողականության մասնակցության*: Երբեմն

մարտիկը թաքնվում է ցանկապատի հետևում, որի միջով հեշտությամբ է թափանցում գնդակը: Բայց երբ բնագոյն նրա մեջ խոսում է ուժով, ապա նրան ոտքի հանելը հաճախ դառնում է դժվարին գործ, և ահա այստեղ է, որ ի հայտ է գալիս հրամանատարների՝ մարտի հոգեբանական կողմերի իմացությունը...

Պատասպարանների ձգող ազդեցությունը երևան է գալիս ոչ միայն այն ժամանակ, երբ մարտիկը լիովին կորցրել է հոգեկան հավասարակշռությունն ու ինքնատիրապետումը: Դա երևում է այն բանից, թե որքան է ապաստանում մարտի արտաքին ձևերի վրա. պատասպարանների ձգող ազդեցության հետևանքով փոխվում է հարձակվող պորամասերին տրված ուղղությունը, առաջ են գալիս պորամասերի կուտակումներ ու խառնվածություն, նա փախատակության հիմնական կարգավորիչն է...

ՎՏԱՆԳԻՑ ԽՈՒՍՍՓԵԼՈՒ ՄԱՐԴՈՒՆ  
ԶԳՏՈՒՄԸ ՈՒԹԵՂ ԼԱՐՎԱՏՈՒԹՅԱՆ  
ԴԵՊՔՈՒՄ ԱՌԱՋԱՑՆՈՒՄ Է  
ՀՐԱԺԱՐՈՒՄ ՄԱՐՏԻՑ

Մարդու ամեն մի գործողություն ի կատար ածված ձգտում է (ցանկություն)՝ կամային կամ ոչ կամային: Երբ ձգտումը մեկն է, ապա այն հեշտությամբ դառնում է գործողության անմիջական դրդապատճառ, և այդ դեպքում գործողությունը դառնում է պարզ կամային (իմպուլսիվ) ակտ: Բայց սովորաբար մարդու հոգում միաժամանակ ծագում են մի քանի ցանկություն՝ հաճախ միմյանց հակասող:

Տարբեր ցանկությունների և դրանց ուղեկցող կամ առաջացնող զգայմունքների միմյանց հետ բախումը հանդիսանում է այսպես կոչված դրդապատճառների պայքար:

Չի կարելի դարձյալ շնչել այն նըշանակությունը, որ զգայմունքներն ունեն մարդու գործունեության համար: Դրդապատճառները կշռադատվում են, ծանր ու թեթև են արվում, իսկ ըզգայմունքը կշեռքի նժարի վրա է նե-

<sup>20</sup> *Դը Պիկ*, նշ. աշխ., էջ 6:

<sup>21</sup> *Ռիբոն*, նշ. աշխ., էջ 188:

տում իր սեփական ազդեցության ողջ ծանրությունը<sup>22</sup>:

Մարտիկի «հաղթելու» ձգտումը բնորոշ է մարտիկին մինչև նրա մարտի մեջ մտնելը: Բայց մարտի իրադրությունը իրեն բնորոշ մշտական տարրով՝ վտանգով հանդերձ, մարդու հոգում առաջ է բերում մի այլ՝ «վտանգից խուսափելու» ձգտում: Հենց նոր մենք քննարկում էինք, թե ինչպես է մարտիկի «վտանգից խուսափելու» այդ ձգտումը ճշտումներ մտցնում պայքարի դրսևորումների մեջ: Այդ ճշտումը կարելի է արտահայտել հետևյալ բառերով՝ «հաղթել նվազագույն ռիսկի պայմանով»: Բայց մարտում վրտանգի աճման համեմատ երկու դրդապատճառները հավամարտության մեջ են մտնում. «հաղթել նվազագույն ռիսկի պայմանով» բանաձևն արդեն չի կարող հաշտեցնել դրանք: **«Վտանգից խուսափելու» ձգտումն այդ դեպքում դառնում է համարյա հավասարազոր «մարտից խուսափելուն»:** Եթե մարտիկի «հաղթելու» ձգտումը համարենք դրական դրդապատճառ, ապա «վտանգից խուսափելու» նրա ձգտումը առաջինի նկատմամբ կլինի բացասական դրդապատճառ:

Մարտում հաղթանակը հեշտությամբ չի տրվում. մարտը ակնթարթային չէ և լի է ամենազորեղ զգացողություններով: Այդ պատճառով էլ մարդու սըրտում երկար ժամանակ տեղի է ունենում երկու հակադիր ձգտումների պայքար: Այդ պայքարը բառիս լրիվ իմաստով մի դրամա է:

Թե որքան տանջալից է այդ պայքարը, մենք կարող ենք տեսնել այն բանից, որ մարտի ժամանակ լինում են ինքնասպանության դեպքեր:

Մարտիկների մեծամասնությունը, թեև մասնակցում է մարտին, բայց գործում է մեքենայաբար: Նրանք այդ պայքարում այնքան է՛ներգիա են ծախսում, որպեսզի հաղթահարեն ինքնապահպանման բնագործը և վախի զգայմունքը, որ նրանց արդեն չեն բավականացնում

բարոյական ուժերը ինքնագործունեության համար: Այս մարտիկներին անհրաժեշտ է լինում արտաքին իմպուլս, գրգռիչ: Այդ իմպուլսը նրանց հաղորդում են այն սակավաթիվ քաջ մարդիկ, որոնք պահպանում են հանգիստ բանականություն և էներգիայի պաշար:

Ահա թե որն է այն բանի պատճառը, որ մարտում կառավարումը միշտ իրենց ձեռքն են վերցնում ուժեղ կամքի տեր մարդիկ:

Մարտիկի բացասական ձգտումը վտանգի ածանցյալն է: Իսկ վտանգը հակառակորդի հետ մերձեցմանը զուգընթաց անընդհատ աճում է, ինչի հետևանքով էլ մարտիկի բացասական ձգտումը մարտի ընթացքում ավելի ու ավելի մեծ ուժ է ձեռք բերում: Երբ նրա ուժն այնքան է աճում, որ նա դառնում է մարտիկի հաղթական ձգտումից մեծ, առաջ է գալիս կամքի ճգնաժամ. մարդը հանդգնում է խուսափել մարտից:

«Մտնելով<sup>23</sup> կրակի շրջան՝ գունդն սկսում է հաշել տեղանքի յուրաքանչյուր ծալքի, ամեն մի թփի մոտ, որոնք միայն թե հնարավորություն տան թաքնըվելու: Այնուհետև, մարտի ընթացքում, սարսափով համակված մարդիկ ընկնում են գետին և պառկած մնում, ասես մեռած, լոկ այն տարբերությամբ, որ նրանց դեմքը դեպի գետին է ուղղված: Շուտով վինվորների մի ամբողջ բազմություն վիրավորներին դուրս բերելու սլառովակով նրանց մի մեծ ուղեկցող պահակախումբ է տրամադրում՝ մարտի դաշտը լքելու համար, մյուսները, վերջապես, հեռանում են առանց որևէ պատրվակի, և վերադարձնել նրանց հնարավոր չի լինում, եթե նրանք դուրս են պրծել իրենց սպանների ազդեցության տակից»:

«Այդ բոլոր մարդիկ, խստիվ ասած, փախտակներ չեն՝ նրանց մոտ չկա այն հապճեպությունը, դրանք խույս տվողներն են»:

Հեշտ է պարզել նրանց թիվը. երբ

<sup>22</sup> Корф. О воспитании воли военнопольных. // Стаття в книге первой Обществ. ревицителей военных знаний. 1906, с. 3.

<sup>23</sup> «L'armée française à Metz». par Le commandant La Tour du Pin-Chambly (Général Daudignac. «Les réalités du combat», p. 65).



Բնակչության ցույցը պատերազմի հայտարարման կազմակերպմամբ.  
Մոսկվա, Կարմիր հրապարակ, 1914 թ. օգոստոս  
(«Великая война в образах и рисунках». Изд. Мамонтова, 1916 պրոմից.  
Հայաստանում տպագրվում է առաջին անգամ)

որևէ ազգարակ կամ այդ տեսակի մի որևէ պատասպարան կազմում է դիրքի մի մաս, թերևս պետք չի լինում այդ տեղական առարկան վրադեցնել մի առանձին պորամատով, քանի որ այն արդեն վրադեցրած է լինում կամավորների մի մեծաթիվ կայացոր»:

«Նշանակալից է, որ շարքերի այս լրքումը տեղի ունի, հիմնականում, թիկունքային պորամասերում. այն է ապես ավելի է 2-րդ և 3-րդ գծերում, որոնք գտնվում են հակառակորդի հրետանու պասսիվ կրակի տակ, քան առաջին գծում. մարտի մի քանի ժամվա ընթացքում շարքում մնում են միայն ուժեղ կամքի տեր մարդիկ, և այդ դեպքում արդեն շարքերն իսկապես շնչում են անհողողողությամբ»:

Վիրավորների դուրսբերման պատրվակով մարտից խույս տալը վաղուց նկատված երևույթ է: Հենց նոր ավարտված պատերազմում այս չարիքի առկայությունը արձանագրվել է նաև 1-ին Մանչուրական բանակի 1905 թ. հունիսի 10-ի հմ. 465 հրամանում, որում բանակի

հրամանատարը գրում է. «Նախկին մարտական փորձը ցույց է տալիս նաև, որ մենք ոչ միայն մարտի էինք դուրս բերում սվինների թույլ կազմով վաշտեր, այլև բավարար միջոցներ չէինք ձեռնարկում մարտի դուրս բերված պորամասերին պոնտությունը պահպանելու համար. դրանք հալչում էին տարբեր պատճառներով, բացի սպանվածներով և վիրավորներով կորուստներից... Ես անձամբ տեսել եմ, թե ինչպես վիրավորին դուրս բերելու պատրվակով, նրա շուրջ խմբվելով, հեռանում էին 4-ից մինչև 10 մարդ»:

Որոշ մարդկանց մեջ մարտից խուսափելու ձգտումն այնքան ուժեղ է, որ պատահում են դեպքեր, երբ մարդն ինքըն իրեն վերք է հասցնում՝ միայն այն նպատակով, որ հեռանա մարտից: Եվ այս դեպքերը հազվագյուտ չեն: Ահա թե ինչ ենք տեսնում պրոֆեսոր Բոսկինի նամակում<sup>24</sup>, գրված Պլիննայի անհաջող գրոհներից հետո:

<sup>24</sup> Ս. Ս. Բոսկին. Письма с театра войны 1877-1878 гг.

«Ալլիֆատովսկին հայտնեց այն տը-  
խուր դիտումը, որ արել էր աշխատանքի  
այս մի քանի օրերի ընթացքում: Պարզ-  
վում է, որ շատ հեշտությամբ, Ալլիֆա-  
տովսկու խոսքերով, կարելի է կեղծագործ-  
ներից, այսինքն՝ Սերբական պորքի օրի-  
նակով մատներից իրենց վիրավորած-  
ներից, կազմել մի ամբողջ գունդ... Սա-  
կայն դրա վրա չպետք է վարմանալ. պի-  
վորը թուրքերի մեջ տեսնում է ուժեղ և  
նույնիսկ ավելի ուժեղ թշնամու, թուրքե-  
րը պաշտպանված են խրամատներով և  
զենքի մեջ հսկայական գերազանցույթուն  
ունեն»... Բնորոշ է, որ ինքնավիրավորում-  
ների մասին «զեկույցել չէին հանդգնում»:

Այդ նույն նամակներում Բոտկինը  
հետևյալ խոսքերով է նկարագրում ռուս  
զինվորին: «Եթե մենք լավ ճանաչենք, —  
գրում է նա կնոջը, — մեր զինվորներին,  
այդ բարեհոգի մարդկանց, որոնք գըն-  
դակների տարափի տակ նույնպիսի հը-  
նավանդությամբ են առաջանում, ինչ-  
պես և վարժարանների ժամանակ, մեր  
սիրտն է՛լ ավելի կճմլվի այն մտքից, որ  
այդ լավ մարդկանց մեկ հազարը չէ, որ  
անմոռու՛նչ զոհվեց այն սուրբ գործի նը-  
կատմամբ հավատքով, որի համար նրանք  
այդպես հոժարակամորեն տալիս են ի-  
րենց կյանքը»:

Մենք միտումնավոր ենք բերում  
ռուս զինվորի այս բնութագիրը՝ տրված  
այն մարդու կողմից, որին վկայակոչում  
ենք կեղծագործման մասին խոսելիս: Այս-  
պիսով մենք տեսնում ենք, որ այդ երե-  
վույթը եզակի բացառություն չէ, հետևանք  
է մի տանջալից դրամայի, որը մարտում  
ստիպված է լինում ապրել մարդը և որը  
կարողանում է տանել ոչ ամեն մարտիկ:

Մարտից պանապան պատշաճ կամ  
անպատշաճ պատրվակներով խույս տը-  
վածները բոլորովին էլ մի այնպիսի  
հավազգյուտ երևույթ չեն, որի մասին կա-  
րելի լիներ լռել ռազմապատմական ու-  
սումնասիրություններում կամ հաշվի  
չառնել ռազմական գործի տեսության մեջ:

Գնետի հուշերում մենք հանդիպում  
ենք հետևյալ տողերին<sup>25</sup>.

<sup>25</sup> «Воспоминания Хр. Девета; борьба бу-  
ров с Англией». Перевод Е. И. Половцовой, с. 18.

«Մեր կողմից այս ճակատամար-  
տում<sup>26</sup> մասնակցություն ունեցան, բացի  
300 հեյլբրոնցիներից և 20 կրոնշտադ-  
ցիներից, նաև 40-50 մարդ Յոհաննես-  
բուրգի ոստիկանությունից՝ կապիտան  
վան-Դամի հրամանատարությամբ, ո-  
րոնք հասան ճակատամարտի վայրը և  
քաջաբար կռվեցին մեզ հետ մեկտեղ:  
Սակայն երեք հարյուր հեյլբրոնցիներից  
ոչ բոլորը կարող էին մասնակցել ճակա-  
տամարտին, քանի որ շատերը մնացին  
ձիերի հետ լեռան ստորոտում, իսկ որոշ  
մասը, ինչպես դա հաճախ էր պատահում  
պատերազմի սկզբում, մնաց պաշտպան-  
ված տեղերում և չչանկապավ հեռանալ  
այնտեղից: Երբ ճակատամարտն ա-  
վարտվեց, ես միտումնավոր կերպով վե-  
րահաշվեցի իմ մարդկանց և կարող եմ  
ամենայն վստահությամբ ասել, որ մեր՝  
ճակատամարտում հաղթածներիս թիվը  
չէր անցնում երկու հարյուր հոգուց: Մեր  
կորուստներն էին 4 սպանված և 5 վի-  
րավոր»:

Մենք տեսնում ենք, հետևաբար, որ  
թեև բուրք գաղափարական մարտիկ էր,  
որը պաշտպանում էր իր ջերմորեն սի-  
րած հայրենիքի անկախությունը, սա-  
կայն վտանգի նույնիսկ համեմատաբար  
աննշան լարվածությունը (որն ապա-  
ցույցվում է կորուստների թվով) բավա-  
կան էր, որ ի հայտ գան զգալի թվով  
խույս տվողներ: Իսկ թե որքան մեծ կա-  
րող է լինել այդ թիվը, կարելի է դատել  
«Մարտի հետապոստություն» աշխատույթ-  
յան մեջ Դը Պիկի բերած օրինակով:

«Վերցնենք Վագրամը, որտեղ նրա  
(Նապոլեոնի) զանգվածը հետ չմղվեց:  
22.000 մարդուց 3.000-1.500-ը հասան  
դիրքերին, մի խոսքով, հասան նշանակ-  
ված վայր... Պակասող 19.000-ը շարքից  
դու՛րս էին եկել. ո՛չ, 22-ից 7-ը՝ մեկ երրորդ  
մասը (հսկայական համամասնություն),  
կարող էր կոտորված լինել: 12.000-ը խ-  
կապես պակասում է, նրա՛նց ինչ պա-  
տահեց. նրանք ընկան, պառկեցին ճա-  
նապարհին, մեռած ձևացան, որպեսզի  
ջարու՛նակեն ճանապարհը»<sup>27</sup>:

<sup>26</sup> Նիկոլսենկի մոտ տեղի ունեցած:

<sup>27</sup> Դը Պիկ, նշ. աշխ., էջ 81:



Իսկ չէ՞ որ դրանք դափնիներ վաստակած նապոլեոնյան բանակի վինվորներն էին, այն բանակի, որի փառքը աշխարհով մեկ թնդում էր:

Երբ ինքնապահպանման բնավոր մարտիկների հոգում խոսում է ուժգին, թուլերը չեն դիմանում, և առանձին մարդիկ փախչում են. դրանք վախկոտներն են, բայց վտանգի լարվածության աճման հետ փախչողների թիվն ավելի ու ավելի է աճում, և վերջապես բացասական ձգտումը տիրում է մեծամասնությանը:

1905 թ. հունվարի 13-ին Սանդեպու գյուղի վրա 14-րդ դիվիզիայի գրոհի մի ակնատես այսպես է նկարագրում այդ գրոհի պահերից մեկը. «Բլրից նկատելի դարձավ, որ դիվիզիայում երևալին առանձին մարդիկ, որոնք դեպի հետ էին գնում, այնուհետև սկսեցին ժողովել առանձին խմբեր, և ի վերջո աջ թևում նահանջը դարձավ համընդհանուր...»<sup>28</sup>:

Խույս տվողներն ավելի թույլ մարդիկ են, բայց քանի դեռ քաջերը դիմանում են, պորամասը կամ ջոկատը դեռևս ապրում է: Այդ քաջերի թիվը կարող է մեծ չլինել, սակայն նրանց շնորհիվ ամբողջը դեռ գոյություն ունի, իսկ հակառակորդը գործ ունի այդ ամբողջի հետ: Չէ՞ որ նա չի տեսնում, թե ինչ է կատարվում մյուսի հետ: Մարտը նրա հետ շարունակվում է:

Բայց կարող է գալ մի բույն, երբ ամբողջը, այսինքն՝ ամբողջ պորամասը, հրաժարվում է մարտից, երբ այն պակուց է և ի վիճակի չի լինում ոտքի կանգնելու կամ երբ նա նահանջում է և նույնիսկ խուճապահար փախչում է, երբ նույնիսկ այն քաջերը, որոնք երկար ժամանակ դիմադրավում էին ինքնապահպանման բռնազդին, չեն դիմանում ներքին պայքարին և ենթարկվում են այդ բնազդին, այդ դեպքում մարտի վերջն ակնհայտ է:

Ահա մարտի այդպիսի վախճանի մի բնորոշ օրինակ:

Այն փոխառել է նք Պոպլար-Գրովնի մոտ տեղի ունեցած մարտի մասին Դևետի հուշերից:

<sup>28</sup> *Баженков.*—Военный сборник N 4.—1906 г., с. 95.

«...Ես ձիս աշտանակեցի և շտապեցի դեպի դիրքերը և ... ո՛վ սարսափ... Կրոնիեի դժբախտ անձնատարության ի՛նչ դառը պտուղներ ինձ հարկ եղավ հավաքելու: Բյուրգերների մեջ խուճապ տարածվեց: Անգլիացիները դեռ բոլորովին էլ այնքան չէին մոտեցել, որ հնարավոր չլիներ հաջողությամբ կըրակել նրանց վրա և մնալ դիրքերում, իսկ բյուրգերներն արդեն վայրագ փախուստի էին դիմել՝ լքելով հիանալի ամբողջունները: Նրանք նվազագույն փորձ իսկ չարեցին պահպանելու իրենց դիրքերը: Դա մի փախուստ էր, որի նմանը ես չեմ տեսել ո՛չ մինչ այդ, ո՛չ էլ դրանից հետո: Չնայած մեր բոլոր ճիգերին, ո՛չ ինձ, ո՛չ իմ սպաներին չհաջողվեց հետ վերադարձնել ոչ մեկին բյուրգերներից, որոնք խուճապահար փախչում էին սայլակառքերի և հրանոթների հետևում: Ես լարեցի ողջ ուժերս. ամբողջ օրն առանց հանգստի հետ ու առաջ սլանալով՝ երկու ձի ուժասպառ արեցի, և այդ ամենը՝ ապարդյուն»<sup>29</sup>:

Եվ դրանք այն նույն բյուրգերներն էին, որոնք մի քանի օր անց հիանալի կերպով պաշտպանում էին իրենց դիրքերը: Դևետի խոսքերով, «նրանց քաջությունը գովասանքի էր արժանի, և, նախելով նրանց, անկարելի էր հավատալ, որ դրանք այն նույն բյուրգերներն էին, որոնք սարսափահար փախուստի դիմեցին Պոպլար-Գրովնի մոտ»<sup>30</sup>:

Ամբողջ պորամասով մարտից այս հրաժարման հարյը մենք այստեղ չենք քննի, քանի որ դա կոլեկտիվ հոգեբանության երևույթների թվին է պատկանում, իսկ այդ մասին մենք կխոսենք հաջորդ գլուխներում\*: Այստեղ նշենք միայն, որ այս երևույթը մարտի ժամանակ հավվադեպ չէ:

Եվ այսպես, մարտի դրամայում

<sup>29</sup> «Р. Девети хушերը», էջ 68, 69:

<sup>30</sup> Նույն տեղում:

\* *Шу Н. Н. Голвиш. Исследование боя. Исследование деятельности и свойств человека как бойца. «Антология отечественной военной мысли», книга 2. Изд. ВА ГШ ВС РФ, 1995, сс. 124—127. Рմբ.*

բացասապազ գրողապատճառի արդե-  
յությունը կարող է հանգեցնել երկու  
հետևանքի՝

1) սկզբում առանձին (թույլ) աճ-  
ձանց հրաժարմանը մարտից,

2) ամբողջ գործամասի հրաժարմանը  
մարտից:

Վերը մեջբերում կատարելով բժիշկ  
Բուտկինի նամակներից՝ մենք հիշատա-  
կեցինք նրա այն դիտողությունը, որ  
կեղծագործների մասին լուր և թաքյ-  
նում էին: Այդ դիտողությունը բնութա-  
գրում է սովորական վերաբերմունքը  
մեր կողմից հետապոստվող կատեգորիայի  
բոլոր երևույթների նկատմամբ. խույս  
տվողների, փախուստի դիմողների, խու-  
ճապների մասին լուր են, ձգտում են  
դրանք թաքցնելու, այնինչ ճշմարտու-  
յունից գործը կարող է միայն շահել:

Մարդու ուժերը սահմանափակ են.  
մարդուն հատուկ են շատ թուլություն-  
ներ: Բայց չէ՞ որ մարտում գործում են  
մայրիկ՝ իրենց էությանը հատուկ թու-  
լություններով: Մարդու բոլոր ուժերն  
օգտագործելու համար պետք է գիտենալ  
նրա՝ որպես մարտիկի հատկություննե-  
րը՝ ինչպես դրական, այնպես էլ, հատ-  
կապես, բացասական: Պետք չէ աչք փա-  
կել գոյություն ունեցողի վրա: Բոլոր մեծ  
վորավարները պայքարել են մարտում  
մարդու գործունեության այս բացասա-  
կան դրսևորումների դեմ, իսկ չարիքի  
դեմ պայքարելու համար պետք է լիա-  
նալ, թե որն է այդ չարիքը: Ժամանակն է  
թողնելու այս աղավաղումները և ծած-  
կադմիոցները. չէ՞ որ դա չի օգնի, այլ  
հակառակը՝ կվճասի: Հարկ է, որ գիտու-  
թյունը համարձակ և անկողմնակալ ձեռ-  
քով քաջի քողը մարտի բոլոր երևույթ-  
ների վրայից, որ նա մեկ ցույց տա  
մարտիկին իր կենդանական էության  
բոլոր թույլ, ցածր կողմերով հանդերձ,  
ինչ արած: Դա պետք է առաջին հերթին  
նաև պրակտիկային: Գործիքը ճանաչե-  
լու համար, հատկապես երբ դա խիստ  
բարդ գործիք է, պետք է առաջին հերթին  
ճանաչել նրա հատկությունները:

Բոլոր այն վորավարները, որոնց  
մարտերում ուղեկցում էր հաղթանակը,

գերազանց կերպով ծանոթ էին վիճվորի  
թույլ կողմերին: Նրանցից շատերը այն-  
քան էլ բարձր կարծիքի չէին սովորական  
մարդու քաջության մասին:

«Բոլոր կենդանիներից ամենա-  
վախկոտը մարդն է», գրում է իշխան  
դը Լինը<sup>31</sup>:

Մինչդեռ մարտի իրականության ի-  
մացությունը մարդուն հնարավորու-  
յուն կընձեռի նախապես նախապատ-  
րաստվելու և միջոցներ ձեռնարկելու բո-  
լոր բացասական երևույթների հնարա-  
վոր կանխման ուղղությամբ. չէ՞ որ հենց  
դա է մարտի իսկական կառավարումը:  
Ճապոնացիները յուրայինների վրա  
կրակ էին բացում, երբ գրոհող վորամա-  
սերը հետ էին շրջվում, նրանք գնդակա-  
հարում էին յուրայիններին...

ՄԱՐՏՈՒՄ ՄԱՐԴՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՎԻՃԱԿԸ ԵՐԿՈՒ ՀԱՎԱԳԻՐ ԶԳՏՈՒՄՆԵՐԻ  
(«ՀԱՂԹԵՆՈՒ» ԵՎ «ՎՏԱՆԳԻՑ  
ԽՈՒՍԱՓԵՆՈՒ») ՊԱՅՔԱՐ Է

Սույն գլխում մենք քննում ենք  
մարտիկի հոգեբանությունը երկու ձրգ-  
տումների տեսանկյունից. դրանք են  
«թշնամուն հաղթելու» դրական և «վտան-  
գից խուսափելու» բացասական ձգտում-  
ները: Այս ձգտումները կարելի է հա-  
մարել հիմնական, քանի որ, չնայած յու-  
րաքանչյուր մարտիկ ապրում է մի չափա-  
կան բարդ դրամա, այնուամենայնիվ,  
մարտում մարդու գործունեության բո-  
լոր դրդապատճառները վերջին հաշվով  
հանգում են հենց այս երկու հիմնական  
դրդապատճառներին: Միանգամայն հաս-  
կանալի է, որ մարտիկի յուրաքանչյուր  
հատկություն, անգամ ամենաչնչինը,  
անդրադառնում է մարտի դրամայի ըն-  
թացքի վրա, ինչի հետևանքով այս դրա-  
ման յուրաքանչյուր մարտիկ ապրում է  
յուրովի: Սակայն, անկախ այդ բազմա-  
պանությունից, կարելի է պնդել, որ՝

*մարտում մարդու հոգեբանական  
վիճակը երկու հակադիր ձգտումների  
պայքար է:*

Մենք ուժերի ներածին չափ ձգտե-

<sup>31</sup> Prince de Ligne. Préjugés militaires, 134.

յինք պարզելու, թե որքան մեծ է այդ պայքարի լարվածությունը, որքանով է այն համակում մարտիկի ողջ էությունը, իսկ գլխավորը՝ որ այն կարող է ավարտվել մարտից հրաժարումով:

Մարտիկի «հաղթելու» դրական ձրգտումը բխում է մարտի անփոփոխ հիմնական գաղափարից, իսկ մարտիկի բացասական ձգտումը մարդու էության հավերժական հատկության՝ ինքնապահպանման բնագոյի հետևանքն է, ուստի և մարտի դրաման կազմում է մարտի մի անփոփոխ մշտական մասը: Մենք դրան կհանդիպենք և խոր անցյալի մարտերում, մենք դրան կհանդիպենք նաև ներկայիս մարտերում, մենք դրան կհանդիպենք նաև հեռավոր ապագայի մարտերում:

*Միանգամայն հասկանալի է, որ մարտում մարդու ողջ գործունեությունը պետք է քննվի՝ կախված այդ դրամայից:*

ՈՒՇԱԿՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ  
ԱՅԴ ՊԱՅՔԱՐՈՒՄ. ՈՒՇԱԿՐՈՒԹՅԱՆ  
ԱՆՎՄԱՆԱՓՎՈՒԹՅՈՒՆԸ, ՄԱՐԿՐՈՒ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՎՈՒՄ Է  
ԱՅՆ ՕԲՅԵՏՈՎ, ՈՐԻ ՎՐԱ ՈՒՂՎԱՍԵ  
ԵՆՈՒՄ ԵՎ ՈՒՇԱԿՐՈՒԹՅՈՒՆԸ, ՈՒՇԱԿՐՈՒԹՅԱՆ  
ՇԵՂՄԱՆ ԵՎ ՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ,  
ՏՊԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԿԱՐԱԿՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՆԱԿԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Սակայն այս երկու ձգտումների պայքարը չի կարելի դիտել որպես մեխանիկական ուժերի պայքար:

«Մեր հոգևոր կյանքի ամենաբնորոշ հատկություններից մեկն այն փաստն է, որ, գտնվելով մեր զգայմունքների ոլորտ ներթափանցող նորանոր տպավորությունների հեղեղի տակ, *մենք նկատում ենք դրանց լոկ մի աննշան մասը:* Մեր տպավորությունների լրիվ գումարի միայն մի մասն է մտնում մեր, այսպես կոչված, *գիտակցական փորձի մեջ*, որը կարելի է նմանեցնել ծաղիկների լայն դաշտով հոսող առվակի»<sup>32</sup>:

Գիտակցվողի բնագավառը ծայրաստիճան սահմանափակ է, եթե այն հա-

<sup>32</sup> *Տիմու, Եջ. աշխ., էջ 180:*

մանատենք մեր զգայարանների վրա արտաքին ազդեցությունների լայն տիրույթի և նրանից անընդհատ արտահոսող տպավորությունների վանգվածի հետ:

Գիտակցության մեջ մտնում է միայն այն, ինչի վրա ուղղված է մեր ուշադրությունը<sup>33</sup>:

Մարդու այս հատկությունը չափազանց էական է, քանի որ դրա շնորհիվ է, որ քանի դեռ մարդու ուշադրությունը մի որևէ օբյեկտի վրա է ուղղված, նա չի նկատում այլ արտաքին գործոնների ներգործությունը, այսինքն՝ այդ գործոնները մարդու գիտակցության համար անսեռ գոյություն էլ չունեն: Այդ պատճառով էլ, եթե *դրական* դրոշմատեսության որևէ մեկը բավարար ուժով գրավի մարտիկի գիտակցությունը, ինքնապահպանման բնագոյի ազդեցությունը կարող է առժամանակ կասեցվել:

Այստեղից երևում է, թե մարտում մարդու համար ինչ հսկայական դրական նըշանակություն ունի այն *ամենը, ինչ քրա ուշադրությունը շեղում է վտանգից*, և հակառակը՝ ինչ հսկայական բացասական նշանակություն ունի այն ամենը, ինչ մարդու ուշադրությունը սնեռում է ինքնապահպանման բնագոյի վրա:

Մեր գիտակցության սահմանափակության հետևանքներից մեկն այն է, որ *մեր գործողությունները որոշվում են այն*

<sup>33</sup> Ֆիզիոլոգիայից դա այսպես է բացատրվում. ոչ մի տպավորություն չի կարող թափանցել գիտակցական փորձի ոլորտ, եթե նրան չհաջողվի որոշակի ուղիներով ներթափանցել ուղեղի կիսագնդեր և այնտեղ առաջ բերել որոշակի ֆիզիոլոգիական գործընթացներ: Երբ կենտրոնաձիգ հոսանքը թափանցում է կիսագնդեր և որոշակի գործողություններ է կատարում այնտեղ, մյուս բոլոր հոսանքները ժամանակավորապես արգելակվում են: Նրանք կարող են ասես դռնակի հետևից նայել գիտակցության ոլորտից ներս, բայց տվյալ պահին այդ գիտակցությանը տիրապետած տպավորությունը դրանք դուրս է մղում այնտեղից: Այսպիսով, գիտակցության սահմանափակությունը ֆիզիոլոգիայից կախված է, ըստ երևույթի, այն բանից, որ կիսագնդերի գործունեությունը մշտապես ձգտում է լինելու միասնական և անբաժանելի մի ակտ՝ կապված մեկ այս, մեկ այն հոսանքի հետ, բայց միշտ էլ մի ամբողջություն է ներկայացնում (*Տիմու, Եջ. աշխ., էջ 181*):

օրջեկտով, որին ուղղված է մեր ուշադրությունը<sup>34</sup>:

Այդ պատճառով էլ մարտի դրաման, ինչպես մեր կամային կյանքի ողջ դրաման, լիովին կախված է ուշադրության

Ուշադրությունը կարող է լինել երկու տեսակի՝

1) երբ այն կապված չէ ոչ մի ներքին ջանքի հետ, այսինքն՝ ռեֆլեկտոր, կամ ոչ կամային,



Առաջին համաշխարհային պատերազմ. կավակների գործը՝ «լավա» («Великая война в образах и рисунках». Изд. Мамонтова, 1916 այբումից. Հայաստանում տպագրվում է առաջին անգամ)

հազիվ նշմարվող այն գերակշռությունից, որ առաջ է բերում տիրապետման համար պայքարող գաղափարներից մեկը<sup>35</sup>:

Մարտի դրաման ծանր է նստում մարտիկի վրա: Մարտիկի հոգում երկարատև պայքար է տեղի ունենում, մարդը երկար ժամանակ տատանվում է: Դա մարտիկի ուշադրության ցրման գործում առկա տատանումների վիճակն է: Մարտիկը, ասես, գտնվում է լիակատար հուսալքման վիճակում, իսկ կամային առումով՝ անվստահություն է ապրում: Իհարկե, կան այդ վիճակի տարբեր աստիճաններ<sup>36</sup>:

2) երբ այն ստեղծվում է մարտիկի ներքին ջանքերի շնորհիվ, այսինքն՝ կամային:

Ոչ կամային ուշադրության համար առիթ է լինում որևէ զգայական տպավորություն՝ շատ ուժեղ, մեծ և հանկարծակի, կամ նման առիթ է լինում բնազդառուն, շրջապատի ձայներն ու աղմուկները ձուլվում դառնում են մի ամբողջություն, ուշադրություն այն աստիճան է ցրված, որ ամբողջ մարմինն անմիջապես ընկալվում է ասես որպես մի ամբողջություն և գիտակցության «առաջին պլանն» պեղծված է ժամանակի դատարկությունը մի որևէ բանով լցնելու անհրաժեշտության ինչ-որ հանդիսավոր զգայումով: Գիտակցության աղուտ ֆոնի վրա այդ ժամանակ զգացվում է անսահման տարակուսանք. մենք չգիտենք, թե ինչ անենք՝ ելնենք, հագնվենք, թե՛ պատասխան գրենք այն անձին, որի հետ մենք վերջերս խոսակցություն ենք ունեցել, ընդհանրապես մենք փորձում ենք շարժում հարորդել մեր մտքին, բայց միևնույն ժամանակ զգում ենք, որ ի վիճակի չենք տեղից շարժվելու՝ մեր pensée de derrière la tête-ն (հետին միտքը.-*Նմբ.*) ի վիճակի չէ ճեղքելու մեր անձը պարուրած քնակախության շղարջը:

Սա էլ հենց այն բանի ծայրագույն սահմանն է, ինչը մենք ցրված ուշադրություն ենք անվանում: Միջանկյալ աստիճանների մի երկար շարք գոյություն ունի այս ծայրահեղության և ուշադրության գերագույն լարման միջև, երբ մարդն այնքան է տարվում թուփի հետաքրքրականությամբ, որ նույնիսկ չի զգում ուժեղ մարմնական ցավը...

<sup>34</sup> «Օրբեկտի հետաքրքրականությունը՝ ասի այն գլխավոր պայմանը, որից կախված է նրա կարողությունը՝ առաջացնելու կամ արգելակելու մեր գործողությունները: «Հետաքրքրական» հասկացության կազմի մեջ մտնում են ոչ միայն հաճելի ու տհաճը, այլև հիվանդագին գրավիչը և համառորեն հետամտողը և նույնիսկ ուղղակի սովորականը, քանի որ վերջինիս տարբեր կողմերը փոփոխակիորեն դառնում են մեր ուշադրության օբյեկտ. «այն, ինչ հետաքրքրում է մեզ», և «այն, ինչի վրա ուղղված է մեր ուշադրությունը», ըստ էության, համանիշներ են...» (*Ջեմս*, նշ. աշխ., էջ 389):

<sup>35</sup> *Ջեմս*, նշ. աշխ., էջ 199:

<sup>36</sup> Հարկ ենք համարում այստեղ Ջեմսի հոգեբանությունից բերել «ցրված ուշադրության» նկարագրությունը (*Ջեմս*, նշ. աշխ., էջ 181):

«Աչքերն աննպատակ ուղղված են դեպի հե-

յին խթանը (դրդապատճառը) կամ էլ այնպիսի ընկալումը, որն ավելի շուտ իր բնույթով, քան ուժով ներգործում է մեր որևէ բնատուր ձգտման վրա և դրա շրնորհիվ ձեռք է բերում անմիջական գրավչություն<sup>37</sup>: Միանգամայն հասկանալի է, որ բոլոր այն երևույթները, որոնք դրդապատճառ են լինում մարտում մարդու բացասական ձգտման համար, օժտված են այս վերջին հատկությամբ, քանի որ ներգործում են մարդու էությունը բնորոշ բնազդներից ուժեղագույնի վրա: ՈՒստի և բացասական ձգտման դեմ պայքարելու համար դրական դրդապատճառները պետք է շատ հզոր լինեն:

Հոգեբանությունը մեզ սովորեցնում է, այն բանի համար, որ պայտուղությունը դառնա մեզ համար նկատելի, այսինքն՝ կարողանա գրավել մեր ուշադրությունը, այն պետք է որոշ չափով հակադրվի նախորդին: Գեֆդինգի խոսքերով ասած՝ «ամեն մի պայտուղության առաջացումը ենթադրում է ոչ միայն

<sup>37</sup> Ջևու, նշ. աշխ., էջ 187:

նյարդային համակարգում տվյալ և նախորդ գրգռումների միջև որոշակի ժամանակամիջոցի առկայություն, այլև նրանց միջև եղած որոշ հակադրություն»: Նյարդային գործընթացը չի կարող տեղի ունենալ հավասարակշռության վիճակում, այլ առաջ է գալիս միայն նյարդի հանկարծակի փոփոխությունների հետևանքով, որոնք ընթանում են որոշակի արագությամբ<sup>38</sup>: Համաձայն այդ օրենքի ամեն մի տպավորություն, որքան անըսպասելի է, այնքան մեզ համար ուժեղ է, ուստի և առավել մեծ չափով ուշադրություն է գրավում այն, ինչ անսպասելի է, հանկարծակի:

Անսպասելիությունն օգնում է տպավորությանը գրավելու մարտիկի ուշադրությունը, հետևաբար և որոշելու մարտիկի ապրած ներքին պայքարի ելքը:

*Այստեղից ակնհայտ է դառնում, թե մարտում ինչ հսկայական նշանակություն ունի հանկարծակիությունը:*

<sup>38</sup> Воронежский. Исследование основных условий боевых действий войск. Военный сборник N 2, 1906, с. 85.

*(Շարունակությունը հաջորդ համարում)*

ԵՐԵՎԱՆԻ ՄՊԱՅԻ ՏՈՒՆԸ ՀՀ ԶՈՒՈՒՄ ՏԱՐՎՈՂ  
ԳԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ա. Վ. ՄՈՒՐԱԳՅԱՆ, մայր, տեխնիկական գիտությունների թեկնածու

Պատերազմը մտքերի, գաղափարների, կամքերի, բնավորությունների բախում է: Պատերազմում հաղթում է ռազմական գործում կիրթ, առավել ուժեղ, հոգեպես հարուստ, պատվախնդիր և կյանքը հանուն հայրենիքի չխնայող պիսվորը: Պատերազմի ժամանակ իսկական դինժառայությունը պիտանի ավելի մեծ թվով մարդիկ են գտնվում վեճի տակ, քան խաղաղ ժամանակ: Անշուշտ, դա բնական է, քանի որ երբ հայրենիքը վտանգի մեջ է, յուրաքանչյուր ոք, անկախ մասնագիտությունից, պիսվորագրվում է նրա պաշտպանությանը: Պատերազմը հանգեցնում է մեծ թվով պիսվորագրող-

ների ծառայության ժամկետների պզալի երկարաձգման: Զինված ուժերի վրա է ընկնում ոչ միայն պիսվորագրողների կողմից պեճի տիրապետման, այլ նաև նրանց մեջ ճիշտ աշխարհայացքի, պզգային-քաղաքական պատկերացումների դաստիարակման կազմակերպման պարտականությունը, քանի որ միայն մարտական ու բարոյահոգեբանական բարձր հատկանիշներ ունկտող լավ պատրաստված, վարժված պիսվորն է ունակ հաղթելու ժամանակակից մարտում: Իսկ ռազմական արհեստավարժությունն ինքնին չի տրվում, այլ ձեռք է բերվում համառ աշխատանքով:

Կասկած չի կարող լինել այն բանում, որ վճռական, ակտիվ գործողություններին միշտ պատրաստ մարտիկի փնվորական պատրաստությունը չի կարելի անջատել անձնակազմի կենդանի, ազգային-ժողովրդավարական ոգով դաստիարակությունից: Արդի փնվորի ռազմական, բարոյահոգեբանական պատրաստվածությունը պետք է առավելագույնս հղկված լինի:

Չինվորի ուսերին բարդ խնդիրներ են դրված.

— միշտ պատրաստ լինել պատերազմին, որն առկայուն է վտանգներով ու խուճապային իրավիճակներով,

— անընդհատ հարստացնել ու խորացնել իր մասնագիտական գիտելիքները, կատարելագործել վենքին ու ռազմական տեխնիկային տիրապետելու հմտությունը,

— ցանկացած պայմաններում լինել հույժ կարգապահ ու տոկուն, միշտ պատրաստ թեկուզ իր կյանքի գնով պաշտպանելու հայրենիքը, իր ազգին:

Հայաստանի Հանրապետությունը հռչակել է և հետևողականորեն վարում է խաղաղասիրական քաղաքականություն՝ մասնակցելով միջազգային անվտանգության տարբեր համակարգերի: Դրա հետ մեկտեղ տարածաշրջանում տիրող բարդ իրավիճակն ստիպողականորեն պահանջում է անշեղորեն բարձրացնել մեր փնված ուժերի մարտունակությունը, քանի որ բանակը պետության կարեվոր հատկանիշն է, նրա անկախության ու ինքնիշխանության, ազգի գոյատևման երաշխիքը: Այսօր մեր հնարավոր հակառակորդները փնված են մեր սպառապինությունը գերազանցող վենքով ու ռազմական տեխնիկայով: Նման պայմաններում հույժ կարևոր է բանակի բարոյահոգեբանական բարվոք վիճակը, որի հիմնական գրավականներից մեկը նրա հրամանատարական կազմի համալրումն է գաղափարապես կոփված, մասնագիտական խոր գիտելիքներ ունեցող մարդկանցով:

Լրացավ մեր բանակի հինգ տարին: Հայտնի է, որ այն ստեղծվել է սկզբնա-

պես հայրենիքի համար պաշտպանության ելած կամավորական, այսպես կոչված երկրապահ շուկատների միաձուլմամբ, ապա և կազմակերպված փորակոչով: Ներկայումս այն արդեն կանոնավոր բանակ է: Այս հինգ տարիների ընթացքում բանակում տեղի են ունեցել որակական փոփոխություններ, մշակվել են կանոնավոր բանակի ոգուն համապատասխանող սկզբունքներ: Սակայն ապաների մի զգալի մասը նախկինում երկրապահ շուկատների հրամանատարներ են եղել, և նրանց պետք էր մեծ շանք թափել իրենց մեջ բանակին հատուկ կարգապահական հոգեբանություն մշակելու համար: Ֆիդայական շարժումը, անկասկած, էական դեր է խաղացել հարևան երկրի ունևձգություններից հանրապետության սահմանների պաշտպանության սկզբնական փուլում: Բայց ֆիդայականության դարն արդեն անցել է, նրա մարտավարական ու հոգեբանական սկզբունքները ներկայումս ժամանակավրեպ են, և բանակում ծառայող ըսպաները պետք է խոր գիտելիքներից բացի ունենան նաև այնպիսի բարոյահոգեբանական բարձր որակներ, ինչպիսիք են ազգային-պետական գաղափարայնությունը, զսպվածությունը, ինքնատիրապետումը, լայն մտածողությունը և այլն:

Քանի որ ներկայումս փորակոչիկների մեջ մեծ թիվ են կազմում թերի միջնակարգ կրթությամբ երիտասարդները, շուկայական հարաբերությունները, դրրականի հետ մեկտեղ, բանակում տիրող մթնոլորտի վրա բացասական ազդեցություն են թողնում, ուստի էապես աճել է հրամանատարի դաստիարակչական հմտության դերը: Սպան պետք է ոչ միայն կարողանա իր գիտելիքները հաղորդել փնվորներին, այլև ինքն անընդհատ աշխատի իր հոգևոր աշխարհի հարքստացման ուղղությամբ՝ օրինակ ծառայելով ենթակայներին: Ընդհանրապես սպան պետք է լինի բանակի և հասարակության լավագույն սովորությունների, հոգևոր ու ստեղծագործական ավանդույթների կրողը: Նա է բանակի կառավարման բարդ մեխանիզմի հիմնական օղակը:

Սպան դաստիարակ է: Նա իր ենթա-  
կայության տակ ստանում է երիտա-  
սարդ մարդկանց, որոնք գտնվում են  
վարգայման այն շրջանում, երբ նրանց  
մեջ տեղի է ունենում անձի և եսի ձե-  
վավորում: Նրա ողջ գործունեությունն  
ուղղված է իր ենթականերին և իրեն  
խսկ պատերազմի արհավիրքներին պատ-  
րաստելուն: Պատերազմն է այն անկողմ-  
նակալ դատավորը, որը գնահատում է  
այդ պատրաստվածության աստիճանը,  
այն ամենախիստ փորձությունը, որով  
ստուգվում են նրա մասնագիտական ու  
քաղաքական վարգայածությունը և ու-  
րակը: Հանուն հայրենիքի և հանուն  
հաղթանակի ժողովուրդն իր երիտա-  
սարդ որդիներին վստահում է սպային,  
որը նրանց կյանքի համար պատասխա-  
նատվություն է կրում: Մարտական գոր-  
ծողություններին մասնակցած հրամա-  
նատարները լավ գիտեն, թե որքան  
ծանր գործ է ենթակային կռվի տանելը,  
որքան մեծ պատասխանատվություն է  
իր վրա վերցնում այդպիսի որոշում  
ընդունելիս հրամանատարը: ՈՒստի նա  
պետք է լիովին համոզված լինի այդ ու-  
րոշման արդարացիության մեջ:

Այս ամենից միանշանակորեն բը-  
խում է, որ սպայական կազմում պետք է  
ընդգրկել մտածող, գիտակից մարդ-  
կանց: Գեռես չի ստեղծված մի այնպիսի  
ապարատ, որն ի վիճակի լիներ փոխա-  
րինելու կամ թեկուզ մրցելու մարդկային  
ուղեղի հետ: Միայն գիտուն մարդը կա-  
րող է կանխել վտանգը, միայն ստեղծա-  
գործ մարդը կարող է բարոյական հաղ-  
թանակ տանել: Գրանից հետևում է, որ  
այժմ, ինչպես երբեք, մեծ է անձնակազ-  
մի հետ տարվող աշխատանքի համակար-  
գում գործող մարմինների դերը: Այդ հա-  
մակարգում իր ուրույն տեղն ունի սպա-  
յի տունը:

Երևանի սպայի տունը հասարակա-  
կան-քաղաքական դինամիկ կառույց է,  
որը ձգտում է միշտ ընթանալ ժամա-  
նակին համաբայլ, ապրում է լիարժեք  
մշակութային սովորական կյանքով՝ մի-  
աժամանակ կազմակերպադաստիարակ-  
չական աշխատանք կատարելով վինձա-

ռայողների հասարակական-պետական  
մտածելակերպի ձևավորման, այլև նրանց  
հանգստի կազմակերպման ուղղությու-  
ներով: Սպայի տան դերը այդ աշխա-  
տանքների համակարգում առանձնա-  
նում է նրանով, որ սպայի տունն աշ-  
խատանքներ է տանում ոչ միայն վին-  
ժառայողների շրջանում, այլև նրանց ըն-  
տանիքների, հարավատների հետ: Հե-  
տևաբար, նրա ընդհանուր ներգործա-  
կան հնարավորությունները որոշակի  
առումով ավելի լայն են, քան ԶՈՒ-ում  
գործող դաստիարակչական համակարգի  
այլ մարմինների հնարավորությունները:

Զինժառայողներն իրենք դուրս են  
եկել ժողովրդի ծոցից, ուստի բանակի հա-  
մար հատկապես կարևոր է պահպանել և  
ավելի սերտ դարձնել կենդանի կապը ժո-  
ղովրդի հետ, ամրապնդել նրանց միջև  
միաբանությունը: Այդպիսի կամուրջ է  
սպայի տունը: Այն դեպի իրեն է ձգում ոչ  
միայն վինժառայողներին, այլև երիտա-  
սարդությանը, երեխաներին ու տարեց  
մարդկանց. նրանք այստեղ կարող են բա-  
վարարել իրենց նախասիրությունները:  
Միայն թե պետք է ճիշտ որոշվեն հան-  
րապետության սոցիալ-հասարակական  
կյանքում տեղ գտած միտումները և դը-  
րանց համապատասխան մշակվի գաղա-  
փարադաստիարակչական աշխատանքի  
ծրագիրը, ընտրվեն այդ աշխատանքի  
ճիշտ ձևերն ու եղանակները: Այս առանց  
այդ էլ բարդ խնդիրն ավելի է բարդա-  
նում այն պատճառով, որ մինչ այժմ դեռ  
մշակված չէ ընդհանուր ապգային գաղա-  
փարախոսություն, ընտրված չեն ընդհա-  
նուր ապգային-պետական արժեքներ:  
Գրա հետևանքով մենք ստիպված ենք  
մեր աշխատանքում ղեկավարվել ՀՀ  
ԶՈՒ-ում մշակված գաղափարախոսա-  
կան առանձին հիմնադրույթներով:

Սպայի տունն իր աշխատանքը ձրգ-  
տում է կառուցելու գիտական հիմքերի  
վրա: Այդ նպատակով նա, համագործակ-  
ցելով ԳԱԱ «Սպայական գունդ» կազմա-  
կերպության, այլ գիտական հաստատու-  
թյունների հետ, ժողովրդական լայն  
կանգվածների շրջանում կատարում է  
տարբեր կարգի գիտական հարցումներ՝

կապված ժողովուրդ — փնվոր — հրամանատար շրջալի հետապոտման հետ: Գրքանց արդյունքներն այնուհետև մանրակրկիտ վերլուծվում են: Օրինակ՝ պետք է ցավով արձանագրել այն փաստը, որ, ինչպես ցույց է տալիս այդ վերլուծությունը, ժողովրդի մեջ դեռևս հարկավոր չափով չի մշակվել պետական մրտաճողություն, չի վերացել այն մտայնությունը, որով բանակը չի գիտակցվում որպես պետականության կարևոր և պարտադիր հատկանիշ, պատշաճ կերպով չի գնահատվում մարտիկի սիրանքը, պետական սահմանների պաշտպանության ժամանակ նրա թափած արյունը, լիովին չի ընկալվում արտագաղթի վրտանգը ազգային շահերի համար, բավարար չափով չի գիտակցվում բանակում ծառայությունը որպես պատվավոր պարտականություն: Հաճախ փնվորները իրենք էլ չեն պզուս իրենց պատասխանատվությունը երկրի, իրենց ազգի խաղաղ, արգասավոր կյանքի համար: ՈՒստի անհրաժեշտ է եռանդուն գաղափարադաստիարակչական աշխատանքներ տանել այս թերությունների վերացման ուղղությամբ:

Մեր կարծիքով, կարևորագույն պըրոբլեմներ են բանակի շարքերի լրակազմումը որակյալ կադրերով, վերադասի պատասխանատվության մեծացումը, փնված ուժերը որպես պետության կարևոր հատկանիշ ընկալելու մտայնության դաստիարակությունը, ժողովրդի և բանակի միաբանության ամրապնդումը, պետական մտաճողության մշակումը, պետության որպես ազգի գոյատևումն ապահովող համակարգի ըմբռնման ձևավորումը: Ահա այս խնդիրների լուծմանն է ծառայեցնում իր ողջ գործունեությունը Երևանի սպայի տունը: Այստեղ հաճախակի են տեղի ունենում մեր ժողովրդի պատմահերոսական անցյալին, նրա վարգայման հեռանկարներին, փնվորի հոգեբանության հարցերին նվիրված թեմատիկ վեկուցումներ, հանդիպումներ, որոնք կազմակերպվում են տարբեր գիտական հաստատությունների ու վետերանների խորհրդի հետ համատեղ:

Գաստիարակչական աշխատանքն իրագործվում է համալիր ծրագրով, գաղափարական-քաղաքական, բարոյական, իրավական և գեղագիտական դաստիարակության հիմնական ձևերի ու մեթոդների կիրառմամբ: Մեր աշխատանքի հիմքում դրված են հետևյալ սկզբունքները.

— սերտ կապ կյանքի հետ ,

— տարվող աշխատանքների անընդմեջություն, գործնականություն և ձկունություն,

— ակտիվություն, նախաձեռնողականություն, ստեղծագործական մտնեցում\*:

Սպայի տանը համակարգված ձևով, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր տարվում են գաղափարական-քարոզչական աշխատանքներ՝ ցուցադրական մեթոդների կիրառմամբ:

Հատուկ ուշադրություն է դարձվում գեղագիտական դաստիարակությանը, որը, վարգայնելով փնծառայողների գեղեցիկի վգայումը և ճաշակը, նպաստում է նրանց մտահորիպունի ընդլայնմանը, հոգևոր աշխարհի հարստացմանը, բավակողմանի և ներդաշնակ վարգայմանը, բարոյական կայունությանը:

Սպայի տանը հաճախակի են կազմակերպվում հայ նկարիչների ցուցահանդեսներ, գործում են պարարվեստի դպրոց, թատերական խմբակ, տիկնիկային թատրոն, ժողովրդական երգի-պարի համույթ, էստրադային ու սիմֆոնիկ նրվագախմբեր: Սպայի տան ստեղծագործական խմբերը հաճախ են մեկնում Հայաստանի տարբեր շրջաններ, հանդես գալիս վորամասերում, անգամ հանրապետության սահմաններից դուրս:

Սպայի տանը կա գրադարան, որի ծառայությունից օգտվում են տարեկան 1000—2000 մարդ: Կազմակերպված են նաև առաջին բուժօգնության, կար ու ձևի և վարսավիրական դասընթացներ, նախադպրոցական տարիքի երեխանե-

\* Այս մասին տես նաև Գ. Բ. Հարությունյան, Հայաստանի Հանրապետության փնված ուժերում տարվող դաստիարակչական աշխատանքի համակարգը և բարելավման ուղիները: «ՀԲ», 1996, հմ. 3—4: Խմբ.:



րի համար՝ քղեջ-ստուգիա: Տո՛ն օրերին այստեղ անցկացվում են տարբեր հանդիպումներ, հավաքույթներ, միջոցառումներ, այդ թվում նաև փինվորների միջև ՈՒՀԱ-ներ, որտեղ արժարժվում են փնծառայողներին հուպող հրատապ թեմաներ, առօրյա հարցեր: Այս ամենը աճող սերնդին հնարավորություն է ընձեռում ձեռք բերելու մասնագիտացված կրթություն, ընդլայնելու իր արժեքային կողմնորոշումները: Կարևոր ենք համարում նշել այն հանգամանքը, որ, չնայած ֆինանսական սուղ պայմաններին, սպայի տունը հնարավորություն է գտել սպաների երեխաների ուսուցումը կատարելու անվճար:

Սպայի տունը կապեր ունի տարբեր հասարակական կազմակերպությունների հետ, ինչպիսիք են՝ «Երկրապահ կամավորական միությունը», «Զինվորի մայր» կազմակերպությունը, հայ-ռուսական բարեկամության ընկերությունը և այլն:

Սպայի տանը գործում են փնվորական իրավաբանական ծառայություն, տարբեր փնվորական հանձնաժողովներ: ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի կարող է նրանց դիմել բանակին առնչվող և իրեն հուպող հարցերով:

Անշուշտ, այնպիսի բարդ գործում,

ինչպիսին է գաղափարական դաստիարակությունը, չեն կարող չլինել թերություններ: Գրանք առկա են և մեր աշխատանքում: Բայց սպայի տան գիտական խորհուրդը պարբերաբար վերլուծում է կատարված աշխատանքները, այլ նմանատիպ կառույցների փորձը և ըստ այդմ շտկումներ մտցնում աշխատանքային ծրագրերի մեջ: Այս առումով մեծ աջակցություն է մեզ ցույց տալիս նախարարության՝ անձնակազմի հետ տարվող աշխատանքի վարչությունը, որի մասնագետները օգնում են մեր աշխատանքը կառուցելու գիտական հիմքերի վրա, գաղափարադաստիարակչական աշխատանքում եղած միջազգային առաջավոր փորձը փոխադրելու մեր ազգային հողի վրա:

Ամենայն համոզմամբ կարելի է ասել, որ այսօր էլ սպայի տունը, որը գտնվում է հին Երևանի ամենագեղեցիկ շենքերից մեկում, շարունակում է պահպանել լավագույն ավանդույթները՝ մնալով մշակույթի օջախ և որոշակի դեր խաղալով երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության, ժողովրդի հետ բանակի միաբանության ամրապնդման գործում:

## ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

### ЕРЕВАНСКИЙ ДОМ ОФИЦЕРОВ В СИСТЕМЕ ВОСПИТАТЕЛЬНОЙ РАБОТЫ, ПРОВОДИМОЙ В ВС РА

*А. В. МУРАДЯН, майор, кандидат технических наук*

#### РЕЗЮМЕ

Война — это столкновение идей, мыслей, воли, характеров. В войне побеждает тот воин, который более военно-воспитан, сильнее, духовно богаче, обладает большим чувством собственного достоинства, не щадит своей жизни во имя родины. Не может быть сомнений в том, что военная подготовка всегда готового к решительным, активным действиям воина неотделима от его воспитания в национально-демократическом духе.

Республика Армения декларировала и последовательно проводит в жизнь миролюбивую политику, участвуя в различных системах коллективной безопасности. Однако сложная геополитическая обстановка в регионе настоятельно требует неуклонного повышения боеготовности наших Воору-

женных сил, поскольку армия является атрибутом государства, гарантом его независимости и суверенитета, чести и достоинства нации. Сегодня, когда наши вероятные противники имеют значительное превосходство в вооружении и военной технике, на первый план выступает морально-психологический аспект боевой подготовки. При этом особую важность приобретает проблема комплектования офицерского состава армии идейно подготовленными, имеющими глубокие профессиональные знания людьми.

Известно, что наша армия создавалась, в основном, путем слияния добровольческих отрядов, вставших на защиту государственных границ от посягательств агрессивного соседа. Но за прошедшие пять лет в армии произошли большие перемены, на смену тактике и психологии фиданства пришли принципы, присущие регулярной армии. Однако значительная часть офицеров была в прошлом командирами добровольческих отрядов, следовательно, им было необходимо измениться психологически, наряду с приобретением профессиональных знаний выработать в себе такие высокие морально-психологические качества, как сдержанность, самообладание, идейность, широкий кругозор и т. п. С учетом того, что среди призывников большую долю составляют юноши с неполным средним образованием, офицер должен быть и хорошим воспитателем. Кроме того, он должен много работать над собой, над своим духовным обогащением, чтобы служить примером для своих подчиненных. Ведь офицер должен быть носителем лучших духовных и созидательных традиций армии и вообще общества.

Из сказанного становится ясно, какое важное значение приобретает в настоящее время деятельность органов системы работы с личным составом, среди которых особое место занимает Дом офицеров, ведущий воспитательную работу не только среди военнослужащих, но и среди членов их семей, родственников. Дом офицеров является связующим звеном между армией и народом, служа делу укрепления их единства. Но для этого необходимо творчески, по-научному осмыслить основные тенденции, существующие в социально-общественной жизни республики. С этой целью Ереванский Дом офицеров, совместно с организацией «Офицерский корпус» при НАН РА и другими научными учреждениями, проводит научные опросы среди широких народных масс, анализирует их результаты и соответствующим образом корректирует план своей работы. Совместно со специалистами Управления МО по работе с личным составом разрабатываются научные подходы к организации воспитательной работы среди военнослужащих и молодежи допризывного возраста, изучается передовой международный опыт в этой области, который трансформируется с учетом национальных особенностей и традиций и лишь затем внедряется в жизнь.

